



297

867

# Յ Ե Ր Ո Յ

---

## Հ Ա Յ Ո Ց Մ Ա Մ ՈՒ Լ Ը

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ

Առաջին փորձ համառօտ տեղութեան սկզբից  
մինչև մեր օրերը

---

(«Օճօրք» ասու շրջանում արդուած յօդուածի հոյ-  
հանն բնագիրը)


---

Թ Ի Ց Լ Ի Ս

Մարտիրոսեանի տպարանում.

1878

Գրան  
Արտիկ Արարտեանի  
Գրանիկ — Բարսիս





# Յ Ա Ր Ո Յ

## ՀԱՅՈՑ ՄԱՄՈՒԼԸ

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ

Առաջին փորձ համառօտ տեսութեան սկզբից  
մինչև մեր օրերը

ԿԵՂ  
93

(«Օճօրծ» սուս շրագրումս պարտած յօրումով հայ-  
կանն բնագիրը)

Արտակ  
Քանիք  
Պրատ  
Այսպիսով  
Մարտիս

Թ Ի Յ Լ Ի Ս

Մարտիրոսեանի տպարանում.

1878







867

# ՀՅՈՑ ՄՄԱՌԻԼ

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ Մէջ

Առաջին փորձ Համառօտ անութեան սկզբից  
Ֆինչև մեր օրերը

Մի հաստ կամ բազմահատոր ու բարձր զին  
ունեցող զիրք կարելի է համեմատել այն մեծ  
նախն, որ կարողանում է դատարկել իր բերն  
միայն մեծ նաւահանգստի մէջ: Փոքրիկ զրո-  
քոյկները նման են այն թեթեւ մակոյկներին,  
որոնք կարողանում են թափանցել ամենանեղ  
ծոցերը եւ մատակարարել մի երկրի բոլոր  
մասերը:

(Wately ից քաղած, տես M. Garnier, Econ. pol.)

Ռուսահպատակ հայերի մամուլը, եթէ չեմ  
սխալվում, սկսուեցաւ քառասուն թուականե-  
ներին հէնց այն թիֆլիս քաղաքում, ուր այժմ



էլ հաւաքուած է մեր հայոց այդպէս անուանած «ինտէլիգէնցիայի» մեծ ու մի և նոյն ժամանակ գործող մասը:

Այդ մամուլէ այժմեան ներկայացուցիչներին անշուշտ դուք լաւ ճանաչում էք: Անկասկած դուք գիտէք, որ Թիֆլիսում փիլիսոփայութեան գերմանական դօքտօր պ. Գրիգոր Արծրունին հրատարակում է Մշակ շաբաթը հինգ անգամ լոյս տեսնող քաղաքական ու գրականական լըրագիրը, հայ ուսուցիչների անդրանիկ (doyen) պ. Պետրոս Սիմօնեանցը Մէլուսիոն անուանած խմբի հետ միասին Մէլու Հոյտսպոնէ բանասիրական, ազգային ու քաղաքական շաբաթաթերթը և մեր քաղաքի առևտրական բանկի նախկին տիրէկտօր փիլիսոփայութեան դօքտօր (նոյնպէս գերմանական) պ. Արգար Յովհաննիսեանը ազգային և գրականական Փոքր եռամսեայ հանդէսը: \*) էջմիածնում հայոց սուրբ

\*) Այս յօդուածը բուրոյսին պատրաստ, աւարտած արպվում էր, երբ սկսեց հրատարակվել Թիֆլիսում մասնագիտական մի նոր ամսագիր «Մանկավարժական թերթ» վերնագրով պ. Յակոբ Տէր—Յովհաննիսեանի խմբագրութեամբ: Սորա մասին տեսէք յօդուածիս վերջում:



աթոռի միաբանութիւնը ունէ, ինչպէս յայտնի է, իր կիսապաշտօնական Արարող կրօնական և բազմակողմանի (sic!) ամսագիրը: Վերջապէս Բագուի մէջ շարունակում է լոյս տեսնել Մոսկովայի Ֆիլոլոգիական Ֆակուլտէտի կանգիդատ—այժմ արեղայ—Տայր Խորէն Ստեփանէի Հայ-հոկոս աշխարհ մանկավարժական ու կրօնական ամսագիրը:

Շատ լաւ:

Եւ այց առաջ քան թէ ես կը սկսեմ խօսել սրանց մասին և ասել, թէ իւրաքանչիւրը սրանցից ինչ է ներկայացնում, իր գործունէութեամբ որքան համապատասխան է այն սուրբ գործին, որի համար ինքը նշանակուած է և որքան արդարացնում է իր ճակատի վրայ դրօշմուած վերնագիրներն ու ձեռիկէտները՝ աւելորդ չեմ համարում մի վոքը խօսել այն հասարակ ոուսահպատակ հայերի լրագրութեան սկզբնաւորութեան մասին—մանաւանդ որ այդ ստիպում է ինձ և յօդուածիս վերնագիրը—և ցոյց տալ, թէ ինչ հանգամանքներ զրդեցին մեր հայ հասարակութեանը այնքան զարգանալ, որ պաշտօնական զգայ լրագիրներ ու ամսագիրներ ունենանալ:



Ի հարկէ զուք արդէն զիտէք, որ առհասարակ հայերը ունեն հին՝ կալիփական լեզու ու հին գրականութիւն և նոր՝ ժողովրդական գրականական լեզու ու նոր գրականութիւն: Այս երկու ճիւղերը իրանց պատմութիւնը ու նենալով՝ հասկացող ու խելացի մակդանց շնորքով, այսօր իրանց արժանի ու զիտութեամբ որոշուած տեղերն էլ ունեն հայկական կեանքի մէջ:

Հայոց մտաւոր կեանքի առաջին շրջանի գեղեցիկ ժամանակները կամ, ինչպէս սովորաբար ասում են, գրականութեան ոսկէ ու արծաթեայ օրերը, յայտնի է պատմութենից, որ քրիստոնէութեան հինգերորդ ու տասներկուերորդ դարերն են: Այդ նշանաւոր թուականների, նոյնպէս և ուրիշ դարերի, հայոց մտաւոր զարգացման ներկայացուցիչները գլխաւորապէս իրանց պատմական ու աստուածաբանական գրութիւններով անձանօթ չեն և՛ արեւելագէտ եւրոպացի գիտնականներին, որոնցից մի քանիսը ուսումնական զանազան կեդրոններում, կարելի է ասել, մասնաւորապէս դրանցով զբաղուեցան: Բոլորովին աւելորդ եմ համարում յիշել այստեղ այդ արեւելագէտ եւրոպացիների



անունները, որոնք գրեթէ հանրաճանօթ են Իսկ երկրորդ շրջանը կամ հայկական նոր գրականական լեզուն ու մանուկ գրականութիւնը, որ մօտաւորապէս անցեալ տասնութերորդ դարուայ վերջերից ու մանաւանդ ներկայ տարնուիններորդի սկզբից է սկսվում և այսօր էլ շարունակվում է, ոչ թէ ոսկէ դար չէ ունեցել, այլ դեռ ևս արծաթեայ թուականից էլ հեռու է: Եւ գուցէ էլի շատ ժամանակ հեռու մնայ, եթէ մեր հայ մանուկ գրականութեան մէջ գործող մարդիկը միշտ այնպիսի հիանալի, թոյլ էակներ կը հանդիսանան, ինչպիսի են մեծ մասամբ ներկայումս:

Իմ յօդուածի նպատակից բոլորովին դուրս կը համարէի, եթէ այստեղ բացատրէի, թէ ինչու և ինչպէս առհասարակ հայկական գրականութիւնը՝ նայելով հայոց ազգի պատմական — հասարակական կեանքի պայմաններին ժամանակի ընթացքի հետ փոփոխութեան ենթարկուելով, հնի ու նորի է բաժանուել: Բայց ով որ ընդհանրապէս ծանօթ է մի որ և է ազգի գրականութեան զարգացման երևոյթների կամ, եթէ կուզէք, օրէնքների հետ՝ անպատճառ նա հեշտութեամբ կարող է յարմարեց-



նել այդ տեսութիւնը և՛ հայոց գրականութեանը: Միայն սորա վրայ պէտք է աւելացնել այն երևոյթը, որ ամենահին ժամանակներէն (ի հարկէ քրիստոնէութեան ժամանակների վրայ է խօսքս) մինչև ներկայ՝ տասնութներորդ դարուայ համարեա՛ կէսը հայ գրականութեան տէրը ու մի և նոյն ժամանակ ներկայացուցիչը գլխաւորապէս մեր հոգեւորականութիւնն է եղել իր սեպհական, ինքնուրոյն եկեղեցով:— Եւ եթէ մէկը ուսումնասիրէ հայոց գրականական ու քաղաքական պատմութիւնը՝ անպատճառ կը համոզուի, որ Հայաստանի մտաւոր շարժումը քրիստոնէութեան ժամանակ այնքան սերտ կապ չունի ժողովրդի կեանքի հետ, ինչպէս որ պէտք է լինէր բնականաբար, ինչպէս որ այդ պատահեցաւ ուրիշ հին ազգերի մէջ՝ օրինակ փառաւոր, կլասիկական Յունաստանում, ուր ժողովրդական կեանքը . գրականութիւն էր և գրականութիւնը ժողովրդական կեանք: Այդ անբնական երևոյթի պատճառը պէտք է փնտռել կրօնական յեղափոխութեան մէջ՝ այսինքն քրիստոնէական վարդապետութեան տարածման մէջ, որ ամենեւին հայ հեթանոս ժողովրդի զարգացման բնական հեռեանք չէր, այլ մի ու-



լիշ տեղից բերուած և համարեալ թէ ուժով,  
զօրով մտցրած հասարական փոփոխութիւն՝ հա-  
կառակ ժողովրդի կրօնական պահանջման: Այս է  
պատճառը, որ հէնց այսօր էլ հայերի մէջ երևում  
են հեթանոսական հասկացողութիւնների հետ-  
քերը: — Հոգևորականութիւնը քրիստոնէութեան  
ժամանակ գործելով գլխաւորապէս ազգի կրօնա-  
կան ու գրականական կեանքում, չէր կարող ի  
հարկէ, եթէ ոչ բոլորովին, զոնէ մեծ մասամբ,  
չէզոք չը գտնվել նախկին հեթանոս հասարա-  
կութեան միւս գործերում, որոնք, ինչպէս երե-  
ւում է, կամայ ակամայ հակառակ պիտի լի-  
նէին իրանց գործունէութեան: Այստեղից է  
ծագում այն երևոյթը, որ հայ կրօնական ու  
գրականական պատմութիւնը, մի խօսքով մտա-  
ւոր շարժումը, սերտ կապ չունի հայ ժողովրդի  
կեանքի հետ...:

Բայց դարձեալ մի անգամ՝ ես նպատակ  
չունեմ հայկական գրականութեան պատմու-  
թեան վրայ խօսել այստեղ: Մի քանի խօսք  
ասել յարմար տեղում, մանաւանդ եթէ թոյլ  
է տալիս և յօգուածի ոգին, թէև իսկապէս  
աւելոր չէր լինի, բայց այնուամենայնիւ կարող  
էր և հեռու տանել...



Վերևում ես ասեցի, որ հայոց նոր գրականական լեզուն, վերջապէս նոր գրականութիւնը, որ հիմայ արտայայտուում է թէ պարբերական հրատարակութիւններով և թէ զանազան բովանդակութեան գրքոյկներով ու գրքերով սկսուեց անցեալ դարուայ վերջերում: Այո՛, հէնց այդպէս է — Առաջին անգամ, կարելի է ասել, որ կաթօլիկ ու բողոքական միսիօնարներն էին, որոնք՝ շրջելով արևելքում քարոզութեան համար, պահանջ ծնեցրին ամեն տեղ, իւրաքանչիւր ժողովրդի հետ հասկանալի, մատչելի լեզուով խօսել, քարոզել գրաւելու նպատակով դէպի իրանց դաւանութիւնը: Այդ վարդապետները չէին մոռանում և քրիստոնեայ ազգերին, որոնք, թէև վաղուց արդէն դաւանում էին Պալէստինում քարոզուած ու գրեթէ աշխարհիս չորս կողմը տարածուած վարդապետութիւնը, բայց երևի միսիօնարների և իրանց պաշտպանող — դիւաւորների կարծիքով հեռառացել էին ուղափառ դաւանութենից՝ ուրեմն և արքայութեան ուղիղ ծանապարհից: Ինչ և իցէ, ինչպէս ուրիշ ազգերի մօտ, նոյնպէս և հայերի մէջ, ման էին գալիս այդ առաքեալները և իրանց գործունէութեամբ հայկական ժողո-



վրդի գործածուած լեզուի քաղաքացիութեան սկիզբը մտցնում էին գրութեան մէջ: Ամենքին յայտնի է, որ նրանց գործունէութիւնն էր տարածել Սուրբ գիրքը, բացատրել քրիստոնէական վարդապետութիւնը, մեկնել, հասկացնել կարծեցեալ ուղափառ դաւանութեան առաւելութիւնն ու փրկարար շնորքը և սոցա նման կրօնական ուրիշ բաներ: Այսպիսով զանազան գրականական աշխատութիւնները՝ ինչպէս հին, նոյնպէս և նոր, թէ աշխարհական և թէ մանաւանդ հոգևորական մարդկանց ձեռքով շարադրած, նպաստում էին նոր բուսնող հայոց գրականութեան զարգացմանը, որպէս զի կարողանայ իր գոյութեան իրաւունքը (raison d'être) ձեռք բերել կեանքի մէջ:

Ի հարկէ այս բնական, առաջադէմ երևոյթը պէտք է հանդիպէր ընդդիմադրութեան, մի խօսքով՝ առաջադիմութեանը պիտի հետևէր յետադիմութիւն: Եւ այդ այդպէս էլ եղաւ: Մենք տեսնում ենք, որ այդ առիթով երկու հակառակ կուսակցութիւններ երևան են գալիս մինչև անգամ լրագրութեան մէջ: Ազգա են պրարարեաններ և աշխարհաբարեաններ: Առա-



ջինները՝ այսինքն՝ գրաբալևանները, սուրբ ու  
անսխալ համարելով հին՝ կլասիկական, մեռած  
լեզուն գոթիկո-լեւոն, սրբապղծութիւն էին հա-  
մարում պարապել ժողովրդական կենդանի լեզու-  
ով, մտցնել գրութեան մէջ և գործածել: Իսկ  
միւսները — աշխարհաբարեանները — նրանց հա-  
կառակ ատում, արհամարհում էին հին լեզուն  
և աշխատում էին առանց դորան գործ կատա-  
րել: Ընթերցողը կը նկատէ, որ գրականական  
այդ երկու կուսակցութիւնները, որպէս բոլորո-  
վին անձանօթ լեզուի հիմնաւոր զարգացման  
օրէնքների հետ, չափազանցութիւններ անելով  
սաստիկ սխալվում էին:

Քաղաքական անկախութեան կորուստն  
էր, որ վաղուց արդէն ստիպելով հայերից շա-  
տերին թողնել մայրենի հողը և այս ու այն երկիր  
դադլթել, թափառել ապաստան դտնելու համար,  
արգելում էր նոյնպէս, որ նոր գրականութիւնը  
յարմար կիրառով զարգանայ նոյն իսկ հայ մարդ-  
կանց հայրենիքում: Եւ ի՞նչ ենք տեսնում: —  
Ձը նայելով Հայաստանի մէջ մնացած միլիօնաւոր  
հայերին, որոնք հիմայ էլ ապրում են, գրակա-  
նութիւնը, մտաւոր կեանքը երկան են գալիս,



զարգանում են գլխաւորապէս գաղթական հայերի մէջ, որոնք եթէ ոչ իրօք, գոնէ աւերես ազատ էին զգում իրանց: Եւ ամենքին յայտնի է, որ մտաւոր կեանքը ոչ մի տեսակ ճնշում ոչ թէ չէ սիրում, այլ ատում, արհամարհում է: Ծրինակի համար յիշենք այստեղ Մխիթարեաններին— հայոց թէ հին և թէ նոր գրականութեանն ու լեզուին զարկ տւող այս կաթողիկ վարդապետներին: Արևելեան բռնակալութեան պատճառն էր, որ ստիպեց սրանց գնալ և հիմնել իրանց գործունէութեան կեդրոնը իտալական գրաւող երկրի քաղաքներից մէկի մէջ՝ Վենետիում: Ուրիշ գաղթական հայերի վիճակն էլ համարեա՛ թէ այսպիսի էր: Ամեն տեղ, ուր արդէն հայ գաղթականութիւն կար, եթէ միայն չէր հանգել նորա մէջ հայրենիքի սէրը, ազգասիրական զգացմունքը, ազգայնութեան գաղափարը և եթէ չէր կուլ զնացել իրան տիրապետող ազգի տարրի մէջ, սկսում էր կամ հետաքրքրվել իր հայրենական նոր գրականութեամբ, կամ մասնակցել և կամ վերջապէս զործել այդ բանում՝ կամենալով մի և նոյն ժամանակ իր բնակութեան տեղը հայ նոր գրականութեան գրեթէ կեդրոն դարձնել:



Թէպէտ հայերը պատմական թշուառ հանգամանքներից ստիպուած անկարող էին իրանց սեպհական երկրում, իրանց բուն եղբայրների մէջ գործել, աշխատել, բայց այնուամենայնիւ չը պէտք է մոռանային և հիմայ էլ չը պէտք է մոռանան իւրաքանչիւր ժողովրդի գոյութեան այն տարրական սկզբունքը, թէ մարդիկ ամեն բանից առաջ իրանց ոտների տակ հող պիտի ունենան, պիտի ապրեն ու աշխատեն իրանց ցեղակից հասարակութեան մէջ, եթէ միայն ցանկանում են նուիրել իրանց անձները, ծառայեցնել իրանց ընդունակութիւնները իրանց ազգի շահերին՝ այսինքն հարստահարուած ու խեղճ ժողովրդի բարօրութեանը: Պէտք է աշխատել, որ հանգամանքը օրէնք չը դառնայ: Զը պէտք է յաժշտակիլ կարճ ժամանակուայ յաջողութեամբ: Եթէ միտիթարեանները կամ ուրիշ դրանց նման հայ գաղթականները ապացուցեցին, որ հայրենիքից հեռու պատահմունքով կարողացան և այժմ էլ կարողանում են ապրել, զարգացնել իրանց գրականութիւնը— թէև այդ չէ նշանակում, որ զոքա իրանց մտաւոր կեանքի հետ միասին չեն կարող անյայտանալ մի սահմանեալ ժամանակում ստիպուած



նոյն իսկ պատահական հանգամանքներէց—ուրեմն որքան աւելի կարտայայտուէր այդ հայ մարդկանց կեանքը իր գեղեցիկ ու առաջադէմ կողմերով, եթէ դա աճէր, զարգանար նոյն իսկ հայրենիքի մէջ, նոյն իսկ Հայաստանում՝ ուղղակի, անմիջական հաղորդակցութիւն, կապ ունենալով ժողովրդի հետ: Ես փիլիսոփայութիւն չեմ անում, և այնքան չեմ էլ սիրում, այլ միայն ցամաք ճշմարտութիւն եմ ատում, ուրիշ ոչինչ...

Ինչ և իցէ, հայոց նոր կամ այժմեան գրականութիւնը, երևալով մի քանի տեղերում և թափառելով վերջապէս կանգնեց երկու որոշ տեղ՝ գոյացնելով երկու կեդրոն: Ասում եմ երկու կեդրոն, որովհետև հայոց ներկայ գրականութիւնը ու նոր լեզուն երկու գլխաւոր ճիւղերի են բաժանվում—արեւմտեան և արեւելեան: Ուրիշ խօսքերով՝ տաճկահայատակ հայերը և սոցա հետ միասին ամբողջ արեւմուտքում գտնւողները ունեն իրանց բարբառն ու գրականութիւնը. իսկ ռուսահայատակ հայերը և սոցա հետ միասին բոլոր արեւելքում գտնւողները իրանց բարբառն ու գրականութիւնը:



Թիւրքիայի մայրաքաղաքը Զմիւռնիայի հետ  
միասին առաջինների կեդրոնն է, իսկ, ինչպէս  
ձեզ յայտնի է, գլխաւորապէս Թիֆլիսը ռուսա-  
հպատակ հայոց սինտէլիդէնցիայի մեծ մասի բնա-  
կութեան տեղն է:

Արևելեան և արևմտեան հայ բարբառները  
իրարուց մեծ, զգալի տարբերութիւն չունեն և  
փոխադարձաբար հասկանալի են: Բացի այն  
բանից, որ մայր լեզուն՝ կլասիկական գրաբարը,  
մէկ է ու անփոփոխելի, որպէս կատարելագոր-  
ծուած ու արդէն մեռած լեզու և որպէս  
անսպասելի աղբիւր հարիւար ժամանակ միշտ  
կարող է օգնել նորի զարգացմանը, մի և նոյն  
ժամանակ հայ ժողովրդի մէջ պտտող լեզուի  
տարրերը, որոնք ծառայում են որպէս հիմք մի  
ազգի կենդանի գրականական լեզուին, հեռու  
չեն միմեանցից: Թէև եղել են փորձեր միաց-  
նելու այդ երկու բարբառները և մէկ ընդհա-  
նուր գրականական լեզու ստեղծելու, բայց այդ  
արհեստական ձեռնարկութիւնը չէ յաջողվել  
մեր հայ Ֆիլոլոգներին և չի յաջողուի, քանի  
որ քաղաքական կեանքի պայմանները արգելք  
կը գնեն և քանի որ այդ բարբառների ներկա-  
յացուցիչները չը գտնվեն զանազան լուսաւո-



դուժեան ազդեցութեան տակ: Բայց թէ ժամանակով դրանցից որը կը գերազանցէ՝ այդ ապագայի դործն է: Այժմ այսքանը միայն կարելի է, ասել, որ դրանցից առաջինը կամ արեւմտեանը աւելի հարուստ է ատերմիններով: Համեմատելով երկրորդի կամ արեւելեանի հետ, իսկ այս վերջինն էլ աւելի կենդանի ու աւելի կանոնաւոր:

Հայոց նոր գրականութեան, լրագրութեան, մտաւոր շարժման, քաղաքական զարգացման շնորհիւ տիրւած անկասկած ճաշկաստանի հայերին է պատկանում: Նրանք էին, որ առաջին անգամ հիմնեցին լրագիրներ ու ամսագիրներ, հրատարակեցին գրքեր ու գրքոյկներ, սկսեցին խօսել հայերի քաղաքական դրութեան վրայ՝ մի խօսքով առաջին զարկը տուին հայոց մտաւոր շարժմանը, որի հակահարուածը (contre coup) զգացուեցաւ և՛ ռուսահպատակ հայերի մէջ:

Մի կողմը թողնելով մեր այստեղի հայերի մտաւոր կեանքի զարգացման ուրիշ գործիչները՝ ինչպէս գրքերի տպագրութիւնը, թատրոնը, դպրոցական գործը, ազգային եկեղեցին, որոնք նոյնպէս ծառայում են հայերին ազգային զար-






գացման գործի մէջ, կարծեմ վերջապէս ժամանակ է, որ սկսեմ լրագրութեան մասին խօսել:

I

Եթէ չեմ սխալվում, 1847-ին էր, որ առաջին անգամ ռուսահայտակ հայերի մէջ լոյս տեսաւ Թիֆլիսում առաջին հայ քաղաքական ու բանասիրական շաբաթաթերթը Կովչուս անունով: Այս մի նմանութիւն էր այն ժամանակուայ (որ այսօր էլ հրատարակվում է) կիսապաշտօնական Կովչուս ռուս չոր ու ցամաք լրագրի: Պէտք է ասել, որ մեր հայոց առաջին խմբագիրներին պ. պ. Յ. Կարենեանցին և Մ. Պատկանեանին լաւ յաջողվել էր այդ նմանութիւնը: Հայկական Կովչուսը վար չէր ընկնում ռուսական Կովչուսից: Երկուսն էլ միասին մեծ մասամբ պաշտօնական լուրեր, տեղեկութիւններ տպելով ուզում էին ընթերցողներ գրաւել և համակրութիւն ստանալ հասարակութենից: Ես ոչինչ գործ չունեմ այն ժամանակուայ ռուս Կովչուսի հետ, բայց միայն կասեմ, որ եթէ նա գլխաւորապէս պաշտօնական թղթեր էր տպում իր էջերում, այդ շատ բնու





կան էր, որովհետեւ դորա համար ստանում էր վարձ կառավարութենից և կարելի է ասել որ յատկապէս այդ բանի համար էլ նշանակված էր: Միայն չեմ հասկանում, թէ ինչու հայկական Կոլեջի մի և նոյնը պէտք է անէր: Իմ կողմից անիրաւութիւն կը լինէր, եթէ չը յիշէի մեր Կոլեջի միւս առաւելութիւնները:— Իւրաքանչիւր տարուայ սկզբին, առաջին համարում, հէնց առաջին էջի գլխին, ուր խմբագիրները սովորաբար իրանց սեպհական յայտարարութիւններն ու ծանուցումներն են տպում, մեր Կոլեջի մի ինչ որ պատկեր էր տեղաւորում, որի նշանակութիւնը ես չեմ կարողանուս հասկանալ:— Այս պատկերը ներկայացնում է տկլոր, թեւաւոր ծերունի մի մարդ սպիտակ մորուքով՝ նստած ամպերի վրայ: Գորա դիմացը կանգնած է մի երեխայ նոյնպէս տկլոր ու թեւաւոր: Հորիզոնի վրայ երեւում է համաստեղութիւնը: Պատկերի տակ սկսվում է մի երկար ոտանաւոր հայոց հին լեզուով գրած, որ կարծեմ բացատրում է դորա նշանակութիւնը: Ինչ և իցէ, ես ոչինչ չեմ հասկանում և բոլորովին չէի նեղանայ, եթէ մէկը ասէր ինձ՝ ներեցէք պարոն, ձեր խելքի բան չէ այդ:



Չը պէտք է մոռանալ նոյնպէս Կովչասի միւս էջերը, որոնք լքվում էին մեծ մասամբ անհամոտանաւորներով, Կռիլովի առակների շինծութարգմանութիւններով, անեկդոտներով և ուրիշ այսպիսի լրագրին անյարմար բաներով: Բայց գուցէ Կովչասի միակ ծառայութիւնն ու արժանաւորութիւնն այն էր, որ վերջապէս հայ հասարակութիւնը փոքր ինչ բան կը կարգար իր մայրենի լեզուով: Այո՛, այդ այդպէս է, միայն այդ բանումն էլ Կովչասը մեծ պակասութիւն ունէր՝ նա հրատարակվում էր գլխաւորապէս հին, գրաբար լեզուով, որ հասկոնալի չէ հասարակութեանը և մանաւանդ ժողովրդին: Սրանով հեշտ է եզրակացնել, թէ ինչ օգուտ կարելի էր քաղել այդ լրագրից և թէ նա իր գործունէութեամբ որքան կարող էր գրաւել հայ հասարակութեան համակրութիւնը: Ասածիւ ապացոյց կարող է լինել այն հանգամանքը, որ յիշեալ լրագիրը երկու տարի միայն հրատարակվելով դադարեց: Աւելորդ կը լինէր խօսել և այն բանի մասին, որ մեր Կովչասը առհասարակ զուրկ էր թղթակցութիւններից ու օրինաւոր, մշակուած յօդուածներից, որոնք



սովորաբար անհրաժեշտ գեղեցկութիւնն են կազմում մի որ և է չափաւոր լրագրի:

Ինչ կուզէ լինի, ես կարծում եմ, որ չը պէտք է խիստ լինել դէպի Կովկասը, որովհետև նորա խմբագիրները փորձուած չէին լրագրական գործում: Ինչպէս վերև ասեցի, լրագիրը երկու տարուց յետոյ՝ այսինքն 1848-ի վերջը դադարեց: Յ. Կարենեանցը, էրզրումից գաղթած այս հայ պարօնը, իր թերթի դադարելուց յետոյ, դարձեալ մասնակցում էր հայ հասարակութեան գործերում և շատ անգամ հասարակական պաշտօններ էր ստանում և կատարում, ինչպէս որ կարող էր: Հոգևոր Կոնսիստորիայում ատենադպիր լինելուց յետոյ, Ներսիսեան դպրոցում տեսչի պաշտօն մի քանի ժամանակ վարելուց յետոյ՝ վերջապէս հեռացաւ այդպէս անուանած ազգային գործերից և դարձաւ կապալառու հանքային տաք բաղանիքների, որոնք վերջ դրին նորա կեանքին: Արդէն յայտնի է, որ անյայտ աւազակներ մի մութ գիշերով վրայ—յարձակուելով սպանեցին խեղճին հէնց այն բաղանիքների մօտ: Գրականական և հասարակական գործունէութենից յետոյ, ինչպէս տեսնում է ընթերցողը, տաք բաղանիքը չը վրայ—



եկաւ ուսահաստակ հայերի առաջին խմբագրապետին:

Երկուսի միւս խմբագիր—աշխատակից՝ այժմ մօլդէժսկի—սովէտնիկ աստիճանաւոր պ. Մ. Պատկանեանն էլ, իր ընկերօջ պէս այն ժամանակուայ հայ հասարակութեան գործունեայ անդամներից մէկը լինելով՝ հիմայ քաշուել է դէպի ընտանեկան կեանքը, երևի հանգստանալու համար: Բայց այդ հանգստութեան ժամանակ էլ նրանում մի գեղեցիկ յատկութիւն է ծնուել: Նա իր տանը նստած, սպասում է, որ մի բան դուրս գայ, տպուի հայերի գէմ ուսաց լեզուով Դուբրովնի և Վէնիկովի գրուածների նման անձիշտ, անհիմք ու անտեղի, և իսկոյն գրիչը վեր կառնի ու հելքելով այդ բոլորը առաջ կը բերէ ոչ թէ միայն դատողութիւններ, այլ և պատմական փաստեր, անցքեր, յիշատակագիրներ, բարձրագոյն հրովարտակներ ապացուցանելու իր հայրենակիցների լաւ, գեղեցիկ յատկութիւնները: Այսպիսով մեր պատուելի ծերունին քիչ բաւականութիւն չէ պատճառում իր ազգակից հայերին:

Հայոց լրագրութեան բորբոքումը, եթէ միայն կարելի է այսպէս խօսել, դեռ ևս հե-



ուու էր: Անցել էր միայն մի տարի Կովչասի  
դադարելուց յետոյ, որ դուրս եկաւ մի քա-  
հանայ մարդ՝ Հայր Գաբրիէլ Պատկանեանը, եթէ  
չեմ սխալվում, հայոց բանաստեղծ—պօէտ Գա-  
մառ—Քաթիպայի հայրը, և, Կովչասի ուղղու-  
թեան բոլորովին հակառակ՝ այսինքն աշխար-  
հաբար լեզուով, սկսեց հրատարակել Քիֆլի-  
սում Արարատ քաղաքական, առևտրական ու  
բանասիրական շաբաթաթերթը 1850 ին: Եւ  
չը նայելով այս վերնագրներին՝ մեր հայրը լըց-  
նում էր իր լրագիրը, այո՛ թէև պարզ աշ-  
խարհաբար լեզուով գրած, բայց Աստուած  
գիտէ, թէ ինչ հին պատմութիւններով, բա-  
րոյական մեկնութիւններով, կրօնական—ծիսա-  
կան բացատրութիւններով և սրանց նման լրա-  
գրի ընաւորութեանը ամենեւին անյարմար յօդ-  
ուածներով: Թէպէտ պէտք է խոստովանել, որ  
հէնց այսօր էլ համանման գրուածները լա-  
տեղ են բռնում էջմիածնի Արարատում: Հայր  
Պատկանեանի Արարատը այն բանով էր միայն  
զանազանվում Կովչասից, որ գրվում էր, ինչպէս  
ասեցի, աշխարհաբար լեզուով և աւելի կրօ-  
նական ուղղութիւն ունէր: Իսկ մնացած բոլոր



բաներում շատ նման էր հանգուցեալ Կովկասին՝  
իր անդրանիկ քրոջը:

Քառասուն թուականների վերջերում և  
յիսուներորդի սկզբներում, ինչպէս յայտնի է,  
շատ հետաքրքիր անցքեր էին պատահում Ա-  
րևմուտքի մէջ, մանաւանդ Ֆրանսիայում, ուր փե-  
տրվարի յեղափոխութիւնը հիմք էր դրել հասա-  
րակապետութեանը, որ յետոյ՝ 1851-ին, Նա-  
պօլէօն IIIի յանցաւոր ձեռքը պետական հարուա-  
ծով ոչնչացրեց: Մեր Կովկաս ու Արարոս լրագրնե-  
րում, որոնք հրատարակվում էին այդ ժամանակ,  
ոչինչ յօդուած չենք գտնում այդ նշանաւոր  
անցքերի մասին: Արարոսում ոչ թէ միայն  
յօդուածներ, լուրեր չը կային այդ բանի մասին,  
այլ մինչև անգամ հոտն էլ չը կար: Այն ինչ  
Կովկասը երբեմն երբեմն, շատ հարեանցի կեր-  
պով հաղորդում էր մի քանի աննշան տեղե-  
կութիւններ: Ել չեմ խօսում քաղաքական, տըն-  
տեսական օրինաւոր յօդուածների բացակայու-  
թեան մասին, յօդուածներ, որոնցով հէնց այսօր  
էլ երեսուն տարուց յետոյ, հայ լրագրութիւնը  
չէ կարող պարծենալ:

Նրկու լրագիր՝ մէկը գլխաւորապէս հա-  
յոց հին՝ շատերին անհասկանալի լեզուով



աշխարհական մարդկանց խմբագրութեամբ, իսկ միւսը մեծ մասամբ աշխարհաբարձ շատերին հասկանալի լեզուով հողեորական մարդու խմբագրութեամբ, (ինչ պօնտրաստո տէր Աստուած) ինչպէս տեսանք, միմեանցից շատ քիչ գանազանութիւն ունեցան և մէկը միւսից չը գերազանցեց: Ոչ լրագիրներն էին հասկանում հասարակութեանը և ոչ հասարակութիւնը լրագիրներին: Ոչ մի տեսակ համերաշխութիւն, ոչ մի տեսակ կապ, փոխադարձ օգնութիւն չը կար հասարակութեան ու լրագիրների մէջ, ուրեմն և այն ժամանակուայ մամուլից օգտակար հետեանքներ էլ չէր կարելի սպասել: Իսկ այսպիսի հետեանքները այն ժամանակ միայն կարող էին արդիւնաւոր լինել, երբ լրագիրները՝ ուսումնասիրելով և մշակելով հասարակական էական հարցերը, կարողանային զարթեցնել մերոնց այն երկար ու խոր քնից, որ թմրեցրել էր նրանց: Այս կերպով միայն հայ լրագիրները կը կարողանային ձեռք բերել առհասարակ մի որ է մամուլի գոյութեան իրաւունքը և իրագործել նորա սրբազան պարտաւորութիւնը: Բայց համանման երեւոյթ չը կար: Արտօտը՝ մի

տարի միայն ապրելով և չը կարողանալով  
հաստատ հիմք ու համակրութիւն ունենալ  
հասարակութեան մէջ՝ դադարեցրեց իր գոյու-  
թիւնը: Ինքը խմբագիրը այն համարմունքն  
ունէր իր Արարողի վրայ, որ իր թերթը ոչ  
լրագիր է և ոչ ամսագիր, այլ աւելի մի հա-  
ւաքածու յօդուածների ժողովրդի մէջ ընթեր-  
ցանութիւն տարածելու համար: Արժանապա-  
տիւ հայրը մոռանում էր առհասարակ լրագրի  
նշանակութիւնն ու նպատակը և ի զուր էր  
կարծում, որ իր Արարողը համակրութիւն ստա-  
նալով հասարակութենից մի և նոյն ժամանակ  
կը կարգացուի: Հրատարակել մի ժողովածու  
շաբաթը մի անգամ՝ ժողովրդի մէջ ընթեր-  
ցանութիւն տարածելու նպատակով, հազիւ թէ  
կը յաջողուէր այն ժամանակուայ հայ հասա-  
րակութեան մէջ:

Ինչ կուգէ լինի, Արարողը մեղանում առաջին  
փորձը՝ հեռակարար և առաջին քայլն էր կենդանի  
պարզ լեզուի գործածութիւն մտցնելու պար-  
բերական հրատարակութեան մէջ: Այս է ի  
հարկէ հայր Պատկանեանի Արարողի միակ ու  
գլխաւոր արժանաւորութիւնը:



Արժանապատիւ հօր շարաթաթերթի դա-  
դարելուց յետոյ, եօթը տարի շարունակ, ուու-  
սահպատակ հայերի մտաւոր հորիզոնի վրայ  
ոչ մի պարբերական օրգան չէ երևում:

## II

Այդ, թէև ոչ այնքան կարճ, ժամանակամի-  
ջոցի դադարումը անշուշտ չէ նշանակում, որ  
մեր հայ հասարակութեան մտաւոր աղքատ  
կեանքը բոլորովին հանգել էր: Ոչ:—Մերոնք թէ  
մի տեսակ նորաձևութեամբ (մօդայով) կամ թէ  
բնական, գիտակցական պահանջմամբ արդէն  
տարիներով առաջ ուղարկել էին իրանց վա-  
ւակներին Ռուսաստանի ու Սերոպայի զանազան  
դպրոցները, ոչ թէ միայն միջնակարգ, այլ և  
բարձր ուսումը ստանալու համար: Այդ համա-  
լսարանական երիտասարդութիւնը, որ մեր հայ  
հասարակութեան մէջ մարմին է առնում գրե-  
լսաւորապէս այդ ժամանակներում, սկսեց մեծ  
եռանդով մասնակցել հայ հասարակութեան  
մանաւանդ մտաւոր կեանքում և գործ տեսնել  
հայկական զրականութեան մէջ:

Իսկ հողմից լոյս էին տեսնում զանազան բովանդակութիւն ունեցող պլքեր, որոնցից կարող ենք յիշել անցեալ դարում ապրող վրաց թագաւորական պալատների հայ երգիչ Սայաթ — Նովայի ժողովրդական — լիւրիկական երգերը հրատարակուած հանգուցեալ Գէորգ Հախվէրճեանի ձեռքով, արժանայիշատակ Խաչատուր Աբովեանի Վերջ Հայաստանի վառվռուն, ազգասիրական վէպը հայ ժողովրդական կեանքից, պրոֆէսոր պ. Սանփանոս Նազարեանցի քանի մի հրատարակութիւնները, վերջապէս Միքայէլ Նալբանդեանցի թարգմանութիւններն ու ինքնուրոյն գրուածները և այլն և այլն:

Արեւելեան պատերազմն էլ այդ տարիներում սկսուելով և դադարելով հետաքրքրում էր շատերին Թիւրքիայի մէջ պատահող գործերով: Ռուսաստանի և Տաճկաստանի մէջ էլ սկսվել էին վերանորոգվել բարեկամական յարաբերութիւնները, որով և մեր հայերն էլ օգուտ քաղելով կարողանում էին լսել, իմանալ, կարդալ, թէ ինչ կերպով է բարեկաւանում տաճկահայատակ իրանց եղբայրակիցների վեճակը: Ստացվում էին Թիւրքիայից, այո՛, թէև



ոչ այնքան յաճախ, այլ և այլ հրատարակու  
թիւններ, ամսագիրներ, լրագիրներ, որոնց մէջ  
նկարագրուած էին լինում այնտեղ պատահող  
զանազան անցքեր, վիճարանութիւններ թէ  
քաղաքական \*) և թէ մանաւանդ գրականա-  
կան: Այնտեղի գրաբարների ու աշխարհարար-  
ների կռիւը, որ դժբաղդարար մի քանի սահ-  
մանափակ հայ ուղեղները դեռ հիմայ էլ են շա-  
րունակում, վերջ չունէին և ի հարկէ ազդում  
էին և՛ այստեղի հայերի վրայ: Թէ հեռուից  
լսվում էին և թէ հէնց այստեղ էլ պատա-  
հում էին բաւական հետաքրքիր անցքեր կա-  
թողիկ ու բողոքական հայերի մէջ: Մի քանիսը  
սրանցից նորից մտնում էին հայ—լուսաւորչա-  
կան եկեղեցու գիրկը, իսկ միւսները աւելի ու  
աւելի հեռանում և այլն: Այս բոլոր հասարա-

---

\*) Թէեւ այդ ժամանակ Տաճկաստանի հայերը դեռ եւս  
չունէին այդպէս անուանած ազգային—կրօնական սահմա-  
նադրութիւնը ազգային ժողովի հետ միասին, որ, ինչպէս  
յայտնի է, ստացան 1860-ին, բայց այնուամենայնիւ վա-  
ղուց արդէն պատրաստվում էին ձեռք բերելու քիչ պտուղ  
տուղ այդ արտօնութիւնը, որ նրանց մտաւոր ու քաղաքա-  
կան զարգացման հետեւանքն էր:

կական երևոյթները հետաքրքրում, գոգոում էին այստեղի հայերին, բայց դժբաղդաբար մերոնք չունէին ոչ մի պարբերական հրատարակութիւն, ոչ մի տպագրական օրգան, որ ժամանակ առ ժամանակ մի փոքր տեղեկութիւն տար հայ հասարակութեանը այդ հետաքրքիր անցքերի մասին: Այս կերպով հայկական լրագրութեան հողը քիչ առ քիչ պարաստվեցաւ: Եւ որպէս հետեանք հասարակական այդ բոլոր երևոյթների, և ոչ թէ վերև յիշած հանգուցեալ Կովչոսի ու Արարատի կարծեցեալ ազգու գործունէութեան, ուստասպատակ հայերի լրագրական ասպարէզի վրայ նորից երևում են լրագիրներ ու ամսագիրներ:

Երեք տարուայ միջոցում՝ այսինքն 1858—1861-ը հետզհետէ լոյս են տեսնում մօտ չորս, հինգ պարբերական հրատարակութիւններ թէ Կովկասում և թէ Ռուսաստանի մէջ: Թիֆլիսում ինքնակոչ աստուածաբան Տէր Ստեփան Մանդինեանցի խմբագրութեամբ երևում է Մեղու-Հայաստանի (1858-ին), որ 1863-ին այդ լրագրի այժմեան խմբագրի ձեռքին անցաւ և Կոստանի (1860-ին) ամսագիրը տաճկահայատակ Մարկոս Աղաբէգեանի խմբագրութեամբ:



Սոցա՝ հրատարակիչն էր կարծեմ Համբ. Էնֆիան-  
ջեանյր, այս անդրանիկը Քիֆլիսի այժմեան  
հայ հրատարակիչների: Մոսկվայում լոյս է  
տեսնում առանձին ուշադրութեան արժանի  
և մեր նոր գրականութեան մէջ գեղեցիկ տեղ  
ունեցող Հիստորիայ ամսագիրը (1858-ին) Լա-  
զարեան ճեմարանի պրոֆէսոր պ. Նազա-  
րեանցի խմբագրութեամբ և ձառու (1859-ին)  
կրօնական—բանասիրական ամսագիրը հայր  
Մսեր Մսերեանի: Վերջապէս Ֆրանսիայի շքեղ  
մայրաքաղաքից՝ Փարիզից թոչում, գալիս է  
Քէոդոսեայ հայր Գաբրիէլ Այվազովսկու Մառեայ  
Աղանին (1860-ին), ուր և շարունակում է իր  
հրատարակութիւնը դարձեալ մի քանի տարի:  
Ինչ քամբախտութիւն, Մասիսի կամ Արարատի  
աղանին ծնվում է Փարիզում և թոչում, գա-  
լիս է Քէոդոսեայ, երբէք չը տեսած հայրենի հողը:  
Բայց այդ ոչինչ, այն ժամանկաներում, և կա-  
րելի է այսօր էլ, համանման ցնորքներով ապ-  
րում էին հայերից շատերը...

Այս հրատարակութիւններից չորսը՝ Մեղու-  
հայտարանին, Հիստորիայը, Կառնէլը և Մառեայ  
Աղանին գրվում էին գլխաւորապէս աշխարհա-  
բար լեզուով, իսկ մէկը միայն՝ ձառու, գրաբար:



Ուրիշ խօսքերով առաջինները հանդիսանում էին որպէս օրգան աշխարհաբարեան կուսակցութեան համակից մարդկանց, իսկ այդ վերջինը իր ծերունի խմբագրի հետ միասին՝ դրաբարեան: Ճաւալի երևոյթ. վիճում են այն բանի մասին, թէ ինչ լեզուով պիտի խօսեն ներկայ հասարակութեան, կենդանի ժողովրդի հետ, որ հասկանայ իրանց: Պէտք է թերթել մի առ մի այդ բոլոր հրատարակութիւնները և կը տեսնենք, որ այդպէս անուանած լեզուագիտական խնդիրների վրայ ահազին, մանրամասը յօդուածներ, պօլէմիկներ, մինչև անգամ բառազննութիւններ մեծ տեղ են բռնում դրանց էջերում. յօդուածներ, վիճաբանութիւններ, բառազննութիւններ, որոնք լեզուագիտական ամեն տեսակ գիտնական մեթոդից զուրկ և անկարգ գրուած լինելով, կարող էին կարգացվել գուցէ սխօլաստիկների մի որ և է ժողովում: Ծշմարիտ է, թէև վիճաբանութիւնն ու կռիւը երկար չէին կարող տևել, որովհետև մէկի դէմ չորսը կային կանգնած, բայց այդ չորսն էլ, բացի մէկից՝ Հիստորիայից, թէ լեզուի մշակութեան մէջ, թէ իրանց յօդուածների բովանդակութեամբ և թէ իրանց ուղղութեամբ շատ պահպանողական



ձգտումներէին ցոյց տալիս և, կարելի է ասել, ներկայացնում էին մի տեսակ պարզի կուսակցութիւնս (parti de l'ordre), որի դէմ հայ հասարակութեան մէջ կռուողներ չէին երևում և ինքն էլ չը գիտէր, թէ ում դէմ կռուէր: Օրինակ, երբ հարցնում էին Սեդրէ խմբագիր տէր Ստեփան հօրը, թէ ինքը յարձակուելով Հիսուսի դէմ և պաշտպանելով սուրբ գրաբարը՝ ինչո՞ւ ուրեմն իր լրագիրը չէ հրատարակում իր պաշտպանած հին լեզուով: Նա պատասխանում էր, թէ անշխարհաբար լեզուով գրելու պատճառն այն է, որ նախ իրան հարկաւոր է ընթերցողներ ունենալ (ուրեմն նա համոզուած էր, որ գրաբար գրելով չի ունենայ) և երկրորդ, որ կարելի չի լաւ հասկացնել հասարակութեանը իր մտքերը: Հիանալի հեռևողութիւն: Համանման գեղեցիկ լոգիկական վարմունքներ ցոյց էին տալիս և միւս հրատարակութիւնները:

Ես կը ցանձրացնէի իմ ընթերցողին, եթէ այստեղ սկսէի մանրամասնաբար, երկարօրէն խօսել այս պարբերական հրատարակութիւններից իւրաքանչիւրի մասին առանձին առանձին: Այսքանը միայն կասեմ, որ բոլորը միասին, բացի Հիսուսից, ոչինչ ազդեցութիւն չունեցան մեր



հայ հասարակութեան վրայ իրանց տկար գործունէութեամբ: Զը նայելով որ արդէն բաւական տարիներ էին անցել մեր լրագրութեան սկզբնաւորութենից, այնուամենայնիւ այս հրատարակութիւններն էլ այնքան չը հասկացան լրագրի նշանակութիւնը առհասարակ և շատ քիչ բանով գերազանցեցին իրանց նախորդներից՝ Կովչասից ու Արարատից: Ի հարկէ այդ նոր պարբերական հրատարակութիւնները կարող էին համարվել որպէս հետեանք, որպէս պահանջ վերև յիշած հասարակական երեւոյթների, — և իսկապէս այդպէս էլ պէտք է լինի, — բայց ի՞նչ անես, որ մեծապատիւ խմբագիրները՝ փոխանակ հասկանալու լրագրութեան նպատակը, փոխանակ հետեւաբար գործելու այդ բանում և փոխանակ համապատասխան գտնուելու իրանց հրատարակութիւնների ծնող հասարակական պահանջներին, մեծ մասամբ յարմարեցնում էին իրանց թերթերը, չեմ ասի իրանց անձնական կրքերին ու շահերին, — որ գուցէ խիստ և միանգամայն անարդար լինի — այլ աւելի իրանց գրականական գեղեցիկ ճաշակներին:

Ասածիս ապացոյց կարող է լինել այն հանգամանքը, որ մեր հայր Մանգինեանցը իր գր-



խաւոր աշխատակից Առաքել վարժապետ պ. Արարատեանի հետ միասին սիրելով հին պատմական (?) ու մանաւանդ կրօնական — աստուածաբանական գրուածներ մեծ մասամբ հէնց դրանցով էլ լցնում էին իրանց լրագիրը: Մեղափոխմբազիր Տէր Ստեփան հայրը, որ Կովկասեան սարերի այն կողմը \* բնակող հայերի մէջ իրանից աւելի հմուտ աստուածաբան չէր գտնում, որ կեանքի գրեթէ բոլոր երևոյթների վրայ ունէր իր սեպհական անմեղ թէորիաները և որ միանգամ ապացուցեց, թէ Պետրոս առաքեալը Հռոմ չէ գնացել, ոչ թէ կարողացաւ մի նոր ձև, նոր ընթացք տալ լրագրութեանը, այլ մինչև անգամ գնում էր նորա հին ճանապարհով: Միայն գրականական մի նորութիւն կամ, եթէ կուզէք, հնութիւն մտցրեց նա լրագրութեան մէջ: Շատ անգամ, երբ ուզում էր ապացուցանել կամ հաստատել մի որ և է կարծիք, միաք՝ իսկոյն ղիմում էր Սուրբ Գրքին կամ սուրբ հայ-

---

\* Շատ կարելի է, որ տէր հայրը Կովկասեան սարերի այս կողմն էլ չէր գտնում իր նման աստուածաբան, բայց ի հարկ է այդ չէր կարող ասել, որովհետև Կաթողիկոսը էջմիածնումն է բնակւում:



րերի գրուածներին և քաղուածներ անելով առաջ էր բերում ապացոյցներ, հաստատութիւններ, և համանման օրինակներով ջրում էր իր հակառակորդների ասածները: Այստեղ այն էլ պէտք է աւելացնել, որ դամբանական ճառերը մանաւանդ, չը գիտեմ ինչու, Տօրայ եկան և, մի և նոյն է ում գերեզմանի վրայ էլ կուզէ ասվէին և ում ապա՞ծ, շարադրած էլ լինէին, միշտ տեղ էին գտնոււմ, ինչպէս հանգուցեալ հայր Մանդինեանցի լրագրում, նոյնպէս և այն ժամանակուայ միւս պարբերական հրատարակութիւնների մէջ:

Ինչ որ վերաբերում է հայր Մանրեանին, կարծեմ, աւելորդ է ասել, որ նորա դրականական ճաշակը զարգացել էր մեր հին գրականութեան ազդեցութեան տակ: Եւ նա՛ հետեւաբար վարվելով իր ճաշակի հետ, հին լեզուով էլ տրպում էր իր ճոխաշ ամսագիրը՝ կարծելով գուցէ, թէ ինչ որ հին լեզուով է գրվում սուրբ է և գեղեցիկ, թէ կուզ այդ գրուածը լինի մի ջնջին, մինչև անգամ մի յիմար բան: Արժանապատիւ ծերունին, թէ և իր գործունէութեան վերջում տեսնելով և համոզուելով, որ իր ամսագիրը ընթերցողներ չունէ, որ անկարելի է ժողովրդի



Տեա անհասկանալի լեզուով խօսել, սկսեց աշխարհաբար լեզուով գրած մի քանի յօդուածներ էլ մոցնել իր հրատարակութեան մէջ, բայց երևի չը զգաց հանգուցեալը, որ շատ ու շատ ուշացել էր այդ գործում և որ ընթերցող հայ հասարակութիւնը այլ ևս ձառագիւղի աշխարհաբար յօդուածներին կարօտ չէր: — Այդ ամսագիրը կարողացաւ ազրել միայն երեք կամ, կարծեմ, չորս տարի:

Ինչ կարող եմ ասել պ. Մարկոս Ալարէզեանի Կոռնի Հայոց աշխարհի ամսագրի մասին, որ Մոսկվայի Հիւսիսփայտի երեւալուց յետոյ երկու տարուայ վերջը ծնուեցաւ: Հրատարակուելով Թիֆլիսի Աջ և համեմատաբար աւելի մօտ լինելով հայ ժողովրդական կեանքին՝ հեշտութեամբ կարող էր նա ուսումնասիրել հայ հասարակութեան բուն պահանջները և զարթեցնել ժամանակակից հազար ու մէկ հարցեր, որ գերազանցել կարողանար հայկական կեանքից հեռու հրատարակող Հիւսիսփայտից: Բայց չէ. Կոռնիը ոչ թէ չէր գերազանցում Մոսկվայի ամսագրից, այլ և չէր կարողանում մրցել և մինչև անգամ համեմատվել նորա՝ Տեա: Ահագին տեղ ընծայելով հին պատմական, վարդապետական, բարոյական

յօղուածներին, հառաչական — ազգասէր անհամ քարոզներին՝ խեղդում էր ուրիշ աւելի հարկաւոր հարցերի մասին գրուածները, որոնք ոչ այնքան բազմաթիւ, ոչ այնքան ժամանակացից և ոչ էլ այնքան նշանաւոր էին: Աթէ մէկը վերցնի Կառանի համարները, որ տարուանը կուգէ լինի, մի և նոյն է, և ուշադրութեամբ աչքի անցնէ, կը տեսնէ, որ բոլոր գրուածները վերաբերում են հայերին և համարեա՛ թէ ոչինչ խօսք չը կայ օտարների մասին, որ անկասկած կարող էր կրթողական նշանակութիւն ունենալ հէնց այն հայերի համար, որոնց ամբողջապէս նուիրուած էր այդ ամսագիրը . . . ձմարիտ է, կ'երևան երբեմն և այնպիսի բաներ, ինչպէս պ. Գիզջի «Եւրոպայի քաղաքակրթութեան պատմութիւնը» թարգմանաբար, բայց ի՞նչ անես, որ Կառանի ընթերցողները՝ ծանօթ չը լինելով եւրոպական կեանքի հետ — գոնէ Մարկոս Աղաբէգեանի ամսագիրը չէր արել այդ —, պիտի կարդային «Եւրոպայի քաղաքակրթութեան պատմութեան» լոկ թարգմանութիւնը, գրեթէ ոչինչ չը հասկանալով, ոչինչ օգուտ չը քաղելով նրանից: Ուրեմն այս թարգմանութեան երևալը, ոչ թէ չէ բացասում



իմ նկատողութիւնը Կոռնէլի մասին, այլ ընդհակառակը, կարծես աւելի ցոյց է տալիս Թիֆլիսի մեր ամառգրի խմբագրութեան անհետևողութիւնը և խելացի լօգիկայից զուրկ լինելը: Աւելորդ է ասել, որ Կոռնէլի շատ համարներ ստանալով բաժանորդները չէին կտրտում, որովհետև հայ ընթերցողները, գուցէ իրանց ցանկութեան ու բաղձանքի հակառակ, ոչ կարիք և ոչ բաւականութիւն էին զգում համանման յօդուածների մէջ: Մի և նոյնը պատահում էր և Հիստորիայի դիտնական յօդուածներին, որոնք ոչ թէ պարզ, ժողովրդականացնող լեզուով էին գրվում, այլ բարձր, դժուարամարս ոճով, թէև աշխարհաբար բարբառով:

Ինչ և իցէ, Կոռնէլի կարող էր ունենալ իր գոյութեան իրաւունքը (raison d'être), մանաւանդ որ հրատարակվում էր հայ հասարակութիւն ունեցող մի քաղաքում, Թիֆլիսի մէջ, և ընթերցանութեան փոքրիշատէ նիւթ էր տալիս իր իստակ բանասիրական յօդուածներով, որոնց թուում կարող ենք յիշել պ. Պերճ Պառչեանցի Սօս և Վարդիկէի գրուածը, Անգլոսոսիան նամակներն և այլն:

Կոռնէլը, Մէղուն և այդ ժամանակուայ միւս



Տրատարակութիւնները միշտ այն բանի վրայ էին զանգատուում — ինչպէս որ անում են և այժմեան խմբագիր-Տրատարակիչները — թէ հայ հասարակութիւնը չէ հրտաքրքրուում իր մայրենի գրականութեամբ, քիչ կամ գրեթէ բոլորովին չէ կարգում հայ լեզուով գրուածները՝ ուրեմն և իրանց Տրատարակութիւնները: Իսկ այս անվիճելի, եթէ կողգէք, հակահասարակական երեւոյթը իր բնական պատճառներն ունէր, որոնց հիմնական քննութիւնն ու ճշմարիտ դարձնող չենք գտնում մենք ոչ այն ժամանակուայ և ոչ այժմեան պարբերական Տրատարակութիւնների մէջ: Բաւական չէր միայն զանգատել: Թող մեր մամուլը իր գործունէութեամբ, իր բռնած ճանապարհով, իր ընտրած մեթոդով, վերջապէս իր բովանդակութեամբ հետաքրքրէր, զբաղեցնէր և, եթէ կարող էր, օգուտ տար մեծ մասամբ օտար լեզուով խօսող այդ հայ հասարակութեանը և այն ժամանակ, այն ժամանակ միայն, այդ անկանոն, իսկապէս անբնական երեւոյթի, այդ անտարբեր, սաւը վարձունքի գըլխաւոր մեղը, աններելի մեղը բարձուած կը լինէր նոյն իսկ այդ շնորհալի հասարակութեան վզին: Սակայն, ինչպէս տեսնում ենք, մեր մա-



մուլը ոչ թէ կարողացաւ ունենալ մի այդպիսի փրկարար շնորհք, ոչ թէ կարողացաւ ծառայելով բաւականացնել հասարակական իսկական պահանջները, այլ և տամնուհինգ տարի գոյութիւն ունենալով, լիովին չը հասկացաւ մեր այստեղի հայերի, եթէ կարելի է այսպէս ասել, հողերանութիւնը լրագրութեան վերաբերութեամբ: Եւ, կարծես պատմական աւանդութեանը հետեւելով՝ կամենում էր նա նմանվել հին, կլասիկական հայ գրականութեանը, որ, ինչպէս վերեւ էլ ասեցի, հայ ժողովրդի իրական կեանքի հետ ոչինչ սերտ կապ չունէր և չէր էլ կարող ունենալ իր բռնած ընթացքով:

Մի պարբերական հրատարակութիւն գրովում էր գրաբար լեզուով, միւս լուսգիրը աշխարհաբար և մինչև անգամ բոլորովին սահմանափակ, տեղական բարբառով, երրորդը ընտրում էր միջին գեղեցիկ ծանապարհը, չորրորդը ուզում էր միացնել արեւելեան ու արեւմտեան հայ բարբառները, հինգերորդը իր համար մի առանձին լեզու էր մշակում և այլն: Ի հարկ է հայոց մամուլը այս կերպով ոչ առաջադիմութիւն կարող էր անել և ոչ էլ հաստատ հող պատրաստել ապագայ հրատարակութիւնների



Համար: Օրինաւոր, ընդհանուր կրթողական, ժամանակակից հասակակութեանը, ժողովրդին մատչելի, օգտաւէտ յօդուածներից զուրկ, հայոց լեզուի խառը ձևերով, բարբառներով գրուող լրագրութիւնը՝ իր պատմական, կրօնական և բարոյական, սխալաստիկ — վարդապետական յօդուածների բովանդակութեամբ, համաձայուեցէք, որ չէր կարող մեծ առաջադիմութիւն անել և հասնել այն գեղեցիկ ու սուրբ նպատակին, որին նուիրած պէտք է լինեն առհասարակ մի որ և է երկրի պարբերական հրատարակութիւնները....

Ետո կարելի է, որ պ. պրօֆէսօր նպարեանցի Հիստորիայի ամբողջապէս յաջողուէր համանման առաջադէմ, նպատակայարմար ձեռնարկութիւնը, եթէ չը հրատարակուէր նա բազմաթիւ հայ հասարակութենից հեռու անդ՝ Մոսկվայում, այլ գոնէ Թիֆլիսի մէջ և եթէ Յիցէրօնի ճառերի և սրանց նման իստակ կլասիկական ուրիշ գրուածների փոխանակ, պարունակէր նա իր մէջ ժամանակակից քաղաքական ու հասարակական ընթացող կեանքին վերաբերեալ մշակուած, ազդու յօդուածներ: Թէև պէտք է ասել, որ Հիստորիայի մէջ պատահում էին երբեմն գրուածներ նոր պատմութենից, ինչպէս



Ֆրանսիական յեղափոխութեան, Նապոլէօն I-ի և մինչև անգամ Քարիբալդիի մասին :

Մոսկվայի ամառգիրը իր հրատարակման մանաւանդ առաջին տարիները, ինչպէս ինքն էլ խոստովանում է, բաւական պակասութիւն ունէր կրիտիկական — մատենագրական բաժնի մէջ, թէև ընդհանրապէս յօդուածներ պակաս չէին նորան լրացնելու ամառգրի այդ բաժինը : Թոյլ տուէք ինձ առաջ բերել այստեղ պ. Խմբագրի «Ծանուցումը», որ ոչ թէ միայն արդարացնում է իմ ասածը, այլ և որպէս անկեղծ խոստովանութիւն ցոյց է տալիս Խմբագիր — հրատարակչի երախտագիտութեան արժանի գեղեցիկ յատկութիւնը, որ և կարող է հիանալի օրինակ լինել այժմեան մեր հայ լրագրութեան մէջ գործող մարդկանց համար : Ահա թէ ինչ է ասվում այդ ծանուցման մէջ

« Հիստորիայի հրատարակողը չունի նիւթի պակասութիւն, մանաւանդ թէ մի գեղուն, թաւաթաղուն առատութիւն, միայն թէ բանագէտ աշխատաւորք պակաս են նորան. մի ընդհանուր թշուառութիւն է մեր ազգի մէջ, եւրոպական լեզուներ գիտցող մարդերի ամենևին պակասութիւնը, և ի՞նչ կարելի է անել մեր օրերում մի



վնգուով միայն զործ կատարել, այսինքն լոկ ու-  
սերէնով, թէպէտ արդարեւ և այս մեծ բան է  
ամեր հայերի մէջ, միայն թէ լինէին ընտիր թարգ-  
մանիչք այդ լնգուի մէջ եղած ականաւոր բա-  
ւներին: Կրիտիկական բաժինը Հիւսիսափայլէ —  
չատ ցաւելով ասում է հրատարակիչը այս խօս-  
ւքըս — յետ է մնացել մինչև այսօր նոյնպէս  
ւանձեռնհասութեան պատճառով, և այս մեծ  
ւկորուստ է ազգի համար, որովհետև կրիտիկայի  
ւպակասութեամբ շատ ու շատ գրուածք, շատ  
ու շատ անհիմն և կամամտածական կարծիք  
ւերևելի խնդիրների վերայ անփորձ մարդերի գր-  
ւչից արձակ համարձակ լող են տալիս մատենա-  
ւգրութեան մէջ, և ոչ ոք դոցա ճանապարհը  
ւփակում չէ բանագիտութեամբ և լօգիկական  
ւվերլուծութեամբ: \*

Այս, ինչպէս ասում եմ, մի անկեղծ խոս-  
տովանութիւն է պ. Նազարեանցի կողմից և հէնց  
դրանով էլ աւելի բարձրացնում է իր ամազգրի  
նշանակութիւնն ու իր խմբագրութեան պար-  
տաւորութեան հասկանալը, ոչ թէ միայն այն  
ժամանակուայ, այլ թէ կուզ հէնց այժմեան

\* Տես «Հիւսիսափայլ», 1861 տ. № 11:



պարրերական հայ հրատարակութիւններէց: Ինչ կուզէ լինի, պէտք է վկայել, որ Մոսկվայի մեր ամսագիրը ի զուր չէր կրում իր վրայ, թէև մի փոքր մեծամիտ (pre'tentieux), բայց գուցէ իր ժամանակին յարմար վերնագիրը՝ այսինքն՝ «օրագիր ընդհանուր ազգային լուսաւորութեան և դաստիարակութեան»: Պատուելի պրօֆէսորը արժանաւոր հեղինակին յատուկ խօսքերով իրաւամբ ասում էր՝ «մի օրագիր յառաջ ամենէլ այնպիսի խախուռ հիմքի վերայ, որ անխտիր ինչ որ պատահեց, ընդունէ իւր մէջ, նպաստ առնելով իւրեան ընթերցողների տգիտութիւնը, դորան մենք յանձնառու չենք, որովհետև այդպիսի մատենագրութիւնը ամենեւին ընդդէմ է մեր ախորժակին և մեր սովորութեանը: Եւ սրանից յետոյ աւելացնում էր նա և՛ այս օրինակելի խօսքերը՝ «Թող ազգը լինի տգէտ, բայց նա մնում է մեզ միշտ յարգելի, և մեր պարտականութիւնն է ուսուցանել նորան, բայց ոչ մոլորեցնել նորան, և կերակուր տալ նորա տգիտութեանը: Այս գեղեցիկ խօսքերից և Հիւսթօֆայլէ համարները ուշադրութեամբ աչքի անցնելուց յետոյ՝ մեզ թվում է, որ պ. Նազարանցը միւս բոլոր խմբագիր — հրատարակիչներէց ա-



ւելի լաւ իրագործեց իր պրօգրամը\*՝ ունենալով իր մօտ այսպիսի տաղանդաւոր, հասկացող, աշխատակիցներ, ինչպիսի էր արժանայիշատակ հանգուցեալ Միքայէլ Նալբանդեանցը : Սորա սուր ու գեղեցիկ գրչեց բղխածը ամեն գրուածից առաջ էր կարդացվում Հիսթորիայէ մէջ : Իսկ այս ամէնքը գիտեն , թէ ինչու , — Նալբանդեանցը հայոց Դօբրօլիւբով էր . . .

Հիսթորիայէ, գուցէ և դիտմամբ, չը կամենալով կամ ստիպուած չը կարողանալով բոլորովին հեռանալ մեր ամբողջ լրագրութեան մէջ երևող գրականական հոսանքից — արդէն գիտենք, թէ ինչով էր զբաղում մեծ մասամբ մեր մամուլը — ապացուցեց, որ համանման, գուցէ անժամանակակից, բովանդակութեամբ էլ կարող է հետաքրքիր լինել պարբերական հրատարակութիւնը, կարող է կարդացվել, ազդել, միայն թէ չը գործածէ միջնագարեան այլաբանական ոճը , եկեղեցական հին քարոզների ձևերը և,

---

\* «Հիսթորիայի» պրօգրամը , որ համառօտապէս իւրաքանչիւր զրոյցի քամակին էլ էր տպվում, հետեւեալ բովանդակութիւնն ունէր՝ պատմական, ուսումնական, դրականական եւ կրիտիկական :



հետևելով ժամանակակից դիտութեանը՝ փնջ-  
քան որ ինքը դորան վերահասու էր եղեր, աշ-  
խատէ փնտռել ճշմարտութեան ուղիղ ճանա-  
պարհը : Պ. պրօֆէսորի ամազգիբը կարող է  
պարծենալ և այն բանով, որ նա ունէր առ-  
հասարակ ազատամիտ ուղղութիւն՝ հակառակ  
մինչև այն ժամանակ հրատարակող բոլոր լրա-  
գրներին ու ամազգրներին :

Հիստորիայը, կարելի է ասել, բաւական  
ազդեցութիւն ունեցաւ հայ հասարակութեան  
վրայ և շատերին դաստիարակեց : Նա ոչ թէ  
այնպիսի սաստիկ յարձակողական և մինչև ան-  
գամ հայհոյական ձևերով էր առաջ տանում իր  
գործը, ինչպէս որ անում են մեր այժմեան հայ  
լրագիրները, այլ, այո՛ թէև նոյնպէս յարձակո-  
ղական, բայց աւելի ծանր, համոզեցուցիչ կրի-  
տիկական եղանակով՝ աչքի առջև ունենալով  
հայ հասարակութեան դրութիւնը. . . Ի հարկ  
է, թէև առհասարակ լաւ չէ, որ պարբերական  
հրատարակութիւնը դաստիարակչի պաշտօն կա-  
տարէ, որովհետև նա նշանակուած է ծանօթացնե-  
լու իր հասարակութեանը ժամանակակից կեանքի  
հետ, այո՛ իր սեպհական դատողութիւններին,  
հայեացքներին հետ միասին, բայց այնու ամենայ-



նիւ Հիւսիսափայլը՝ ի նկատի ունենալով մեր հայ հասարակութեան թերի կրթութիւնը, ուրեմն և կասարական կարծիքի բացակայութիւնը, լիովին կարող էր օգուտ քաղել այդ արտօնութենից, ուղղելով մերոնց թերութիւնները, ոչ թէ միայն այն ժամանակ, այլ մինչև անգամ հիմայ էլ, եթէ միայն հրատարակվում լինէր: Ասում եմ հիմայ էլ, որովհետև մի և նոյն պակասութիւններն ու թերութիւնները այժմ էլ գոյութիւն ունեն: Մենք չը պէտք է մոռանանք պ. խմբագիր — հրատարակչի վերևում առաջ բերած խօսքերը, որոնք պատուական կերպով ցոյց են տալիս ամսագրի ծանր բնաւորութիւնը և որոնց վրայ դարձեալ հրաւիրում եմ մեր այժմեան հայ խմբագրների զբաղուած ուշադրութիւնը: Իսկ այդ խօսքերը անմեղ չ'ասվեցան և Հիւսիսափայլը չը նայելով, ասում եմ, հասարակական կարծիքի բացակայութեանը՝ ոչ թէ դէպի չարք գործ դրեց այդ, ինչպէս որ արեցին և անում են շատերը, այլ, կարելի է ասել, լիովին արդարացրեց իրան . . .

Հիւսիսափայլն էր, որ մեզանում առաջին անգամ կրօնական հարցերի վրայ ազատամիտ, համբերող հայեացքից սկսեց նայել և, միշտ պաշտ-



պանելով ազգային — ժողովրդական եկեղեցու սկզբունքը (պրինցիպը)՝ այն իրական միտքն էր յայտնում, որ հայերի կրօնական պարտաւորութիւնները չը պիտի սահմանափակվեն եկեղեցական, դաւանական ծէսերի ու ձևերի մէջ, այլ ընդհակառակը՝ պիտի ծառայեն զարգացնելու, ազնուացնելու մարդկային հոգու ընդունակութիւնները . . . Այդ պատճառով պ. պրոֆէսորի ամազգիւրը ցանկանում էր տեսնել հայ հոգևորական ամբողջ դասը՝ վերանորոգուած՝ համաձայն մեր ազգութեան պահանջների ու պայմանների: Հիստորիայն էր, որ առաջին անգամ, որպէս պարբերական օրգան, յայտնեց այն միտքը, թէ Աւետարանն ու եկեղեցական ուրիշ գրքերը պիտի կարգացվեն հասկանալի լեզուով և կենդանի խելացի խօսքը մանաւանդ պիտի լսուի մեր եկեղեցու պատերի մէջ, թէև Մշակչ, չը գիտես ինչու, իրան է ուզում սեպհականացնել այդ նորութեան «ինիցիատիւր»: Իսկ, աւելի ծշմարիտն ասած, դեռ Հիստորիայն ու Մշակչն շատ առաջ առաւելապէս Աւետարանը աշխարհաբար լեզուով արդէն թարգմանուած, հրատարակուած ման էր գալիս մինչև անգամ ժողովրդի մէջ: Այդպիսի մտքերի յայտնելը



էժան չը նստեց Հիւսիսօտարային : Մեշուսն և ուրիշ սորա նման հրատարակութիւնները անուանեցին Մոսկվայի մեր ամսագիրն, ինչպէս որ ընդունված էր այն ժամանակ, բողոքականութեան օրգան և հեռակարսար պ. Նազարեանցին էլ բողոքական : Սկսուեցաւ ի հարկ է պօլէմիկ, որի մասին չ'արժէ խօսել, որովհետեւ ի զուր կ'ապացուցանենք, որ յետադէմները մեղանչում էին ժամանակակից ոգու դէմ : Բացի դրանից նոյն իսկ պօլէմիկն էլ այնքան գեղեցիկ, մաքուր չէ՝ մանաւանդ Հիւսիսօտարային հակառակորդների կողմից :

Հիւսիսօտարայի, չր բաւականանալով այդ լոկ առաջարկութիւններով՝ առաջ էր բերում իր էջերում պատմական, կրօնական — փիլիսոփայական բովանդակութեան այնպիսի յօդուածներ, որոնք կարող էին նպաստել վերանորոգման գործին : Այդ ամսագիրն էր, որ մեզանում առաջին անգամ չուզեց խտրութիւն անել լուսաւորչական, կաթոլիկ ու բողոքական հայերի մէջ և մեծ, առաջնակարգ նշանակութիւն ընծայել մայրենի կենդանի լեզուին ու ազգութիւն կազմող հասարակական, ժողովրդական ուրիշ՝ աւելի նշանաւոր, զօրաւոր տարրերն՝ ինչպէս հայրենի հողին, ազգային դաստիարակութեանը, եւրո-



պական լուսաւորութեան մտցնելուն հայ ազգի մէջ և այլն, և այլն: Այս կերպով կարելի էր յուսալ, որ ամեն տեսակ կրօնական — դաւանական երկպառակութիւնները ոչնչացնելով, անյայտանալով ազգի միջից՝ վերջապէս կ'զատվեն հայերը անօգուտ միջնադարեան վիճարանութիւններից, մոլեռանդ Ֆանատիկոսութենից և ապահով ու հաստատ քայլերով առաջ կ'երթան ճշմարիտ քաղաքակրթութեան անսահման ճանապարհի վրայ . . . .

Հիստորիայը՝ օգուտ քաղելով հին ու նոր՝ ամեն տեսակ հայ հրատարակութիւններից, զանազան հայ բարբառներից, վերջապէս հայոց հին՝ կլասիկական լեզուի հարստութենից ու նոր ժողովրդականի անկանոնութենից, փոքր առ փոքր սկսեց մշակել նոր գրականական լեզու՝ հրատարակելով իր էջերում ամեն տեսակ յօդուածներ գիտութեան գրեթէ բոլոր ձիւղերին վերաբերեալ: Այս կերպով նա կարողացաւ գերազանցել թէ լեզուի մշակութեան մէջ և թէ ուրիշ բաներում ոչ թէ միայն ռուսահայտակ հայերի հրատարակութիւններից, այլ և ճաճկասաանի հայերը չունէին նորա նմանը: — Բայց այստեղ պէտք է նկատել, որ լեզուի մշակու-



Թեան գործի մէջ պ. պրօֆէսոր Նազարեանցը սկսեց խիստ վարվել և կենդանի լեզուի ձևերը, դարձուածները գրեթէ միշտ որոշեալ կանոններին ենթարկել. կանոններ, որոնք սովորաբար օրգանական կապ չեն կարող ունենալ կենդանի ասացուածների հետ: Շատերը ասում էին, որ հայոց լեզուն մշակում է նա գերմանական լեզուի ազդեցութեան տակ՝ և իր ճաշակի համեմատ այդ լեզուի ոճն ու ձևը յարմարեցնում է նորան, ինչպէս և իրաւ մասամբ երևում է այդ բանը Մոսկվայի ամսագրի շատ գրուածներից: Սակայն եթէ այդ այդպէս է, եթէ իրաւ պ. Նազարեանցը խիստ կանոններին ենթարկելով մեր լեզուն, հետեւաբար էր վարվում իր գործում՝ կարծեմ դժուար չէ բացատրել դորա պատճառը: — Նա Մոսկվայում սուրբելով բոլորովին հետու էր հայ ժողովրդի կենդանի լեզուի հոսանքից. ժողովուրդ, որի հետ ապրողը, անմիջական յարաբերութիւն ունեցողը միայն կարող է լեզուի կենդանի, թարմ ձևերը սեպհականացնել իրան: Ուրեմն կամայ ակամայ նա ստիպուած էր իր համար, եթէ կարելի է ասել, «կարխնէտի» լեզու ունենալ, ինչպէս որ ունեցաւ էլ: Բայց ի հարկ է ինչ որ վերաբերում է այժմեան մեր գրականա-



կան լեզուին՝ համեմատելով Հիստորիայի, եթէ կարելի է այսպէս խօսել, «ակադէմիական» լեզուի հետ՝ անկասկած աւելի պարզ, աւելի թեթեւ և քերականապէս աւելի կանոնաւորված է:

Ինչ կուգէ լինի, Հիստորիայը մի նոր, ուրախալի երևոյթ էր հայ նոր գրականութեան մէջ և իր եօթը տարուայ գործունէութեամբ բաւական գործ կատարեց՝ ուղղելով հայ ընթերցողների գրականական փչացած ճաշակը թէ ինքնուրոյն, սուպահական և թէ մանաւանդ թարգմանական գրուածներով: Այս վերջին յօդուածները՝ թարգմանութիւնները, մեծ տեղ էին բռնում Մոսկվայի ամսագրի մէջ, որ գրեթէ կանոնաւոր կերպով ծանօթացնում էր հայերին արեւմտեան ազգերի գրականութեան արդիւնքների հետ:

Անշուշտ ընթերցողը մինչև հիմայ կը նկատէր արդէն, որ Հիստորիայը իսկապէս հանդէս (revue) չէր քաղաքական ու հասարակական երևոյթների, այլ իր բովանդակութեամբ աւելի շուտով ընտիր յօդուածների «հաւաքածու» ընթերցանութեան համար: Մի քանի մարդիկ ասում են, որ պ. պրօֆէսորը զաղարեցրեց իր ամսագրի հրատարակութիւնը բաժանորդների սակաւութեան պատճառով, իսկ ուրիշները, որ



աւելի հաւանական է երևում, առաջ են բերում  
գննազան տխուր պատճառներ . . . .

Ի՞նչ կարող եմ ասել Քէոզօսիայի Մասեայ  
Աղանի կոչուած ամսագրի մասին, որ իր լայն,  
ընդարձակ պրօզրամով և բազմակողմանի վեր-  
նագրներով ինչպէս թեմական (՞) բարոյական,  
բանասիրական, ուսումնական, քաղաքական և  
այլն, և այլն՝ չը կարողացաւ և չէր էլ կարող  
մրցել Հիսթորիայի հետ, այլ աւելի նմանվում էր  
մեր միւս հրատարակութիւններին: Ծիածան ամ-  
սագրի (այսպէս էլ էր կոչվում այդ ամսաթերթը)  
խմբագիր — ավերադիտողը հայրը, Մխիթարեան  
միաբանութեան նախկին եղբայրներից մէկը լե-  
նեւով, իր բազմակողմանի հմուտութեամբ չէր կա-  
րողանում այնպէս թռցնել իր Աղանուն, որ մօ-  
տենայ ուրիշ՝ գուցէ և հակառակ, ճանապարհով  
ու քայլերով գնացող Հիսթորիային: Միւս կող-  
մից պէտք է վկայել, որ Աղանին՝ իր կարողու-  
թեան ու հասկացողութեան շափ մեր պարբե-  
րական միւս հրատարակութիւններից, աւելի էր  
գրադվում ժամանակակից հասարակական ու մա-  
նաւանդ քաղաքական հարցերով: Ի հարկ է ա-  
ւելորդ է ասել, որ կրօնական խնդիրները իրանց  
կարողով գնում էին: Ծիածան ամսագիրը կամ Մ.



«Եւ Սաղմունի Փարիզից յետոյ Թէոդոսիայում մօտ  
վեց տարի գոյութիւն ունեցաւ և գլխաւորա-  
պէս Հայր Ա. յվագովսկու օրգանն էր, ուր և մեծ  
մասամբ ինքը վարդապետ հայրն էր աշխատում:  
Հայր սուրբի գրուածներէ մէջ ուրիշ բաների հետ  
նշանաւոր են մանաւանդ Կռիլովի առակները  
Թարգմանաբար\*, որոնք, ինչպէս վերև էլ ա-  
սեցի, թէև լրագրութեանը բոլորովին անյար-  
մար նիւթ են ներկայացնում, բայց որպէս գե-  
ղեցիկ թարգմանութիւն և մինչև անգամ կար-  
ծես ինքնուրոյն գրուած, շարագրութիւն —  
թէև Խրիմի հայ ժողովրդական բարբառով —  
կարող էին տեղ ունենալ Մասնայ Աղաւնու թւերի  
վրայ: Սա շատ սիրում էր նոյնպէս զանազան  
անեկդոտներ, փոքրիկ պատմութիւններ և վեր-  
ջապէս այն՝ ինչ որ հիմայ անուանում են «խա-  
ռըն լուրեր», որոնք ի հարկ է պարբերական  
հրատարակութեան գլխաւոր էջերը չեն բռնում,  
ինչպէս որ մեր հին լրագրների ու ամսագր-  
ների մէջ էր պատահում:

---

\* Ա. յս առակների Թարգմանութիւնը հրատարակուած է  
եւ առանձին գրքով:



Պ. Մարկոս Աղաբէգեանը լեզուի մշակութեան գործի մէջ իր կատարածը և հայր Այվազովսկու Աղաւանն (երկուսն էլ գեղեցիկ թուղուններ) հետևեալ դերն էր յատկացնում . . . . .  
փրանց կողմանէ Տաճկահայոց գրաւոր աշխարհիկ լեզուին Ռուսահայոց կենդանի բարբառին հետ ձեռք ձեռքի տալու ճանապարհ բաց արին (ՅԻՇ) իրանց թերթերովը \* .

Քննելով այսպէս մեր հայոց մամուլը մի զարմանալի երևոյթ ենք նկատում: Այդ հինգ պարբերական հրատարակութիւններից չորսը ասոսագիրներ էին, իսկ մէկը՝ Մէլու միայն՝ շաբաթաթերթ: Փոխանակ նախ և առաջ լրագիրներ ունենալ, ինչպէս որ պատահում է այդ գրեթէ ամեն տեղ, ուր նոր է սկսվում լրագրութիւնը, մերոնք սկսել էին ուղղակի վերելից: Ես չեմ կասկածում, որ այն ժամանակ մեր հասարակութեանը հետաքրքրող հարցեր չը լինէին, որոնց մասին կարելի լինէր խօսել լրագրում, գոնէ շաբաթը մի անգամ: Բայց ինչ անես, որ մեր խմբագիր-

---

\* Տես «Կուռնկ Հայոց Աշխարհին», 1862 տ. Սեպտեմբրի №-ը:



ները հէնց սկզբից չը հասկացան պարբերական  
թերթի հրատարակման ժամանակամիջոցի կար-  
ծացնելու նշանակութիւնն ու օգուտը: Մեր լրա-  
դրութիւնը, ոչ թէ միայն իր սկզբնաւորութեան  
րոպէում, այլ և այդքան տարիներից յետոյ, չը  
կարողացաւ այնպէս յաջող տանել իր գործը, որ  
կարելի լինի ապահովացնել գոնէ շաբաթաթերթի  
գոյութիւնը: Էլ չեմ խօսում խմբագրների ու  
իրանց աշխատակիցների նիւթական ապահովու-  
թեան մասին, որով հէնց այսօր՝ երեսուն տա-  
րուց յետոյ էլ, մեր մամուլը ոչ թէ չէ կարող  
պարծենալ, այլ և քիչ է մնում, որ լաց լինի:  
Ահա՛ թէ ինչ պատճառով աւելի հեշտ էր ամ-  
սագիրներ հրատարակել, որոնք համեմատաբար  
քիչ ծախս կունենային, քան թէ շաբա-  
թաթերթերը և մանաւանդ ամենօրեայ հրա-  
տարակութիւնները:

Պ. պրօֆէսոր Նազարեանցի Հիւսիսային ամ-  
սագրի դադարմանից յետոյ՝ Թիֆլիսում շարու-  
նակվում է հրատարակվել Մեղու Հայաստանին ոչ  
թէ մեզ արդէն ծանօթ տէր Ստեփան քահա-  
նայ Մանդինեանցի խմբագրութեամբ, որ իր ու-  
սումը ստացել էր ներսիսեան դպրոցում, այլ ան-  
կասկած նրանից աւելի զարգացած, աշխարհա-



կան մարդու՝ կարծեմ Դօրպատի համալսարանի նախկին ուսանող, պ. Պետրոս Սիմէօնեանցի խմբագրութեամբ:

Կառնիչը, որ Մոսկվայի արժանաւոր ամսագրի դադարմանից ղեռ մի տարի առաջ խափանել էր իր հրատարակութիւնը, նորից (1865) սկսում է երևալ իր թողած ասպարէզի վրայ՝ սա էլ Մեղոյի պէս խմբագիրը փոխած: Տաճկահայտակ Մարկոս Աղարէգեանի փոխանակ՝ Հայոց Աշխարհի Կառնիչը խմբագրվում է Մոսկվայի համալսարանի կանդիդատ պ. Ստեփանէի ձեռքով, որ յետոյ՝ այսինքն 1866-ին, չը գիտեմ ինչու, փոխելով իր ամսագրի վերնագիրը Հայիական Աշխարհ անուանեց: — Այդ այն Հայիական Աշխարհն է, որ իր խմբագրի հետ միասին թէ պրօզրամը փոփոխելով և թէ երբեմն դադարելով և նորից երևալով՝ թափառում է այժմ անդրկովկասեան մի քաղաքից դէպի միւս քաղաք, նայելով թէ ուր է ուղարկում և կարգում մեր վարդապետ — խմբագրին հայոց հոգեւոր վարչութիւնը:

Բացի այս ամսագրներից ու լրագրներից 1864 — 1869 տարիների միջոցում մեր լրագրութեան մէջ յայտնվում են նոր պարբերական հրատարակութիւններ: — Մոսկվայում երևում է



Համբուսիքի Ռուսիոյ, Պետերբուրգում — Հիւսիս,  
ինչպէս տեսնում էք առանց փայլի, Թիֆլիսում  
— Վաշտոտիոն, Գորոն, Էջմիածնում — Արարատ  
և այլն :

Խմբագրների փոփոխութիւնները ու նոր հը-  
րատարակութիւնների երևալը գրեթէ ոչինչ նոր  
բան չը ցոյց տուին հայ հասարակութեանը լը-  
րագրութեան վերաբերութեամբ : Ոչ արժանա-  
ւորութեամբ, ոչ բովանդակութեամբ ոչ մէկը  
այս նոր օրգաններից չէր կարող համեմատվել  
Հիւսիսափայլի հետ :

Մեղուի նոր խմբագիր պ. Սիմէօնեանցը, ինչ-  
պէս երևում է, չէ կամեցել մի փոքր գլխացաւ  
պատճառել իրան և՛ աչքի առջև ունենալով իր  
նախորդի սխալները, աշխատել, որքան կարելի  
է, իր սեպհական Մեղուն գեղեցկացնել, լաւաց-  
նել : Բայց ոչ : Պ. Սիմէօնեանցի Մեղուն ոչ թէ  
գերազանցում էր հայր Մանդինեանցի Մեղուից,  
այլ համարեա՛ թէ ոչնչով չէր զանազանվում նը-  
րանից : Ոչ մի նոր պրօգրամ, ոչ մի նոր ձև  
յօդուածների, լուրերի դասաւորութեան ու մին-  
չև անգամ լրագրի արտաքին գեղեցկութեան, մի  
խօսքով ոչինչ նոր բան չէր երևում այս նոր Մեղուի  
մէջ, որով կարողանար հին Մեղուից աւելի հետաքր-



քրել, աւելի գրաւել դէպի իրան ընթերցող  
հասարակութեան ուշադրութիւնը: Դարձեալ  
մեծ, ահագին անհամ յօդուածներ, դարձեալ  
օրինաւոր թղթակցութիւնների բացակայութիւն,  
վերջապէս գրեթէ այն բոլոր պակասութիւնները,  
ինչ որ ունէր տէր Ստեփանի Մեղան: Շատ լաւ  
երևում էր, որ մեր հայ խմբագիրները, ինչպէս  
մինչև պ. Սիմէօնեանցը, նոյնպէս և նրանից յետոյ  
եկողները, բոլորովին «ժուրնալիստ» կոչուած  
մարդիկ չէին, թէև մէկը միւսից կարող էր աւելի  
կամ պակաս զարգացած լինել: Եթէ սորա  
վրայ աւելացնենք և այն հանգամանքը, որ Մեղան  
մանաւանդ վերջին ժամանակները այնքան  
աղքատացաւ լրագրական նիւթերի կողմից, որ  
իր էջերում ապում էր «Մի կտոր հացի պատմութիւն»  
և սորա նման անյարմար յօդուածներ,  
այն ժամանակ հեշտ հասկանալի կը լինի,  
թէ ինչու նորա բաժանորդների թիւը հետզհետէ  
քչացաւ: 1871-ին պ. Սիմէօնեանցի սեպհական  
Մեղան բոլորովին դադարեց: Այժմեան Մեղան  
Հայաստանին՝ թէև դարձեալ պ. Սիմէօնեանցի խմբագրութեամբ  
է հրատարակվում, բայց միայն նորան չէ պատկանում,  
այլ, ինչպէս յօդուածիս



սկզբումն էլ ասեցի, «մեղուականներին» ևս, որոնց մասին իր տեղը կը խօսենք :

Կոռնի ամսագիրը իր փոփոխութեան մէջ այնքան նման չէր Մէլոնին : Բաւական չէ, որ խմբագիրը փոխվել էր, այլ ինքը ամսագիրն էլ ուրիշ անուն էր ստացել : Պ. Ստեփանէն՝ թէև պ. Մարկոս Աղաբէգեանից շատ բան չը ցոյց տուեց, բայց մի բանում գերազանցեց նրանից : Սա, որպէս կանգիտատ Ֆիլոլոգիական Փակուլտէտի՝ աչքի առջև ունենալով մեր նոր գրականական լեզուի ձևերի մասին վիճարանութիւնները լրագրութեան մէջ, աւելի իրաւունք համարեց իրան զբաղուել այդ բանով, իր ճաշակի կամ «կապրիզի» համեմատ իր համար մի լեզու շինել, մշակել և չափը անցնել : Լրագրութեանը այդ անյարմար, անտեղի վիճարանութիւնները դարձեալ շարունակուելով գրեթէ առաջին տեղն էին բռնում այն ժամանակուայ հրատարակութիւնների մէջ և ընթերցող հասարակութիւնը պիտի կարգար այն, ինչ որ իր գործը չէր, ինչ որ իրան չէր կարող զբաղեցնել և օգուտ տալ :

Մեր թէ հին և թէ նոր լրագրողներն ու Ֆիլոլոգները չը գիտէին կամ մոռանում էին այն



գիտնական ճշմարտութիւնը, թէ մի լեզուի բուն, իսկական ստեղծողն ու զարգացնողը ժողովուրդն է, ազգն է. իսկ բանասէրները, քերականները նորա մշակներն են: Սոքա՝ ժողովրդական հարուստ ու բազմակողմանի բարբառներից ծաղկաքաղ անելով, պիտի կազմեն, յօրինեն գրականական լեզուն և ոչ երբէք արհեստական կերպով իրանցից հընարեն, շարադրեն, որովհետև լեզուն ոչ մի տեսակ արհեստական փոփոխական զարգացումը (e'volution), թէկուզ հանձարաւոր անհատի ձեռքով կատարած, չէ ընդունում: Ընդհակառակը, լեզուն ժողովրդի բերանում ապրելով, հասարակութեան կեանքի հետ զարգանալով ինքն իրան, յանկարծ, ինքնակամ կերպով (spontane') բղխում, արտադրում է իր փոփոխութիւնները, իր ձևերը և այլն \* : Բայց թողնենք լեզուագիտական այս ընդհանուր դատողութիւնները, որ չը լինի թէ մենք էլ, մեր պարբերական հրատարակութիւնների խմբագրների ու

---

\* *Stu.* Ernest Benan, De l'origine du langage, Paris, 1858 *ու* W. D. Whitney, La vie du langage. Bibliothèque scientifique internationale, Paris, 1875.



իրանց աշխատակիցների նման, մի և նոյն սխա-  
լանքի մէջ ընկնենք:

Պ. Ստեփանէի Հայկական Աշխարհը՝ փոխար-  
կուած Կառնի ամսագիրը, համեմատելով Հիս-  
սոփոյնի հետ շատ կողմից ցածր էր նրանից և,  
քանի գնում էր, աւելի ու աւելի վատանում  
էր Մեղուի պէս: Չը նայելով որ այս ամսա-  
գիրը իր խմբագրի հետ միասին հիւրասիրվում  
է հիմնց Անդրկովկասի այլ և այլ քաղաքներում,  
ինչպէս Քիֆլիսում, Շուշի մէջ, Գանձակում,  
Քաղուի մէջ և այլն, մենք դրանում չը տեսանք  
և չենք տեսնում ոչինչ նկարագրութիւն այդ  
քաղաքներում բնակող ժողովրդի կեանքի զա-  
նազան կողմերի մասին: Ընդհակառակը, դորա  
յօդուածները մեծ մասամբ վերաբերում են  
օտարների կեանքին, ընդհանուր հարցերին: Ես  
ընդդէմ չեմ, որ մերոնք ծանօթանային օտար-  
ների կեանքի հետ, ընդհակառակը՝ — և ես խօ-  
սեցայ էլ վերևում այդ բանի մասին, Կառնի  
վրայ մի քանի խօսք ասելու ժամանակ — բայց  
այնուամենայնիւ, ի՞նչ կը լինէր, եթէ մենք՝ ցան-  
կանալով ուրիշների հետ ծանօթանալ, ոչինչ չը  
գիտենայինք մեր կեանքի մասին, չ'ուսումնասի-  
րէինք մեզ ինքներիս, ծանօթ չը լինէինք մեր



գործերին : Հասկացողութիւն չունենալ իր հասարակութեան ներքին կեանքի մասին և ուրիշների վրայ դատողութիւններ անել, իմ կարծիքով, վատթար սխալներից մէկն է, կը նշանակէ անմեղ կորցնել ժամանակն ու աշխատանքը : Իսկ այս աններելի սխալին առաջն առնելու միակ միջոցը անկասկած միջին ճանապարհն է : — Որքան մենք պիտի ծանօթանանք, ուսումնասիրենք, քննենք մեր կեանքի լաւ ու վատ կողմերը, այնքան էլ պիտի աշխատենք հասկանալ, օգուտ քաղել, ըմբռնել, նմանվել ուրիշների դրութեանը, նոցա կեանքի զանազան կողմերին : Այսպիսի զուգընթաց ծանօթութեամբ մեծ օգուտ ստանալով հասարակութիւնը կը զրդուի նոյնպէս կատարելագործուելու, նախանձաւոր ու ցանկացող լինելու առաջադիմութեան : Այս կէտից միայն ի հարկէ օգտակար է ուսումնասիրել օտարի կեանքը : Աննպատակ կերպով փոխ առնել նորա բոլոր կողմերը նոյնութեամբ, ինչպէս որ կան, կապկուտեան նման մի բան կը լինէր . . .

Իսկ Հայկուն Աշխարհի այն յօգուածները, որոնք խօսում են օտարների մասին, այնքան էլ նշանաւոր չեն : Ամսագրի առաջին երեսները սովորաբար նուիրված են լինում խմբագիր —



վարդապետի ասած ջերմեռանդ քարոզներին: Պատահում են նոյնպէս մի քանի հետաքրքիր յօդուածներ, որոնք կարող են կարդացվել, բայց մի և նոյն ժամանակ հազուադիւտ չեն և կըրթողական այնպիսի յօդուածներ էլ, ինչպէս «Աղօթքի զօրութիւն» վերնագրով գրուածը: — Այստեղ պատմվում է, թէ ինչպէս մի ինչ որ եռանդոտ քրիստոնեայ անգլիացի դօքտոր Միլլէր անունով \* ամենօրեայ աղօթքների միջոցով անթիւ հարստութիւն է դիզում, սառնալով հազարներ անգլիական լիրաներից: Բայց որպէս զև աղօթքը դրամական զօրութիւն ունենայ, առաջ է բերվում և մի տեսակ պրօգրամ, թէ ինչպէս պիտի մատուցանուի այդ մաղթանքը: Անկասկած արժանապատիւ հայրը կը խոստովանուի, որ համանման շահասիրական աղօթքները հազիւ թէ հաճելի լինեն Աստուծուն: Եւ այս յօդուածը ծանր կերպով պատմած լաւ տեղ է բռնում Հայկական Աշխարհի մէջ: Ի՞նչ անես, հայր Խորէն Ստեփանէի ամսագիրը հաւատարիմ է մընում կրօնական, մանկավարժական, բայց իսկա-

\* Տես «Հայկ. Աշխարհ» 1877 № 3:

պէս իր խառը պրօզրամին, այնպէս որ այդպիսի  
յօդուածներէ հետ կը պատահէք և ուրիշ ուղ-  
ղութիւն ունեցող գրուածներին՝ օրինակ — «կա-  
նանց հարցին», «մարմիններ այրելու խնդրին»,  
մատենախօսութեանը պ. Վ. Տիտոյի «Voyage au  
pays des milliards» գրքի մասին և այլն: Այն  
ինչ մեզ մօտ հրատարակող գրքերի մասին ո-  
չինչ չը կայ:

Դարձեալ կրկնում եմ. ես հակառակ չեմ,  
որ զանազան յօդուածներ բովանդակէ իր մէջ մի  
որ և է, թէկուզ հէնց կրօնական — մանկավար-  
ժական, մասնագիտական հայ ամսագիր, բայց  
ցանկալի կը լինէր, և ամենքն էլ ինձ հետ կը  
համաձայնվեն, որ յօդուածները, գրուածները  
վայրիվերոյ, անկարգ, աննպատակ չը լինեն, չը  
տպվեն, այլ յարմար, համապատասխան գրու-  
նուեն հասարակական, ժողովրդական մի որ և է  
պահանջին, կարիքին, ցանկութեանը: Մի՞թէ  
քիչ բան կայ գրելու, մի՞թէ օրական, կենսա-  
կան հարցեր քիչ կան հայկական կեանքում:  
Ասկայն մեր հայ հրատարակութիւններէ հա-  
մանման պակասութեան, անհետևողութեան ու  
անշնորհքութեան մասին այնքան անգամ խօ-  
սեցայ, այնքան անգամ կրկնեցի իմ յօդուածի



ընթացքում, որ կարծեմ արդէն ձանձրացրի իմ  
ընթերցողին : Բայց ի՞նչ անես. պատահում են  
լուպէններ, երբ մէկի փոխանակ հազար անգամ  
պիտի ասես մի և նոյն բանը, որպէս զի կարո-  
ղանաս նպատակին հասնել :

Ի՞նչ կարող եմ ասել վերև յիշած միւս  
լրագրների ու ամսագրների ինչպէս Հիսիսի, Համ-  
բուրգի, Վաշտատիանի, Գարուանի, Արարատի և ու-  
րիշ սրանց նման մեր գրականութեան հորիզոնի  
վրայ երևող պոչաւոր աստղերի մասին, որոնց  
գոյութեան ժամանակամիջոցը կամ վեց ամիս էր,  
կամ մի տարի և կամ շաա շատ տարի ու կէս :  
Մի կողմը թողնելով բուն Ռուսաստանում լոյս  
տեսնող հրատարակութիւնները, որոնք մասամբ  
ուղում էին նմանվել Հիսիսոփային, բայց որ չը  
յաջողուեց նրանց այդ բանը՝ մի կողմը թողնե-  
լով նոյնպէս Թիֆլիսի Գարուան ազգային լուսաւո-  
րութեան և դաստիարակութեան ամսագիրը, որ  
մեզ արդէն լաւ ծանօթ Մելուի նախկին խմբա-  
գիր տէր Ստէփան Մանգինեանցն էր հրատարա-  
կում՝ զանք և տեսնենք գոնէ, թէ ի՞նչ էին  
էջմիածնի Արարատը և այստեղի Վաշտատիանը :

Արարատ ամսագիրը, ինչպէս յօդուածիս  
սկզբումն էլ ասեցի, որպէս կիսապաշտօնական



օրգան էջմիածնական Սուրբ Աթուռի, լցնում էր  
և այժմ էլ լցնում է իր էջերը գլխաւորապէս  
հոգեւոր վարչութեան ու կառավարութեան կար-  
գադրութիւններով մեր ազդային եկեղեցուն  
վերաբերեալ: Խմբագրուելով այս հրատարակու-  
թիւնը մեր արեղանների ձեռքով՝ ի՞նչով կարող  
էր կամ հէնց հիմայ էլ ի՞նչով կարող է հետա-  
քրքիր լինել, եթէ ոչ այն բոլոր անյարմար, ան-  
համ, անյաջող բաներով, որոնք ընդհանրապէս  
յատուկ են ռուսահայտակ հայերի մամուլին և  
մասնաւորապէս մեր կողմէն լրագրին, հայր Պատ-  
կանեանի Արարողին, Մէշոյին, Հայկուն Աշխատին  
և այլն: Զը նայելով որ էջմիածնի Արարողը ոչինչ  
կրթողական, օգտաւէտ յօդուածներ չէ պարու-  
նակում իր մէջ — ոչ թէ միայն ժամանակակից  
հայ հասարակութեան, այլ մինչև անգամ իր  
տիրացունների համար — այնուամենայնիւ այժ-  
մեան մեր բոլոր պարբերական հրատարակու-  
թիւններից ամենից աւելի բաժանորդներ ու-  
նեցողը նա է: Սրանց թիւը համնում է հազար-  
ների: Այն ինչ միւս հրատարակութիւնները  
700 բաժանորդներից աւելի չեն ունենում: Այս  
երևոյթի պատճառն այն է, որ մեր հոգեւոր  
գրեթէ բոլոր պաշտօնեաները պարտաւոր են



ստանալու այդ ամսագիրը : Իսկ այս քիչ չէ : Վերջապէս այսպէս թէ այնպէս Արարարը պէտք է որ իր գոյութիւնն ունենայ, եթէ ոչ որպէս հասարակական հարցեր քննող, հայ ժողովրդին զարթեցնող, կրթող ամսագիր, այլ գոնէ որպէս հայ եկեղեցուն վերաբերեալ զանազան տեղեկութիւններ, կարգադրութիւններ, ակտերո, փոփոխութիւններ հաղորդող մասնաւոր հրատարակութիւն : Իսկ համանման լուրերը, ինչպէս յայտնի է, իրանց նշանակութիւնն ունեն հայ հասարակութեան համար, մանաւանդ եթէ աչքի առջև ունենանք մեր եկեղեցու անկախութիւնն ու ինքնուրոյն դրութիւնը : Կարծեմ այսօր քանր բնական է Արարարի մասին, որովհետև անկարելի է օրինաւոր կրթական չը դիմանող նորա անմեղ ու հիւանդ յօգուածների վրայ քննութիւն անել :

Խօսենք այժմ Վաճառականի մասին :

Ես կրքոտ, կողմնապահ, կոյր մարդիկ հիմնուելով այն սխալ ու միանգամայն անհիմն կարծիքի վրայ, թէ բոլոր հայերը, առանց բացառութեան, վաճառականութեամբ են պարագում, կ'ասեն երեւի ահա վերջապէս Վաճառական անուն ունեցող մի հրատարակութիւն,



որ անշուշտ մեծ յաջողութիւն պիտի գտնէր  
հայերի մէջ: Բայց այսպէս մտածելով շարաշար  
կը սխալվեն: Բարի ընթերցողը ինձ հետ միա-  
սին կարծում կը լինի, որ ճշմարիտ թէև բոլոր  
հայերը վաճառականութեամբ չեն պարապում,  
բայց գոնէ Քիֆլիսի և միւս քաղաքների մեծ  
մասը դրանով է զբաղուած: Ուրեմն և մեր քա-  
ղաքում հրատարակող շարաթատերթը պէտք  
է, որ իր նպատակին հասնէր: Բայց ոչ: Նոր  
լրագրի խմբագիր պ. Տէր-Աղէքսանդրեանը, հէնց  
իր գլխաւոր աշխատակից երևելի գերեզմանա-  
փոր ու արխեօլօզ (հնագէտ) պ. Նրիցեանի  
հետ միասին, երբէք չէր և չէր էլ կարող լինել  
խմբագիր մի այնպիսի հրատարակութեան, որ  
կրում լինէր իր վրայ Վաճառական անունը: Հա-  
մանման անուն ունեցող թերթը ակնյայտի  
կերպով կը պահանջէր իր խմբագրից փոքր ի  
շատէ հիմնաւոր հմտութիւն տնտեսական ու  
Ֆինանսական գիտութիւններին վերաբերելու,  
կամ գոնէ այս ուսումնական ճիւղերի լսելացի,  
օգտաւէտ պրակտիկայի մասին: Սակայն երևում  
էր, որ այդ բանը Վաճառական առաջնորդների  
գործը չէ, մանաւանդ Քիֆլիսի ամբողջ հասա-  
րակութեանը լաւ ծանօթ պատմաբան Նրիցեա-



նինք, որ մի ժամանակ աշխատակից էլ էր կոռու-  
ամսագրի, ուր յօդուածներ էր գրում . . .  
աստղաբաշխութեան վրայ:

Ես հաւատացած եմ, որ ինչպէս հիմայ  
մի արհեստագէտ — տէխնիկ, բժիշկ կամ մի  
ուրիշ մասնագէտ մարդ ծիծաղում և ուսերը  
վեր է քաշում, երբ կարգում է իր մասնագի-  
տութեանը վերաբերեալ տղայական յօդուածներ  
Մեղուի, Մշակի կամ մի ուրիշ լրագրի մէջ, այն-  
պէս էլ այն ժամանակ հայ վաճառականները մի  
և նոյն վարմունքն էին ցոյց տալիս դէպի Վաճա-  
տականի անմեղ, դատարկ յօդուածները: Թէև այն  
էլ ճշմարիտ է, որ մեր վաճառականները սովո-  
րաբար մի առանձին ձգտում էլ չունենալով՝ դէպի  
ընթերցանութիւնը, ամենեւին չէին էլ կարգայ  
այդ շարաթաթերթի յօդուածները: Իժուար  
թէ կարգային էլ, եթէ այդ գրուածները մինչև  
անգամ հիմնաւոր կերպով ուսումնասիրուած,  
շարադրած, մշակուած էլ լինէին:

Բայց մի կողմը թողնելով այդ չափից դուրս  
մանր ու միակողմանի գործերով զբաղուող մարդ-  
կանց այդպիսի աններելի վարմունքը, նրանց  
այդպիսի ահաճութիւնը դէպի ընթերցանու-  
թիւնը առհասարակ, մեզ ինքներիս մի հարց



առաջարկենք՝ — արդեօք ի՞նչ կարող էին կարգալ նրանք այդ առևարական կոչուած թերթի մէջ: Մի՞թէ պ. Նրիցեանի գրչեց բղխած առաջնորդող յօդուածները, որոնք տափակ, յայտնի, սովորական ճշմարտութիւններ էին պարունակում իրանց մէջ ինչպէս՝ փող չը կայ ու... միջոց չունենք ու... ուսում, կրթութիւն շատ պակաս է մեզ ու... և այլն: Եւ այս բոլորը ինչո՞ւ, ի՞նչ պատճառով՝ որովհետև լուսաւորութիւն չը կայ: Հարցը վճռուեցաւ, գնաց. էլ ի՞նչ էք ուզում: Բացի սրանից Առճաստիւնի մէջ այնպիսի բաների մասին էին գրվում, որ հիմայ, երբ թերթում ես այդ լրագրի համարները, ինքդ քեզ հարց ես առաջարկում՝ արդեօք ի՞նչ բանի համար գրվում և տպվում էին այդ բոլորը: Ի՞նչ կարիք կար, օրինակի համար, իմանալու, կարգալու Ամերիկայի և ուրիշ երկրների պարտքերի, եկամուտների, ծախսերի, նոր շինուող երկաթուղիների տարածութեան և, չը գիտեմ էլ ինչ, փիլիսոփայութեան մասին զանազան դատողութիւններ, երբ մեզ հարկաւոր էր իմանալ, թէ ի՞նչ ունենք մենք, ի՞նչ պիտի լինենք մենք, ի՞նչպէս պիտի առաջ տանենք մեր սեպհական դործերը և այլն: Առճաստիւնը իր Ֆինանսա-



կան (sic.) յօդուածներում միշտ այն բանի մասին էր ճառախօսութիւն անում, թէ այս ինչ, կամ այն ինչ ձեռնարկութիւնը, մտադրութիւնը իրագործելու համար հարկաւոր է փող և դարձեալ փող. և այս համարում էր նա Ֆինանսական հմտութիւն, Կարծես թէ, ընթերցող հայ հասարակութիւնը առանց Վաճառականի գեղեցիկ խորհուրդների չը գիտէր, որ փողը առհասարակ օգտակար, անհրաժեշտ առարկայ է, որ միշտ պէտք է, հարկաւոր է . . . Եւ չեմ խօսում այն բանի վրայ, որ Վաճառականը երբէք չէր ցոյց տալիս փող աշխատելու տնտեսական յարմար միջոցները, կապիտալի գործածութեան օգտաւէտ, հասարակաշահ եղանակը, մշակների ու առհասարակ աշխատաւոր, քրտնող դասի օրինաւոր, արժանի վարձատրութիւնը, նրանց դրութեան ամօքելը և այլն, և քաղաքական տնտեսագիտութեան վերաբերեալ ուրիշ այսպիսի հազար ու մէկ հարցերի անհրաժեշտութիւնը: Թէև պէտք է աշկարայ խոստովանել, որ համանման երևոյթ չենք տեսնում մենք հէնց այսօրուայ պարբերական հայ հրատարակութիւնների մէջ էլ, չը նայելով որ սրանց խմբագիրները կարող են քաղաքական տնտեսագիտու-



Թեան դօքտորի գիտնական տիաղոսները կրել իրանց վրայ . . .

Ես կը ձանձրացնէի իմ ընթերցողին — գուցէ արդէն ձանձրացրի էլ — եթէ այստեղ մի առ մի թուէի պ. Տէր Աղէքսանդրեանի ու պ. Երիցեանի լրագրի միւս խոշոր, աչքի զարնուող պակասութիւնները, որոնք շատ նման են մեր միւս պարբերական հրատարակութիւնների թերութիւններին : Միւս կողմից այն էլ պէտք է ասել, որ հրատարակիչները՝ չք տալով իրանց օրգանին Առաքական անունը, չունենալով սէր, ձգտումն դէպի այդպիսի փէշակը, ձեռք վերցնելով Ֆինանսական անյաջող յօդուածներից և աշխատելով յարմարվել իրանց ընթերցողների տրամադրութեանը, կարող էին մի բան դարձնել իրանց թերթը, լաւացնել, թէ կուզ նմանեցնել հէնց մեր այսօրուայ լրագրներին : Բայց հիմայ արդէն բաւական ուշ է այսպիսի խորհրդի ու ցանկութեան յայտնելը : Հանգուցեալ Առաքականը 1866-ին սկսուելով 1867-ի կէսին դադարեց : Այնուհետև մօտ տասնումէկ տարի անցաւ : Նորան ոչինչ օգուտ չեն տայ մեր խօսքերը : Բայց ընդհանրապէս երբէք աւելորդ չէ ցոյց տալ անցեալի սխալները : Ուրեմն թո՛ղ



մեր այժմեան հայ խմբագիրները տեսնեն իրանց նախորդների գործած, մեղանշած սխալները, պակասութիւնները և օգուտ քաղեն, եթէ միայն կարող են . . .

Մինչև հիմայ ասածներիցս կարելի է եզրակացնել, որ ռուսահայտակ հայերի մամուլը — գրականութեան այս պարբերական ձիւղը — վատ թէ լաւ շարունակուելով մօտ քսանուհինգ տարի՝ այսինքն մինչև 1872-ը, այսպէս թէ այնպէս արդէն մի տեսակ պահանջ էր դառել մեր հայ հասարակութեան համար: Եւ եթէ նա իր գործունէութեամբ լիովին չէր մշակել, պատրաստել լրագրութեան համար մի հաստատ, ապահով ասպարէզ, գոնէ զուրկ չէր իր ոտների տակ ունեցած հողից, որի վրայ կարողանում էր կանգնել: Ասածիս ապացոյց կարող են լինել վերև յիշած այն բոլոր փաստերը, հասարակական ու գրականական այն բոլոր երեւոյթները, որոնք ոչ թէ արհեստական կերպով, այլ բնական պահանջմամբ կարիք էին զգալ տալիս հայ հասարակութեանը ունենալ իր սեպհական պարբերական օրգանները: Ի՞նչ անենք, եթէ այդ գրականական օրգանները այնքան յաջողութեամբ չէին: Այդ բանը մեր խմբագիրների, մի խօսքով



անպատրաստ հայ հրատարակողներին մեղն էր: Իսկ խմբագիրներն ու հրատարակիչները անցա-  
ւոր, ժամանակաւոր մարդիկ են՝ այսօր կան,  
էգուց ոչ: Բանն այն է, որ հայոց մամուլը, ինչ  
կուզէ լինի, իր գոյութեան իրաւունքը արդէն  
ձեռք էր բերել հայ հասարակութեան կեան-  
քում: Սրանից յետոյ խօսել այստեղ և ապա-  
ցուցանել, թէ ներկայումս մեր մամուլը ինքն  
իրան պիտի գոյութիւն ունենայ հայ հասարա-  
կութեան բոլոր դասերի համար առհասարակ՝  
անշուշտ աւելորդ, գուցէ և ծիծաղելի բան կը  
լինէր:

Ուրեմն ճանապարհը արդէն բաց էր արած:  
Հարկաւոր էր միայն, որ ասպարէզ դուրս  
գային գործին հմուտ, հասկացող, անձնուէր  
մարդիկ, որոնք կարողանային շարունակել դէպի  
առաջ այդ սկսած ճանապարհի գիծը: Ինչ որ  
վերաբերում է այն մի քանի անձներին, որոնք՝  
ուրանալով բոլոր անցածը, իրաւունք են յայտ-  
նում արհեստական կերպով ստեղծելու այժմեան  
հայ լրագրութիւնը, ինչպէս տեսնում է ընթեր-  
ցողը, բոլորովին սխալ և հիմնուած է միայն  
նոցա պարզ ցնորքների վրայ: Հիմայ տեսնենք,  
թէ այն մարդիկը, որոնք դուրս եկան իրանց



հրատարակութիւններով շարունակելու իրանց նախորդների սկսած գործը, ուղքեր են, ի՞նչ ընդունակութեան տէր մարդիկ են և ի՞նչպէս են առաջ տանում հայ լրագրութեան գործը:

### III

Վերևում ես ասեցի, թէ մինչև 1872-ը քսանուհինգ տարուց էլ գրեթէ աւելի է, ինչ որ ռուսահայաստակ հայերի մամուլը գոյութիւն ունէ: Այժմ այդ այդպէս է: Բայց հետաքրքիր ընթերցողը երևի կը հարցնէ ինձ, թէ ինչո՞ւ անպատճառ մինչև 1872 տարին էք հաշվում մեր մամուլի գոյութեան ժամանակը, և ոչ թէ առաջ կամ յետոյ, և մի՞թէ այդ ժամանակ դադարում է դա: — Այ՛, չէ դադարում, և ահա թէ ինչ պատճառով այդպէս եմ հաշվում: Մի կողմից այդպիսի վարմունքը պարտաւոր կը դայ Մշակի տէր և խմբագիր պ. Գրիգոր Արծրունուն, (յայտնի է որ Մշակը 1872-ից է սկսել իր հրատարակութիւնը) որ կարծում է, ոչ թէ միայն հայ լրագրութիւնը, այլ և համարեա՛ թէ մեր ամբողջ գրականութիւնը իրանով է սկըս-

վում\* : Իսկ միւս կողմից, որովհետեւ ես բա-  
ժանում եմ մեր մամուլի գոյութեան ժամանա-  
կամիջոցը երեք շրջան — ինչպէս որ կա-  
րող է եզրակացնել ընթերցողը այս իմ ամբողջ  
յօդուածից՝ — 1872-ին վերջանալով երկրորդը,  
ուրեմն երրորդ շրջանն է սկսվում: Եւ իրաւ, մեր  
մամուլի գոյութեան ժամանակամիջոցը, մինչև  
այսօրուայ օրը կազմելով երեսուն տարի՝ կարող  
է երեք շրջան ներկայացնել : Ուրիշ խօսքերով  
1847-ից մինչև 1858-ը կը լինի առաջին շրջան,  
1858-ից մինչև 1872-ը երկրորդ — և 1872-ից  
մինչև ներկայ ժամանակս, և կարելի է դեռ այս-  
օրուանից յետոյ էլ, երրորդ շրջան հայ լրագր-  
ութեան :

---

\* Տես «Մշակ» № 39, 1877 տարուայ առաջնորդող  
յօդուածը „Մենք պօէզիայ չունենք“ վերնագրով, որտեղ  
պ. Արծրունին փիլիսոփայութիւն անելով ուրիշ բաների հետ  
ատում է եւ հետեւեալը՝ „մենք՝ հայերս առհասարակ չու-  
նենք բանաստեղծութիւն եւ չունէինք մեր հին գրականու-  
թեան մէջ (?) եւ այլն, եւ այլն եւ յետոյ, թէ „Մշակ  
լրագրի վեց տարուայ առաջնորդող յօդուածների ազ-  
դեցութեան տակ մշակվել են մտքեր“, որոնք իբր թէ բա-  
նաստեղծօրէն արտայայտվում են այս ինչ կամ այն ինչ իրան՝  
Արծրունուն, պաշտող համբակ — տղայի գրչով: Մի ուրիշ տեղ



Հայոց մամուլի այդ առաջին երկու շրջանների մասին — եթէ միայն կարելի է այդ ժամանակներին «շրջան» նշանաւոր խօսքը յարմարեցնել — ես իմ կարողութեան չափ արդէն խօսեցայ: Աւելի ընթերցողը կը նկատէր անշուշտ, որ այդ երկու շրջանները, թէև միմեանցից այնքան չէին տարբերվում իրանց առանձին առանձին յասկութեամբ ու բնաւորութեամբ, բայց այնուամենայնիւ իրանց ընթացքում ցոյց էին տալիս մի տեսակ առաջադիմութիւն: Իսկ երկրորդ շրջանը բնական օրէնքով միշտ պէտք է աւելի առաջադէմ լինի: Հիմայ արդէն ժամանակ է, որ մեր խօսքը Կարճնենք դէպի երրորդ շրջանը, որ՝ թէև այդ երկու շրջաններից այնքան

---

էլ (№ 67, 1878) Թէ, „Մշակը ամբողջ ուսումնարան էր շատերի համար գրողները հետզհետէ պատրաստուեցան կըրթուեցան“: Բայց դժբաղդատոր, հէնց պ. Արծրունու համար, մեր դօքտօրը չէ ցոյց տալիս մի այնպիսի հրաշալի օրինակ, — եւ չի էլ կարող ցոյց տալ, բացի իր լրագրից — որ մի լրագիր վեց տարի գոյութիւն ունենայով կարող է գրողներ, բանաստեղծներ պատրաստել: Այնուամենայնիւ հետաքրքիր կը լինէր „Մշակի“ շփոխով պատրաստուած ու կրթուած այդ . . . հեղինակների անունները, գոնէ մէկինը, իմանալ . . . .

էլ առաջագիտութիւն չէ արել, բայց գոնէ ուրիշ, առանձին յատկութիւն է ներկայացնում: — Այս շրջանում այլ ևս չը կան լեզուաբանական ու Ֆիլոլոգիական անտեղի վէճեր, մանրամասը, միջնագարեան դատողութիւններ և այլն: Այժմ կարծես ամենքն էլ՝ համաձայն լինելով մեր նոր գրականական լեզուով շարադրելու իրանց գրուածները՝ մի և նոյն ժամանակ զանազան ոճ ու հասարակական զանազան կուսակցութեան ոգի (sic) են ցոյց տալիս իրանց օրգաններում: Այսպէս ուրեմն այս երրորդ շրջանի առանձին, որոշող յատկութիւնը մանաւանդ այն է, որ կռիւր ոչ թէ լեզուի հարցին է նուիրուած, այլ, անշուշտ դրանից աւելի հետաքրքիր՝ հասարակական կուսակցութիւններին: Այս կէտից նայելով՝ ցանկալի կը լինէր ի հարկ է առանձին ուշադրութեամբ նայել, թէ ինչ է կատարվել և ինչ է կատարվում 1872-ից մինչև այսօր հայ լրագրութեան ասպարէզի վրայ:

1872-ի հէնց սկզբումն էր, որ Թիֆլիսի մէջ սկսեց հրատարակվել Մշակ շաբաթաթերթ լրագիրը: Աեց ամսից յետոյ բաղդ ունեցաւ սա հանդիպելու իր պօնկուրէնտ (մրցող) ամեղուականներին՝ ձեռքով վերանորոգուած Մեղու Հայաստանի հրա-



տարակութեան հետ: Ասում են, որ պ. Արծրունին, դեռ ևս Մշակի հրատարակմանը ձեռք չը տուած, կամեցել է վերցնել Մեղան, ուր ինքն էլ երբեմն երբեմն յօղուածնել էր գրում: Բայց չը կարողանալով հաշտուել և ցոյց տալ իր գերազանցութիւնը պ. Միմէօնեանցին և նորա պօմպանիային՝ մտքումը դրել է ձեռք զարկել մի նոր լրագրի հրատարակութեանը:

Մշակի հիմնուելու, սկսուելու պատմութեան մէջ հետաքրքիր բանն այն է մանաւանդ, որ թէև փիլիսոփայութեան դօքտոր պ. Արծրունին — աւելի յայտնի իր հօր եզներայի՞ անունով և մեծ կարաւանսարաներով, քան թէ գրականական աշխատանքներով — ընտրուել էր խմբագիր — հրատարակող այդ նորածին լրագրի, բայց Մշակը, կարելի է ասել, ունէր կազմակերպուած խմբագրութիւն մօտ տասը հոգուց բաղկացած, որոնց ինքը պ. Արծրունին անուանում է բարեկամների մի փոքրիկ խումբ: Այս բարեկամները, ես կ'ասեմ գլխաւոր աշխատակիցները՝ իրանց բանը հասկացող մարդիկ լինելով՝ գործում և գրեթէ հսկում էին լրագրի հրատարակութեանը, որպէս զի հայ հասարակութեան, ժողովրդի կեանքին համարեա՛ թէ բոլորովին



անճանօթ, չը տեսուած մարդը՝ պ. Արծրունին,  
սխալներ չ'անէ, եթէ ոչ եւրոպական մտքերի  
(հրմ) քարոզելու, արապայտելու մէջ, գոնէ  
հայոց լեզուի գրութեան, ձևերի գործածու-  
թեան մէջ: Պատմում են, որ երբ պ. Արծրունին՝  
ճանօթանալով արևելեան լեզուների այն ժա-  
մանակուայ Եգէնզօր» (գրաքննիչ) հանդուցեալ  
Ղայիթմագեանի հետ, խօսել է Մշակ մտադրուած  
լրագրի հրատարակութեան մասին՝ նա իսկոյն  
այս հարցն է առաջարկել ապագայ խմբագրին՝  
ասացէք խնդրեմ, մի՞թէ դուք այնքան տիրա-  
պետում էք հայոց լեզուին, որ յանձն էք առ-  
նում մի լրագիր հրատարակել: Այն ժամանակ  
դեռ ևս իրան համեստ ցոյց տուող դօքտօրը  
պատասխանում է, որ թէև ինքը այնքան չէ  
տիրապետում իր մայրենի լեզուին, բայց իրան  
չըջապատում են այնպիսի մարդիկ, որոնք ար-  
դէն յայտնի են հայոց գրականութեան մէջ:  
Սա կարող էի յիշել այստեղ այդ պարտնների  
անունները, բայց լռում եմ՝ պատուելով մանա-  
ւանդ նրանց համեստութիւնը, որ գուցէ շէր-  
թոյլ տայ ինձ այդ բանը անել:  
Ինչ և իցէ Մշակը սկսեց երևալ 1872-ից  
և մենք, որպէս ճշմարտութեան բարեկամ, պէտք



է ասնք , որ շատ կողմից գեղեցիկ էին այդ  
լրագրի առաջին տարիների համարները, որոնք և  
իրանց կազմութեամբ, արտաքին գեղեցութեամբ  
համարեա՛ թէ բոլորովին նոր երևոյթ էին կազ-  
մում մեր այստեղի հայ լրագրութեան մէջ: Ան-  
տարակոյս չը պէտք էր մի տռանձին հնարագի-  
տութեան տէր մարդ լինել, որ՝ աչքի առջև  
ունենալով եւրոպական ու մինչև անգամ ռու-  
սական լրագիրները, դժուար չը լինէր նմանեցնել  
նրանց, բաժանել կամ դասաւորել լրագրական  
նիւթերը հետեւեալ կարգով՝ Առաջնորդող յօդ-  
ուած, ներքին ու Արտաքին տեսութիւն, Յէ-  
լիէտօն և այլն: Եւ կամ գրել օրական՝ կենդանի  
հարցերի մասին այնպիսի յօդուածներ, ինչպիսի  
որ այն լրագրների մէջ էին գրվում, ի հարկ է  
օրքան այդ հարցերը յարմար կը լինէին տեղա-  
կան պայմաններին և օրքան գրողն էլ շնորհք  
կունենար արտայայտելու, արծարծելու այս  
կամ այն առաջարկութիւնը, միտքը, խնդիրը և  
այլն: Մշակի խմբագրութիւնը, ինչպէս ասեցի,  
բաղկացած, կազմակերպուած լինելով այնքան  
անձներից՝ բաւական ժամանակ ունէր մտածելու,  
մշակելու, գեղեցկացնելու իր շարաթաթերթի  
համարը: Խմբագրութիւն կազմող պարոնները ի



հարկ է զբաղում էին և ուրիշ գործերով, որպէս զի ապահովացնեն իրանց նիւթական կողմից... Միայն խմբագիրն էր, որ իր հօրից ամսականը ստանալով՝ կարողանում էր զբաղվել իր սեպհական բնակարանում՝ յատկապէս միայն Մշակով: Նա այնպիսի սաստիկ, բացառիկ սիրով սիրեց այդ լրագիրը և հետզհետէ բանը այնպէս տարաւ, որ բոլոր գլխաւոր աշխատակիցները ստիպուած էին կամաց կամաց սառչել, յետ քաշուել և վերջերում բոլորովին հեռանալ: Այսպէս մեր պատուելի դօքտօրը իր Մշակ լրագիրը շինեց ոչ թէ «հասարակական օրգան», ինչպէս որ ինքը ասում էր նորերումս, այլ սեպհական անճնական թերթ:

Քանի որ պ. խմբագիրը դեռ ևս նոր մարդ էր, քանի որ գրելու պաշարը գլխից չէր սպառուել, քանի որ դեռ՝ այնքան յոյս չը դնելով իր մեծ ընդունակութեան վրայ, կարդում, օգուտ էր քաղում զանազան հեղինակների գրուածներից, չը նայելով իր յամառ բնաւորութեանը, լսում էր իր շրջապատողներին, հետևում էր նրանց խորհուրդներին և զանց չէր առնում նրանց ցոյց տուած օրինակները: Մի ամբողջ շաբաթուայ ընթացքում հեշտութեամբ կարող էր պատ-



րաստել մէկ կամ երկու փոքր ի շատէ օրինաւոր  
յօդուած, որ ինչպէս և միւս գրուածները,  
ամբողջ խմբագրութեան համաձայնութեամբ ու  
հաւանութեամբ անցնում էր տպագրութեանը:  
Ահա՛ անշուշտ այս էր պատճառը, որ Մշակը իր  
հրատարակման առաջին տարիները բաւական  
լաւ լրագիր էր: Նրանում գրվում էին օրական,  
հարկաւոր հարցերի մասին յօդուածներ, երե-  
ւում էին թղթակցութիւններ Կովկասի, Ռու-  
սաստանի ու մինչև անգամ Եւրոպայի զանազան  
կողմերից: Պատահում էին նրանում շատ անգամ  
բաւական ազատամիտ քաղաքական յօդուածներ  
այս ինչ կամ այն ինչ եւրոպական պետութեան  
հարցերի մասին և մինչև զանազան երկիրների  
մշակ դասի գրութեան, վիճակի բարուղման վրայ  
և այլն, և այլն: Մի խօսքով Մշակը հետաքրքիր  
լրագիր էր և հետաքրքրում էր շատերին. այն-  
պէս որ նորա բաժանորդների թիւը առաջին  
տարի 500 լինելով՝ երկրորդ, երրորդ և չորրորդ  
տարիները 700-ից էլ անցաւ\*: Իսկ այս թիւը  
քիչ չէ մի հայ լրագրի համար:

---

\* «Մշակի» սլոգանային բաժանորդների թիւը մեզ յայտ-  
նի չէ. Անշուշտ սրանից պակաս կը լինի: Պ. Արծրունի



Այս պատճառով զամենայի չէ ուրեմն, որ Մշակը համակրութիւն էր գրավում մեր հասարակութեան մանաւանդ այն շրջաններում, ուր խմբագրի փոխ առած ազատամիտ խօսքերն ու «Փռագնները» հեշտութեամբ կարող էին փոխարինել թէ յօղուածի պարունակութիւնը և թէ առաջարկած մտքի հիմնաւոր ուղղութիւնը: Ի՞նչ ուղղութեան լրագիր կարելի էր անուանել մեզանում մի այսպիսի թերթին, եթէ ոչ ազատամիտ (libérale) ուղղութեան, թէև պ. Արծրունին՝ աչքի առջև ունենալով իր լրագրի խորհրդաւոր (բայց վերջը անխորհուրդ) վերնագիրը Մշակ, այսինքն բանուոր, աշխատող, քրտնող՝ գուցէ դրանից աւելի որոշ, աւելի աչքի զարնուող գոյն կուզենար յատկացնել իր ուղղութեանը, ի հարկ է մանաւանդ առաջին տարիներում: Մշակը ազատամիտ ուղղութեանը կից էր նոյնպէս բացասական — յարձակողական բռնատրութիւնը: Եւ նա՝ որպէս առաջնակարգ ու ազատամիտ լրագիր, չէր կարող ի հարկ է չը մտրակել, չը յարձակվել մեր հասարակութեան

---

մոռացել է արդէն իր առաջուայ սովորութիւնը՝ — ամեն մի համարում ցոյց տալ իր լրագրի բաժանորդների աւելանալը՝



Թոյլ, տկար երևոյթներէ վրայ, ինչպէս հայոց անյաջող մամուլի վրայ, երեսուն տարուայ համալսարանական ծոյլ, անգործունեայ հայ երիտասարդութեան վրայ, իր նշանակութիւնը չը հասկացող, ոչինչ մտաւոր — հոգևոր օգուտ չը տուող մեր հոգևորականութեան վրայ (այս բանում Մշակը նմանվում էր Հիւսիսահայլին) վատ կազմակերպուած հայ դպրոցների վրայ, վաճառականների, կալուածատէրերի ու սրանց նման ճ'նշողների հարստահարութեան, վերջապէս հին սերունդի վրայ: Յարձակուելով այսպէս Մշակը հայերի այս բոլոր տկար, քնասակար կողմերի վրայ, եթէ չէր առաջարկում գործնական միջոցներ այդ հասարակական չարիքը բարոքելու, գոնէ կարողանում էր տրձագանք ու համակրութիւն գտնել շատերի մէջ:

Պ. Գրիգոր Արծրունին, որպէս առաջին գերմանական դօքտօր ուսուսհպատակ հայերից (այդ ինքն է ասում) և որպէս ներկայացուցիչ գերմանական հայ ուսանողների՝ փառաբանում և երկինք էր բարձրացնում մանաւանդ յաղթող Գերմանային, որին եւրոպական միւս բոլոր երկրներից աւելի բարձր էր դասում ամեն բանի մէջ: Այդ փիլիսոփայական աշխարհի ու այդ-



տեղ ուսում առած կամ առնող հայ երիտա-  
սարդների անունով սպառնում էր նա շատերին՝  
ցոյց տալով «Գերմանական դրօշակը» (?) \*

Մշակ այս բոլոր յարձակումները անմեղ  
չ'անցան: Ռուսաստանում կրթուած, ուսում ա-  
ռած զանգաղ հայ երիտասարդներ \*\*, որոնք  
գուցէ երբէք չէին ուզենայ բաժանվել ու յետ  
մնալ միւս թէ եւրոպական և թէ ուրիշ հայ  
ուսանողներից՝ կարծես զարթեցան, աչքերը  
բաց արին և երկիւղ կրելով ամեն մի նոր իրանց  
մրցող — թշնամուց, հաւաքուեցան և կազմե-

---

\* «Գերմանական դրօշակ» խօսքը պ. Արծրունին շատ անգամ  
գործ է ածել եւ հիմալ էլ է գործածում: Ես չը գիտեմ, թէ  
ինչ է նշանակում այդ: Քայնի անգամ նոյն իսկ Գերմանիա-  
յում ուսում առած հայ երիտասարդները, մինչեւ անգամ բօր-  
տօրները, տարելուսել են իմանալու դորա նշանակութիւնը  
եւ միմեանց հարցրել ու հարցնում են «ինչ է այդ դրօշակը»  
Իսկ եթէ ինձ հարցնեն, թէ ինչ է նշանակում «Ֆրանսիական  
դրօշակը» ես կը պատասխանեմ, որ սա նշանակում է ազա-  
տութիւն, առաջադիմութիւն, զիտութիւն եւ անկեղծութիւն...

\*\* Այն ժամանակ, որպէս եւ այժմ, դրանցից մի քա-  
նիսը գործում էին ինչպէս հայ ուսումնարաններում, օրինակ  
Ներսիսեան դպրոցում եւ այլն, նոյնպէս եւ մեր լրագրու-  
թեան մէջ: Վերջապէս մարտի 1904 թ. մ.



ցին իբր թէ մի պահպանողական կուսակցու-  
թիւն: Ահա այդ կուսակցութիւնն է, որ իր օր-  
գան Մեղու Հայաստանի անունով կոչվում է ամեղ-  
ուական խումբ, որ իր կազմութեամբ ու գո-  
յութեամբ պարտական է ոչ թէ իր սեպհական  
«ինիցիատիվին», իր ունեցած հասարակական և  
ուրիշ սկզբունքներին, այլ աւելի Մշակի սաստիկ  
յարձակմունքներին և սորա բացասական բնաւո-  
րութեանը:

Այսպիսի յարձակմունքների ու պաշտպա-  
նողութեան առիթով բնականաբար պիտի սկը-  
սուէր հետաքրքիր պոլէմիկ այդ երկու լրագր-  
ների մէջ: Այդպէս էլ եղաւ:

Մի մեղուական իրաւարան, որի պաշտպա-  
նողական ծառերը, ինչպէս ասում է ТИФЛ.  
ВѢСТН. լրագիրը, պահվում են դիւանատան մէջ  
(արխիւ) ապագայ սերունդի համար, ահագին,  
երկար, երկու տպագրական թերթի վրայ տպած  
մի յօդուածի մէջ խօսելով հայոց մամուլի վրայ,  
ուրիշ բաների հետ յայնտում էր և այն կար-  
ծիքը, թէ մինչև 1872-ը մինք՝ հայերս ունեցել  
ենք պաղարական փիլիսոփայութեան կու-  
սակցութեան լրագրութիւն (?), ինչպէս որ  
ցոյց է տալիս իբր թէ նորա «ընդհանուր պա-

րունակութիւնը . իսկ այնուհետև սկսվում է մեզանում ժողովրդական, գործնական մամուլ: Փոխանակ ցոյց տալու մեր, մանաւանդ ներկայ, պարբերական հրատարակութիւններից ստացած ընդհանուր տպաւորութիւնը, նրանց որոշող բնաւորութիւնը, ծանր ու բարակ քննում էր այս կամ այն յօդուածը, նախադասութիւնը, մինչև անգամ խօսքը և վերջապէս գալիս էր իբր թէ այն նոր եզրակացութեան, որ Մշակի ու Մեղուի նման քաղաքական ու գրականական լրագրիւնները պէտք ունենան «էնցիկլօպէդիական» և ոչ թէ «մասնագիտական» պարունակութիւն . . . 9. «Բասպարը» եթէ իմանար, կասէր՝ «էհ, վրնց կուլի . . . ղուրթ ին ստում»:

Առաջին երկու, երեք տարիները այն աստիճան սաստկացաւ այդ չար պօլէմիկը այդ երկու լրագրիւների՝ — Մեղուի ու Մշակի մէջ, որ քիչ էր մնում՝ ամեն բան արհամարելով, անցնէին քաղաքավարութեան բոլոր սահմանները: Մոռանալով արդէն պօլէմիկի բուն էութիւնը, գրականութեան մէջ ընդունած քաղաքավարի ձեւերը, մեր գրողները սկսեցին յարձակվել միմեանց անձնավորութիւնների վրայ: Մանաւանդ Մեղուի այս բանի մէջ համարեա թէ հասաւ շէրկու



էսի սիւներին և սկսեց ծաղըել պ. Արծրունու լմամնական արտաքին պակասութիւնները: Այդ ժամանակ ի զուր չէր նախատում դրանց ТИФЛ, ВЪСТН. լրագիրը ասելով՝ թէ հէնց այն ըուպէին, երբ Եւրոպայում հազար ու մէկ, ուշադրութեան արժանի, խրատական անցքեր են պատահում, երբ Ֆրանսիայում փոխում են հանրապետութեան նախագահին և մանաւաղ լէզիտիմիստներին կուսակցութիւնը՝ քաղաքական շարժումներ անելով, բուրբօնեան սպիտակ դրօշակը ձեռքին՝ ուզում է բազմեցնել կոմս Նամբօրին Ֆրանսիայի արքայական կործանեալ գահը, և երբ հէնց մեզ մօտ էլ հարկաւոր, առաջնական, օրական անթիւ հարցեր կան քննելու, զարթեցնելու, ուսումնասիրելու՝ դուք մեծ մասամբ փոխադարձ հայհոյանքներով էք զբաղուած: Սակայն անմեղ էր այս իրաւացի նախատինքն ու մի և նոյն ժամանակ բարի խորհուրդը — Նրանք դարձեալ շարունակում էին իրանց գեղեցիկ, հիանալի պօլէմիկը:

Սեղան պաշտպանելով հայոց ազգային եկեղեցին, որի սկզբունքները ինքը Մշակ էլ միշտ սուրբ էր համարում, ախոյեան հանդիսացաւ նոյնպէս իր նշանակութիւնը չը հասկացող հայ



Տոգևորականութեան: Ահա սորա վրայ էր իրաւաւմբ աւելի մատնացոյց անում Մշակու ֆոխանակ մի որ և է կուսակցութեան հասարակական օրգան լինելու Մեշուս՝ տեսնելով շքամին օրտելից է փշումն, շուտով դարձաւ Թիֆլիսի այն ժամանակուայ առաջնորդ Մակար Արքեպիսկոպոսի օրգան: Մշակը՝ տեսնելով որ համալսարանական երիտասարդները — Մեշուսի աշխատակիցները — հասարակական չափից դուրս մեծ նշանակութիւն են տալիս հայ հոգևորականութեանը, ազդի կարիքներին անհամապատասխան հոգևորականութեանը, անուանեց նրանց կղերական, յետագէմ կուսակցութիւն:

Ս՛ենք՝ հետևելով այն յայտնի, հիանալի ասացուածին, — որ ամեն անաչառ, անկողմնապահ մարդու դէպիզը կարող է լինել — թէ ատուք զկայսերն կայսեր զԱստուծոյն Աստուծոյ, կ'ասենք, որ Մշակ իր հրատարակման առաջին տարիները՝ համապատասխան լինելով իր լրագրական կոչումին, շատ անգամ բարձր էր Մեշուսի: Սորա աշխատակիցները, չը նայելով իրանց բարձրագոյն, համալսարանական ուսմանը, կրթութեանը, չը գիտէին յարմար կերպով առաջ տանել լրագիրը, վերջապէս ձեռքնալիստ, սպուր



լիցիւտա կոչուած մարդիկ չէին : Այն ինչ  
դպրոցական գործում, որի մասին լսուե-  
լու տեղը չէ այստեղ, «մեղուականները» ցոյց  
են տուել մի տեսակ առաջադիմութիւն: Սրի-  
նակ կարող է լինել, եթէ ոչ ներսիսեան դըպ-  
րոցը, որ դեռ էլ չի հին, առուաինական սիստե-  
մով է շարունակուում, գոնէ Գայանեան օրիորդա-  
կան ուսումնարանը, որ կատարելապէս նրանց  
գործունէութեան արդիւնքն է: Իսկ մի մարդ չէ  
կարող լինել լաւ վարպետ հիւսն ու մի և նոյն  
ժամանակ հմուտ դերձակ:

«Մեղուականները» իրանց գործունէու-  
թեամբ, իրանց օրգանով իսկապէս ոչինչ որոշ,  
յատկանիշ ուղղութիւն չեն ներկայացրել, չեն  
ցոյց տուել: Նոքա, աւելի կրաւորական մարդիկ  
լինելով, նայել են գործին այնպէս, ինչպէս կը  
վարվուէր ծառայող — պաշտօնեան, որ իր սահ-  
մանափակ գործով զբաղուելով միայն, ամսական  
ուճիկը սովորաբար իր ժամանակին է ստա-  
նում: «Մեղուականները» մի առանձին, յայտնի,  
տաք եռանդով չեն գործել կեանքում, հետե-  
ւաբար և ի զուր անուանել նրանց կղե-  
րական, պահպանողական և ուրիշ անուններով  
ոչինչ նշանակութիւն չունի: Այս բանը երևում



է մանաւանդ այն հանգամանքից, որ հէնց Մակար արքեպիսկոպոսը հեռացաւ Քիֆլիսի առաջնորդութենից, Մեղուն խկոյն դարձաւ հակակղերական և սկսեց յարձակվել ոչ թէ միայն մեր հոգևորականութեան վրայ առհասարակ, այլև մինչև անգամ մեր եկեղեցական բարձր պաշտօնեաների վրայ՝ քննելով նրանց այս կամ այն վարմունքը իրանց ստորադրեալներին վերաբերեալ: Այսպիսով Մեղուն դիպչում էր հոգևորականութեան մէջ ընդունուած երարխական դիսցիպլինային: Սրանից էլ աւելի ազատամտութիւն երբէք չեն ունեցել մեր հայ լրագիրները: Ուր մնաց ուրեմն Մեղուի պաշտպանողական ու կղերական ուղղութիւնը, պէտք է հարցնել հիմայ, ոչ թէ ամեղուականներին, որոնք ոչինչ ազատ պատասխան չեն կարող տալ, չընդունելով այդ ուղղութիւնը, այլ նոյն իսկ պ. Արծրունուն:

Այսպէս շարունակվում էր գործը երեք, չորս տարի, մինչև որ Մշակի խմբագրից հետզհետե հեռանում էին իր լրագրի լաւ աշխատակիցները: Պ. Արծրունին՝ չը կարողանալով կատարելապէս համաձայնվել ու մտերմանալ իր ոչ մի բարեկամի հետ, բոլորովին մենակ մնաց և վերջա-



պէս ստիպուեցաւ լռել: Նա այլ ևս ոչինչ չէ յիշում իր լրագրում Մեղուի մասին և բացի իրանից գրեթէ ամենքին աւելի կամ պակաս գաղտնի, յայտնի մեղուական է համարում. . . Նրա յօդուածները սկսեցին անձնական, Եսական գոյն ստանալ և հակառակել առաջուայ գրուածներին, այնպէս որ պարագայներն ու ասօճիզմները սովորական բան դարձան մեր գիտնական դժբտորի գրչի տակ: 1876-ի վերջերում, երբ մի պարոն մօտիկ ծանօթանալով նորա հետ հարցնում էր նրանից, թէ ինչո՞ւ էք այդքան պարագայներս անում, նա պատասխանում էր, որ ուզում է, հետեւել պ. Պրուդօնի օրինակին:

Վերջին ժամանակները, Մշակի օրինաւոր աշխատակիցների հեռանալուց յետոյ՝ պիմուսպիստօ — սեմինարիստօ համբակ պատանիներն ու ամեն տեսակ տերացուները սկսեցին մեծ գերխաղալ և մասնակցել Մշակում. . . Թէև, ճշմարիտը խոստովանած, այս մի նոր բան չէր մեր հայոց լրագրութեան ու գրականութեան մէջ, որովհետև ոչ թէ միայն Մշակում նոր պիտի ցոյց տային դրանք իրանց հիանալի շքնորհքը, իրանց տղայական, կոպիտ օգիտութիւնը (ignorance crasse), այլ և վաղուց ար-



դէն մեր պարբերական միւս հրատարակութիւնների՝ ինչպէս Մեղուի, Դպրոցի, Հայկական Աշխուհի և ուրիշների թերթերը զարգարվում էին իրանց խակ, երեկայական գրուածներով: Այս ցաւալի երևոյթի առիթով ես՝ Մշակում տպուած շատ մականեր իմ բարեկամինս վերնագրով յօդուածներինցս մէկի մէջ, գրեցի հետևեալ տողերը, որոնց, ինքը պ. Արծրունին՝ ի հարկ է իրաւացի գտնելով, տպեց իր լրագրում: Ահա՛ այն խօսքերը, եթէ միայն թոյլ կը տաք առաջ բերել՝

„ . . . Տեսնում ես, բարեկամ, որ գրքերինց  
„ հասարակական կարծիքինց, գիտնական մարդկանցինց, ուսումնական հիմնարկութիւններինց և  
„ զարգացնող ու քաղաքակրթող հապար ու մէկ  
„ միջոցներինց զուրկ հասարակութեան մէջ լրագրին ահագին ու մի և նոյն ժամանակ ծանր,  
„ դժուար դեր է վիճակվում կատարելու: Կրաս  
„ գրութիւնը՝ մի այսպիսի մեծ, հասարակական  
„ դաստիարակող նշանակութիւն ունենալով հաս  
„ յերի համար, պէտք է աշխատէ, որքան կա  
„ րող է, զգոյշ վարվել իր դործում, եթէ ոչ . . .

„ Խայց արդեօք վարվում է նա այնպէս,  
„ ինչպէս պահանջում է իր պարտաւորութիւնը  
„ — Զը գիտեմ, դու ինքդ դատիր. ես միայն



„կը խօսեմ: Արաց ժողովրդական մի առած  
„ասելով՝ թէ , ,անտէր եկեղեցուն պատանաներն  
„են տիրապետում:“ , շատ իրաւացի միտք է  
„յայտնում: Այդ ուղիղ ու խելօք առածը ու  
„զում է ասել, թէ ամեն բան, որ անտէր է,  
„որ հսկող, պաշտպանող, իրան արժանի մար-  
„դիկ չունէ, անպատճառ բաղդախնդիր պատա-  
„նայ — էակաների ճանկն ընկնելով՝ յափշտակ-  
„վում է նրանցից և անշուշտ դէպի չարն է  
„գործ դրվում:

„Այդ երևոյթը կարող է յարմարվել և  
„մեր լրագրութեանը: Մեր լրագրութիւնը, թէև  
„իր ոչ մի տեսակ աշխատակցին կամ թղթակցին  
„չէ վճարում, բայց այնքան ազատութիւն օժնէ,  
„որ ամեն մարդ, ով կուզէ լինի մի և նոյն է,  
„միայն թէ գրիչը ձեռքում բռնել գիտենայ օ-  
„գուտ քաղելով թէ այդ ազատութենից և թէ  
„վերոյիշեալ անտէրութենից, դուրս կը գայ  
„լրագրութեան ասպարէզ և՛ իր քնքոյշ գլխից  
„բարակ մտքեր դուրս տալով, յօդուածներ կը  
„շարադրէ մեր խեղճ, անկիրթ հասարակու-  
„թիւնը դաստիարակելու համար: Bravo! դրա-  
„նից էլ հեշտ բան: Լրագրական, գրականական  
„ազատութիւն է, ինչ ուզում էք արէք, Վօն-



„տորը չը կայ, հասարակական մտրակող կար-  
„ծիք չը կայ : Ո՞վ է հարցնում, թէ ի՞նչ մարդ  
„այդ գրողը, որ գուցէ աշխատում է իր դրուած-  
„ներով անբարոյականացնել հասարակութիւնը\*  
„որ առիթ է լինում տգիտութեան թանձրա-  
„նալուն, որ սուտը, կեղծը, անալիտանը՝ ճշմար-  
„տութեան, գեղեցկութեան և լոյսի տեղ է ու-  
„ղում ծախել, ո՞վ արդեօք — ոչ ոք : Ահա՛  
„համարեա՛ այդպիսի դրութեան մէջ է, ընկեր,  
„այստեղի ազատ մամուլը . . . և երեւա-  
„կայիր, համալսարնական (?) մարդիկ, որոնք  
„տարիներով պատրաստվել են (երագում) հա-

---

\* „Պ. Հեղինակի այս կարծիքի հետ մենք չենք կարող  
համաձայնվել: Նախ՝ որ դեռահաս զրջից քոլխած յօղուածները  
չնչին աղղեցութիւն ունեն հասարակութեան վրայ — հազիւ  
թէ կարողացվում են, իսկ երկրորդ, նոյն իսկ մամուլը ինքն  
իրան „կօնարօլ“ է անում. — զրողների պօլէմիկը եւ նոցա  
մտքերի փոխադարձ հակառակութիւնները մաքրում են մամուլը  
իրանում մտքրած անալիտան կեդտից: Ծանօթ. „Օճօրք“  
նուս լրագրի խմբ. :

Իմ հայ ընթերցողը, արդէն կարդացած լինելով զրրոյկիս  
ամբողջ վերնագիրը՝ ի հարկ է չի զարմանայ անելով, թէ ինչ  
գործ ունէ այստեղ „Օճօրք“ նուս լրագիրը իր նկատու-  
ղութեամբ: Այս իմ ամբողջ յօղուածը — „Հայոց մամուլը Ռու-



„սարակութեանը առաջնորդելու, հաւանում են  
„այդպիսի աղատութիւնը, որ առաջադէմ, հաս-  
„կացող, խղճմտաւոր մարդկանց բառարանում  
„նշանակում է խանգարումն ճշմարիտ, մաքուր  
„ազատութեան:

„Արագրութեան, գրականութեան, հասա-  
„րակական դաստիարակութեան համար պատ-  
„րաստուած մարդիկ դժբաղդաբար հեռանում  
„կամ անմիջապէս չեն մասնակցում ընդհանուր,  
„նուիրական դործերում և ասպարէզը թէ բթա-  
„միտ, կեղծաւոր, եզուխտ ինտէլիգենցիային և  
„թէ սրանից զրդած համբակ — տղաներին է  
„մնում:

---

պատանում եւ Կովկասի մէջ՝ վերնագրով—յատկապէս գրել,  
պատրաստել էի նոյն իսկ այդ լրագրի խմբագիր պ. Նիկո-  
լածէի խնդիրքով ու ցանկութեամբ „ՕՃՅՕՐԵ-ի“ համար,  
ուր եւ լոյս տեսաւ մի քանի փոփոխութեամբ: Ես ցանկա-  
ցայ, որ սա հայերէն եւս լինի: Այժմ, մի փոքր աւելի յրա-  
ցնելով յօդուածիս հայկական բնագիրը՝ հրատարակում եմ ա-  
ռանձին բրօշուրով: Անաչառ կերպով խօսելով այստեղ մեր  
մամուլի մասին առհասարակ եւ „Մշակի“ վրայ մասնաւո-  
րապէս, ես հանդիսանում եմ որպէս երրորդ անձն, որպէս  
ազատ քննող եւ ոչ թէ որպէս „Մշակի“ նախկին . . .  
„մշտական“ աշխատակից . . .



„Այդ համբակ — տղաներն են, որոնք ամեն բանի վճիռը հեշտութեամբ կարգում են  
„հայ հասարակութեան գլխին: Ոչ մի տեղ չ'եղած, ոչինչ գիտութիւն, ուսում, չը ստացած, ոչինչ բան սիստէմարար չը լսած, չը տեսած, չը քննած, քաղաքակրթուած հասարակութեան կեանքի հոտը չ'առած, (բաւահան է միայն որ հայերէն գիտեն, բայց այն էլ գիտեն արդեօք)  
„համարձակվում են ամեն հարց, ինչ տեսակ կողմէ լինի՝ գրականական, քաղաքական, գիտնական, կրօնական, հասարակական, տնտեսական և մանաւանդ մանկավարժական, այր, մանաւանդ մանկավարժական (!) և այլն վրձուել, քննադատել և, որ ամենավատթարն է, միշտ կրիտիկական կէտից նայել: Ոչինչ դրական արդիւնք չես տեսնի այստեղ. բոլորը կրիտիկական, բացասական է, այն էլ յիմար, տգէտ, յետադէմ բացասական: Իսկ այսպիսի քցաւալի երևոյթի անունը ամեն հասկացող հասարակութեան մէջ անազնուութեան, գրականական շռայլանութիւն է:

„Ես չեմ ուրանում, սիրելի, որ բնական տաղանդներ, թէև առանց շատ բարձր զարգացման, ամեն ազգի մէջ առաջանում, երևում



„են, սակայն այդ բացառիկ երևոյթը երբէք  
„օրէնք չէ կազմուած Բայց մեզանում միջնակարգ  
„դպրոց աւարտողը (բայց այն էլ աւարտելէ, Սաս-  
„ուած գիտէ) արդէն ինքն իրան տաղանդ է. բա-  
„ցառութիւն ասես չը կայ: Նա է այն համբալ—  
„տղան, որ ամեն բան գիտէ և վճռում է, որ  
„խրախուսվում է բթամիտ, շահամոլ, համալ-  
„սարանական (1), ժողովրդին յեռադէմ ծանա-  
„պարհով տանող պարոններին, նա է, որ հա-  
„սարակական անտէրութենից օգուտ քաղելով  
„յայտնում է լրագրում խակ, երեխայական,  
„ծուռը մտքեր, որոնցով պիտի դաստիարակուի  
„հայ հասարակութիւնը: Երանի մեզ:  
„Բայց ի՞նչ անես, դորա և դորա նման  
„յանդուզն երիտասարդ — աղաների մեղք չէ  
„այդ: Ոչ, նոյն իսկ դրանց անցեալ և ներկայ  
„շատլատանս առաջնորդ — խրախուսողների  
„մեղն է: — Խեղճ տղաները՝ առաջ փափուած  
„լինելով օւսումնարանում, ենթարկուած են եղել  
„անկիրթ վարձապեհաների բռնակալ ու անբա-  
„րոյական ազդեցութեանը, համարձակութիւն  
„չեն ունեցել համեստարար զարգանալու, պո-  
„երես միշտ ստրկական, իսկ սրտում միշտ  
„վրէժխնդիր զգացմունք են ցոյց տուել դէպի



„իրանց կուպիա դաստիարակիչները, որով և  
„դպրոցական կեանքի առաջին փոքրիկ շրջանի  
„ազդեցութիւնը թունաւորել է դրանց: Իսկ հի-  
„մայ, արդէն իրանց ազատ զգալով կորցրել են  
„բոլորովին համեստութիւնը և, ուսումնարանի  
„ձեռնող դիւցիպլինայից հեռացած՝ սկսում են  
„յանդգնաբար խօսել և մինչև անգամ հերքել  
„այն, ինչ որ չեն հասկանում: Տգիտութիւնը  
„խառը լըբութեան ու տխմար յանդգնութեան  
„հետ, ահա՛ հետևանք դոցա դպրոցական գե-  
„ղեցիկ դաստիարակութեան: Ահա՛ դրանք են,  
„որ առաջնորդում են մեծ մասամբ հայ հասա-  
„րակութեանը մտաւոր ու բարոյական գոր-  
„ծում՝ — լրագրութեան, դրականութեան մէջ  
„և հասարակական զարգացման ասպարէզում,  
„և այն էլ ի՛նչ տեսակ ինքնահաւան տղայա-  
„կան մեծամտութեամբ: Եւ այս անմխիթար,  
„անձոռնի երևոյթով, գրականական այս անա-  
„բրօնիզմով՝ երեսուն տարուայ համալսարանա-  
„կան մեր ողորմելի հայ երիտասարդութեան  
„մեծ մասին ենք պարտական, որ՝ գիտութիւնը,  
„ուսումը արտաքին ձևերով ցոյց տալով, իր  
„սահմանափակ, եսական շահերին ծառայեցնե-  
„լով, առիթ է տուել հայոց ընկած կեանքի

„վատթարանալուն և ոչ թէ՝ առաջադիմու-  
թեան, աշխատանքի ու զիտութեան գորշակը  
„ձեռքին, պատերազմել է ամեն վատ, վնասա-  
կար ու թշուառ երևոյթի դէմ, ժողովրդին  
„փչացնող գործի դէմ: Շնորհակալ ենք . . .

„Լճգային և հասարակական կրթութեան  
„դաւաճանները թող շարունակեն այդպէս գոր-  
ծել, փոյթ չէ: Սա ուրախ եմ, որ հակառակ  
„ուղղութեամբ գործող մարդիկ էլ կան, որոնք՝  
„ընդդիմադրութիւն կազմելով այդպիսի նենգա-  
„միտների դէմ, նպատակ ունեն ժողովրդի ճշմա-  
„րիտ առաջադէմ կրթութեան ու երջանկու-  
թեան համար աշխատելու: \* . . .

«Մշակեաններին կուսակցութիւնը, որի մա-  
սին մինչև անգամ պ. Կուտուլին էլ խօսեց Ֆր-  
րանսիական «Temps» նշանաւոր լրագրում, նմա-  
նեցնելով այդ երևակայեալ կուսակցութեան  
գլխաւորին — պ. Գր. Արծրունուն, կրօնական  
երևելի օւէֆօրմատօր, ճարտասան Հիասանտ  
հօրը, իսկապէս ոչ մի ժամանակ զոյութիւն չէ

---

\* Տես „Մշակ“ 1877 տ. № 53-ի իմ յօդուածը „Նա-  
մակներ իմ բարեկամին“:



ունեցել: Իսկ թէ մի տեղ երևացել է այդ կուսակցութիւնը՝ այդ տեղը պ. Գրիգոր Արծրունու Փանտազիան է: Միայն հեռու, սօթը սարի՝ ետև բնակուողները\* կարծում էին և կարծում են; թէ աշխարհիս երեսին ահակեանք մի ամբողջ կուսակցութիւն կայ և դորան համակրելով պահպանում էին և հիմայ էլ մասամբ պահպանում են պ. Արծրունու սեպհական, անձնական օրգանը . . .

Արդէն յայտնի է, որ Մշակ 1877-ին շաբաթը երկու անգամ էր հրատարակվում: Այսպիսի երկու թիւը՝ այսինքն հայ լրագրի շաբաթը երկու անգամ երևալը, թէև առաջին անգամն էր ռուսահայատակ հայերի լրագրութեան մէջ, բայց ի հարկ է դրականական մի առանձին անցք չէր կարող համարվել . . . Գործը շարունակվում էր այնպէս, ինչպէս նկարագրեցինք: Արուպայում և մանաւանդ Գերմանիայում ուսում առած հայ երիտասարդներից շատերը թէ արդէն վերադարձել և թէ վերադառնում էին իրանց հայրենիքը: Ընթերցողին յայտնի է, թէ ինչպէս պ.

---

\* Դրանցից մէկն էլ ես էի փարիզում եղած ժամանակս

Արծրունին գովում էր գլխաւորապէս գերմանական ուսումը, կրթութիւնը, որի անունով, ինչպէս վերեւ էլ ասեցինք, սպառնում էր շատերին: Անկասկած ամեն մարդ կարծում կը լինի, որ Մշտէ խմբագիրը՝ տեսնելով իր շուրջը այդքան հայերիտասարդներ՝ ուսում առած, կրթուած հէնց իր բերանով գոված Գերմանիայի և Եւրոպայի մէջ, պիտի մտերմանայ և միանայ դրանց հետ՝ ընդհանուր գործը առաջ տանելու համար: Եւ, եթէ մեր հասարակութիւնը այն սատիճան զարգացած է, որ կարիք է զգում մի առաջադէմ, ժողովրդի էական պահանջները հասկացող, ազատամիտ կուսակցութեան կազմուելուն, ունենալուն իր մէջ, միանալ այդ բոլոր եւրոպակիրթ երիտասարդներին, կամ գոնէ դրանցից մի քանիսի հետ, և հետեւաբար կազմակերպել մի օրինաւոր կուսակցութիւն: Բայց ոչ . . . Հէնց այսօր էլ կարելի է բուռնիան թուով հաշուել թէ Ռուսաստանում և թէ Եւրոպայում ուսում առած հայ երիտասարդներ, որոնք ստիպուած զանազան խառը հանգամանքներից և շնորհակալ լինելով մեր մեծապատէ խմբագրներին, դրեւ թէ ոչինչ չեն անում մեր լրագրութեան ու զրահանութեան համար: Զրնայելով այս երիտասարդների



մասնագիտական համութեանը և մինչև անգամ ազատամիտ ձգտումներին, կարծես անկարելի է երևում, ինչպէս երևեցաւ էլ, որ մեր պատուելի խմբագրների, մանաւանդ պ. Արծրունու, և սրանց մէջ, մի տեսակ բարոյական կապ, ազնիւ, սուրբ յարաբերութիւն գոյանայ՝ ընդհանուր, նուիրական գործը միաբան առաջ տանելու համար, միասին մի յայտնի նպատակին դիմելու, ձգտելու համար: Ի հարկ է, եթէ միայն ընդունուած ենք, որ կան, գոյութիւն ունեն և շատերի համար պատրուակ, ցնորք չեն այդ ընդհանուր գործ, յայտնի նպատակ ասած խօսքերը:

Երկուսից մէկը՝ կամ Մշակի խմբագիրը ճշմարիտ գաղափարական մարդ է, որի նմանը չը կայ մեզանում, — հետեւաբար և նա ստիպուած մենակ է մնում, կամ եթէ ոչ, բացի նրանից, ովքեր էլ որ կան, ամենքն էլ տգէտ, կեղծաւոր, շահասէր, անհաշտ մարդիկ են . . . . Էլ չեմ խօսում մեղուականների մասին, որոնք՝ չը նայելով իրանց համայնարանական ուսմանը, դեռ էլի մի տեսակ ափրացուներո են մնում: Սղբա, որպէս խումբ աւելի պակաս ի հարկ է կղզիացած լինելով հասարակական կեանքում, քան թէ պ. Արծրունին իր Մշակով, նմանվում են այնպիսի ազանդ



ունեցող մարդկանց, որոնք սովորաբար խիստ են դէպի իրանց աղանդակիցների կրօնական — հասարակական պարտաւորութիւնները : Սաստիկ զգոյշ լինելով իրանց գործունէութեան մէջ դէպի ամեն մի նոր մարդ, դէպի ամեն մի նոր ոյժ, երևոյթ՝ մի և նոյն ժամանակ ինչ որ խառը օդով են շրջապատուած : Ես շատ անգամ, շատ տեղ, շատ պարոններին ասել եմ և հիմայ էլ կ'ասեմ, որ մեզ պակաս է բարոյական միացնող ոյժը, ընկերակցութեան, միաբանութեան վսեմ սկզբունքը, ... Եւ այն երիտասարդները, որոնց ես յիշեցի վերևում և որոնց էլ չեմ յիշել, կը ցոյց տան իրանց թուլութիւնը, վհատութիւնը, ծուլութիւնը, անտարբերութիւնը, եթէ սպասեն, որ այս կամ այն հայկական խումբը, (!) այս կամ այն հայ խմբագրութիւնը (եթէ միայն կայ մեզանում հայ խմբագրութիւն), հասարակութեան այս կամ այն յայտնի գործող անձը զրաւէ, հրաւիրէ նրանց ընդհանուր գործին մասնակցելու : Ընդհակառակը, եթէ նոքա անդրդուելի նպատակ են դրել իրանց խեղճ, հարստահարուած ժողովրդի, անտէր ու անպաշտպան հայ ազգի համար հոգալու, պէտք է աշխատեն, ինչպէս էլ լինի, արտայայտել իրանց կենսական ոյժերը, գործել, բան շինել, մինչև



որ կարելի լինի իրագործել հայ հասարակութեան մէջ միաբան գործունէութեան՝ այսինքն ընկերակցութեան փրկարար գաղափարը . . . .  
Սակայն շարունակենք Մշակ մասին խօսել :  
1877 տարուայ վերջերում, հէնց այն րուպէին, երբ ամեն մարդ առանձին հետաքրքրութեամբ հետևում էր զինուորական, պատերազմական անցքերին ու քաղաքական երևոյթներին, պ. Արծրունին՝ դրդած իր մի քանի ծանօթ պարոններից, յայանեց, թէ եկող տարին՝ այսինքն 1878-ին իր Մշակ լրագիրը կը հրատարակէ ամեն օր կամ, աւելի ճիշտ ասել, շաբաթը հինգ անգամ : Առաջին ամենօրեայ թերթը այտեղի հայերի մէջ անշուշտ պէտք է որ, այս անգամ գտնէ, գրականական մի առանձին «երևոյթ» կազմեր : Այս պատճառով էլ ամենքը սպասում էին, ամենքը կրկնում էին, որ Մշակը կը լաւանայ, վերջապէս կը նորոգուի : Եւ ճշմարիտ որ, դժուար էր այժմ կասկածել այդ բանի մասին : աչքի առջև ունենալով լրագրի նիւթական յաջող դրութիւնը, որ բարեկարգվել էր պ. Արծրունու նոր ստացած ժառանգական հարստութեամբ : Մենք ոչինչ գործ չունենք մասնաւոր կեանքի հետ, եթէ այտեղ յիշում ենք, որ պ.



Արծրունին Թիֆլիսի հարուստ կալուածատէր-  
րից մէկն է այսօր՝ այդ այն պատճառով ենք ա-  
սում, որ հասկացնենք, թէ ամենօրեայ թերթը  
մեզանում աւելի շուտով կարող է հրատարակ-  
վել մի հարուստ կալուածատէր պարոնի ձեռ-  
քով, քան թէ լրագրի բաժանորդներից ոտացած  
գումարով: — Այսպէս թէ այնպէս ամենքը յոյս  
ունէին, որ այս անգամ գոնէ պ. Արծրունին՝  
Ֆիզիկապէս անկարող լինելով շարունակել ամ-  
ենօրեայ հրատարակութեան դժուար ու քրն-  
քոյշ գործը և յողթելով իր յամառ, անհաշտ,  
հիւանդոտ բնաւորութեանը, կ'աշխատէ գլուխը  
դէպի իր լրագիրը իրանից հեռացած, սառած  
գրողներին և, օրինաւոր կերպով առաջ տանե-  
լով գործը, կը բարձրացնէ Մշակ, հասցնէ այն  
հետաքրքրութեանը, այն արժանաւորութեանը,  
ինչպէս որ գոնէ առաջ ունէր այդ լրագիրը:  
Բայց ոչ, և ընդհակառակը . . . Գ. Արծրու-  
նին չը կարողացաւ կամ չը կամեցաւ այդպէս  
տանել բանը: Այժմ՝ նորա լրագիրը՝ հեռեւարար  
և խմբագրութիւնը (?), պահպանվում է (1) համբակ  
— տղաների ջանքով՝ համբակներ, որոնք հա-  
զիւ կարող են կապել իրարու հետ երկու, երեք  
« ախաղասութիւն և արտայայտել մի որ և է



հասարակ միտք: Գիմնագլխայի ու սէմինարիայի ստորին դասաւանների աշակերտները շարադրում են Մշակի համար թէ առաջնորդող (ինչպէս չէ) ու թէ ամեն տեսակ յօդուած և զարմանալի չէ, որ այդ գրուածները չափից դուրս անմիտ, անմարս ու տղայական են երևում: Բայց աւելի զարմանալին այն է մանաւանդ, որ հէնց պ. խմբագրի յօդուածներն էլ այդ ընդհանուր հիանալի կանոններից չեն խոտորվում . . . Գեղեցիկ բան է ի հարկ է, երբ պ. Արծրունին այնքան բարութիւն ունէ, որ՝ այդպիսի ընդարձակ տեղ շնորհելով իր լրագրի մէջ այդ տեսակ երիտասարդութեանը, կարողանում է բարձրացնել դրան մինչև իր սեպհական զարգացման մակերևոյթը: Բայց ցաւալի է տեսնել, երբ մարդ ներկայ է գտնվում բոլորովին հակառակ երևոյթին . . .

Ընթերցողը, կարծեմ առանց իմ ասելու էլ, գիտէ, թէ ինչ ոյժ, ինչ պարունակութիւն ունեն Մշակի յօդուածները, մանաւանդ առաջնորդող յօդուածները՝ գրած թէկուզ հէնց պ. Արծրունու ձեռքով: Մեծամիտ ու փքուած վերնազիրներ կրելով ինչպէս Վանանց Հարց, Արևելեան Հարց» և այլն, մի և նոյն ժամանակ ծիծաղելի



են երևում ընթերցողին: Այլ մեծամտութիւնը այն բանով աւելի ծիծաղաշարժ է թվում, որ ամբողջ առաջնորդող յօդուածը՝ պարունակելով իր մէջ սովորաբար հինգ կամ վեց նախադասութիւն, տպուած է լինում ամենախոշոր տառերով: Չարժէ խօսել համբակ — տղաների շարագրած յօդուածների մասին, որոնք ի հարկ է ստոր են ամեն տեսակ կրիտիկայից: Այս հիանալի գրուածները, ինչպէս երևում է, այն աստիճան նպաստել են պ. Արծրունու ամենօրեայ լրագրի յաջողութեանը, որ խմբագիրը ստիպուած «պրէմիաներ» է նշանակում (ընթերցողներին անբարոյականացնող միջոց), որպէս զի կարելի լինի աւելի բաժանորդներ որսալ:

Աւելորդ եմ համարում խօսել արևելեան քաղաքականութեանը վերաբերեալ Մշակ սխալ ու անտակտ յօդուածների մասին\*, որոնց համար իրաւամբ յանդիմանեցին նորան տեղա-

---

\* Այդ յօդուածների պարունակութիւնը մեծ մասամբ միայն դատարկ հայհոյանքներ էին: Օրինակ կարող են լինել պ. Արծրունու խօսքերը՝ «եղիօտ, կապելու գիժ» (տես «Մշակ» № 6 ± 1877 տ.), ինչպէս որ նա անուանում էր Միդհատ փաշային:



կան լրագիրները և որոնցով պ. Արծրունու օրգանը՝ չափազանց ջերմեռանդութիւն ցոյց տալով, կարծես դիտմամբ ցանկանում էր ինքնակոչ կիսապաշտօնական լրագրի դեր խաղալ և նման վել „plus royaliste que le roy“ կոչուածին: — Ապրտամբութիւն քարոզելով տաճկական Հայաստանի հայերին (թէպէտ երբեմն ասում էլ էր, որ Հայաստանում հայ չը կայ) բոլորովին մոռանում էր, չը գիտէր, թէ արդեօք հաճելի՞ կը լինի այդ բանը այն կառավարութեանը, որին ինքը իբր թէ ծառայում է, համաձայն կը լինի արդեօք այդպիսի երևոյթը այն տէրութեան հայեացքների հետ: Թիւրքիայի հայերը արդեօք իրաւ մի տէրութենից միայն պիտի սպասեն իրանց փրկութիւնը, թէ այդ մի ցնորք է, երևակայութիւն է և այլն, և այլն — այսպիսի հիանալի, հրաշալի քաղաքականութիւն:

Բայց թողնենք այս բոլորը, զանք և տեսնենք, թէ ինչ նոր փոփոխութիւն գործեց պ. Արծրունին հայ լրագրութեան մէջ, երբ՝ ամեն օր կամենալով հրատարակել իր Մշակ լրագիրը, ուրիշ բաների հետ գրեց և՛ հետևեալ խօսքերը՝

„ . . . Ինչ որ վերաբերում է Մշակի ուղղուածութեանը, նա նոյնը կը մնայ իր հրատարակման



„եօթերորդ տարին, ինչ որ էլ վեց տարի շա-  
„րունակ : Մինք հետեցինք միշտ Էռն ժողո-  
„ւրդական ուղղութեանը (?), միշտ աչքի առած  
„ունեինք հայոց ժողովրդի շահերը (!) և նորա  
„ընդհանուր հարգելոյն տնտեսական, բարոյական և  
„մասաւոր զարգացումը . . . . .

„, իսկ այդ տեսակ ուղղութիւնը մեզ յա-  
„ջողուեցաւ և կարող է յաջողվել միմիայն ժո-  
„ղովրդի մարդիկներին (?) աշխատակցութեամբ \*  
„

„Սոյնը կ'անենք և այսուհետև : Նոր վար-  
„դապետութիւնը (!), նոր մտքերը կարելի է  
„ըմբռնել տալ նոր մարդիկներին, թարմ ուղեղ-  
„ներին (գիտե՛մ) և նրանց միջնորդութեամբ  
„քարուղել այն մտքերը ժողովրդին :

---

\* Նկատեցէք, խնդրեմ, որ պ. Արծրունին ուզում է  
ասել, թէ իր լրագրի աշխատակիցները հասարակ մարդիկ  
պիտի լինեն՝ այսինքն ոչինչ չը հասկացողներ : Այլապէս  
անհասկանալի են այդ խօսքերը : Ի՞նչ է նշանակում ժողո-  
վրդական մարդ : Մի՞թէ ուսում առած, բարձր գիտութիւն  
ստացած, կրթուած մարդկանց մէջ ժողովրդական մարդիկ չը  
կան : Ինչպէս երեսում է պ. դօրտորի կարծիքով՝ չը պէտք է  
լինեն : Ահա՛ շարունակինք քաղել նորա հետաքրքիր յօդու-  
ածից եւ կը տեսնենք, որ իրաւ ամենեւին չը կան :



„Ի՞նչ նոր մտքերը, կրկնում ենք, կարելի է  
„ըմբռնել սաղ նոր մարդիկներին, նրանց կարելի  
„է յայտնել և քարոզել ժողովրդի հարդիւնների  
„չնչորանների \* միջնորդութեամբ (սեսմբ) :

„Արիտասարդութիւնը, \*\* որ յայտնի ու  
„սում է առել, որ ամեն մի մտքի, ամեն մի գա-  
„ղափարի վրայ ունէ արդէն կազմակերպուած  
„պաշտօնական գիտնական հայեացքներ, նա  
„դժուարութեամբ է ընտելանում նոր, ինքնու-  
„րոյն մտքերի քարոզութեանը \*\*\* . . .

---

\* Ճաւալի ակնարկութիւն առաքեալների վրայ :

\*\* Տեսէք, խնդրեմ, որ պ. Արծրունին սյուտեղ խօսում է  
զարգացած, ուսուս առած բոլոր հայ երիտասարդութեան  
վրայ եւ ոչ թէ այս ինչ կամ այն ինչ կուսակցութեան, խմբի  
կամ հասարակական յայտնի դործողների մասին, որ ի հարկ  
է ուրիշ բան կը լինէր :

\*\*\* Մենք զարմանում ենք եւ մի եւ նոյն ժամանակ ծի-  
ծաղում, թէ ինչ պատճառով պ. Արծրունին, „յայտնի ու-  
սում առած“ ամբողջ հայ երիտասարդութեանը առանց բա-  
ցառութեան յատկացում է „պաշտօնական գիտնական հայեաց-  
քները“ : Որքան մեզ յայտնի է պաշտօնական գիտութիւնը  
կամ պաշտօնական գիտնական հայեացքները յատուկ են կը-  
րօնին, վարդապետութեանը (չոնցէ այնպիսի վարդապետու-  
թեանը, որպիսին քարոզում է „Մշակի“ խմբադիրը), մի ոյ



„Փարիսեցիներին դժուար է ընդունել առ  
„նոր, գուցէ դեռ անտաշ, բայց կենդանի, կեն-  
„սական մտքերը: Հին ձևերի մէջ դժուար է  
„ձուլել նոր ձևերը . . .

„Մենք մեր գործունէութեան մէջ միշտ  
„կանենել ենք և կը կանգնենք (նստեցէ՛ք խնդ-  
„րեմ) ժողովրդական հողի վրայ, կը հիմնուենք  
„ժողովրդական տարրի վրայ, ուրեմն մեր գործը  
„(այսինքն լրագիրը) առաջ տանելու համար

---

եւ է պետական, քաղաքական կամ կրօնական չափից դուրս  
խիստ կազմակերպուած հիմնարկութեանը եւ ոչ թէ ուսում  
առած բոլոր հայ երիտասարդներին: Մենք կարծում ենք, որ  
այդ երիտասարդներից մէկն է եւ ինքը պ. Արծրունին, որ  
այնպիսի նոր մտքեր, այնպիսի նոր դադափարներ է քարո-  
զում եւ այնպիսի նոր, ինքնուրոյն վարդապետութիւն է աւան-  
դում, որոնց մասին տեղեկութիւն չունենալով զարդացած հայ  
երիտասարդները՝ մի եւ նոյն ժամանակ չեն կարող „ընտե-  
լանալ“ դրանց հետ: Ա. յղպիսի խօսքեր լսելուց յետոյ մարդս,  
թէկուզ վերացական (abstraite) փիլիսոփայութեան համա-  
կից չը լինի, կամայ ակամայ կարող է հարցնել՝ „չը լինի՞ թէ  
աշխարհիս երեսին կան էակներ, որոնք հասարակ մահլիճնա-  
ցուններին անյայտ ճանապարհով հաղորդակցութիւն ունեն  
վե-  
րին աշխարհի հետ (transcendance) եւ ներշնչուած են նո-  
րա զօրութեամբ: Սակայն շարունակենք . . .



„մեզ անհրաժեշտ հարկաւոր են թարմ, ժողո-  
ւրդդական մարդիկ, \* ժողովրդից դուրս եկած  
մարդիկ և ոչ թէ փարիսեցիներ . . . \*\*

Ընթերցող, անշուշտ դուք արդէն հասկա-  
ցաք, որ պ. Արծրունին կարծես թէ առաջուց  
պաշտպանում է իր լրագրի աշխատակից համբալի  
— տղաներին: Ես ոչինչ չունեմ այդ բանի դէմ  
ասելու, այլ աւելի լաւ կ'անեմ առաջ բերել այստեղ  
դարձեալ նոյն իսկ գիտնական դօքտորի խօսքե-  
րը, որոնց ինքը երևի արդէն մոռացել է: Ահա՛  
թէ ինչ էր պահանջում պ. Արծրունին ձեզ հար-  
սանից առաջ այն մարդուց, որ կը ցանկանար դուրս  
գալ լրագրութեան ասպարէզ՝

„Ինչ յատկութիւններ պէտք է ունեցած  
լրագրութեան ասպարէզը մտնելու համար:  
Առաջին և գլխաւոր յատկութիւնը պիտի լինի  
առաջադիմութիւն . . .

„Վե՛ն մարդ թէ գիտնական և թէ ար-  
հեստաւոր թէ զինուորական և թէ ուրիշ պի-

---

\* Պէտք է ուրախացնեմ պ. Արծրունուն, որ այդ „ժո-  
ղովրդական մարդիկը, Թարմ ուղեղները“ նորերումս էլ երե-  
ւեցան իրանց „Յուշոյ մտքերով“ ու „Ճայներով“ . . .

\*\* Տես „Մշակ“ № 95, 1877 տարի:



„տի անգողար արաջ գնայ, կատարելագործուի:  
„— Նատ լաւ. բայց առաջադիմութեանը դի-  
„մելուց առաջ նա մէկ հիմք էլ պիտի ունենայ,  
„դիտի նախ և առաջ մէկ բան էլ մասնաւորա-  
„պէս գիտենայ. Թերձակը պիտի իմանայ շորեր  
„կարել, որ կարողանայ իր արհեստի մէջ առա-  
„ջադիմութիւն անել:  
„Իսկ մենք՝ հայերս շատ անգամ ապացու-  
„ցեցինք, որ այդ հիմնական մտքի հետ էլ հա-  
„մաձայն չենք, որովհետեւ շատ բնական ենք  
„գտնում, որ մարդիկ քաղաքական և հասարա-  
„կական գիտութեան ոչ մի ծիւղ մասնաւորա-  
„պէս սւսումնասիրած չը լինելով՝ սկսէին օրա-  
„գիր կամ լրագիր հրատարակել . . .  
„Եթէ արհեստաւորը մի բան սովորած  
„պիտի լինի, որ իր արհեստով պարպպէ, իրա-  
„ւարանը իրաւարանութիւն պիտի ուսումնասի-  
„րած լինի, հոգևորականը — աստուածաբա-  
„նութիւն ուրեմն ի՞նչ իրաւունքով քաղաքա-  
„կան և հասարակական գիտութիւններից բոլո-  
„րովին զուրկ անձինքը յանդնում են ասպա-  
„րէզ գուրս գալ . . . \*  

---

\* Տես „Մշակ“ № 39, 1872 տարուայ:



Անշառ ու անկողմնապահ ընթերցողն եմ  
թողնում հաշիւ տեսնել դօքտօր Արծրու-  
նու լօգիկայի հետ, որ այնքան պարզ է, որքան  
ցեկեկի լոյսը: Բայց ծիծաղելն ու միանգամայն  
անհամ բանն այն է, որ այն բոլոր բարոյները,  
այն բոլոր բարձր աղաղակները ժողովրդի ուղղու-  
թեան, նոր վարդապետութեան և շնոր մտքերի  
մասին, եթէ վերացական անուն չը տալով, ընդու-  
նենք այնպէս, ինչպէս որ հասկացվում են Սերո-  
պայում, ուրիշ բան չեն լինի, եթէ ոչ դատարկ,  
աննշան, փքուած խօսքեր: Համանման բան ոչ  
եղել է և ոչ կայ Մշակում: Եւ եթէ մէկը ասպա-  
րէզ դուրս գայ և պարզաբանէ, բացատրէ ու  
պաշտպանելով առաջ տանէ ժողովրդական կեան-  
քի ձոր թէօրիաները, նոր վարդապետութիւ-  
նը (ինչպէս որ, ասում եմ, Սերոպայումն են  
հասկանում), այն ժամանակ ինքը պ. Արծրու-  
նին, հարստահարուած ժողովրդին այդքան սի-  
րող դօքտօրը, առաջին ու գլխաւոր հակառա-  
կորդներից մէկը լինելով ամեն կերպով կաշ-  
խատէ հարուածել, ոչնչացնել և հանգցնել  
հասարակական — տնտեսական այդ երևոյթը,  
շատերի համար այդ վտանգաւոր կրակը . . .  
Բաւական է կարծեմ, ինչ որ խօսեցայ Մը-



շուի մասին: Անկարելի է առաջ բերել այստեղ նորա խմբագրի բոլոր հակասութիւններն ու անհետևողութիւնները \*\*, որոնք անչափ շատ են: Իսկ այն մարդը, Տէր Աստուած, որ ուզում էր զարթեցնել հասարակական կարծիքը (տես Մշակ № 47, 1875 տ.) ուշադրութիւն չէ դարձնում ոչ ոքի վրայ և շարունակում է իր լրագրի գործը այսպէս լաւ, ինչպէս որ ներկայացրինք ընթերցողին: Ել չեմ ուզում խօսել Մշակի այն էջերի մասին, որոնք լցուած են պ. խմբագրի ազդու գործունէութեան հռչամամբ կամ իր անձին ու իր կղբօյր վերաբերեալ բիւլլետէններով: Ճանապարհորդութեան, ուղևորութեան, մի բանի մտադրութեան, գործի յաջողութեան մասին և այլն: Այս բանում պ. Արծրունին հետևում է հայր Խորէն Ատէփանէի օրինակին և նորա հայեցանքին: Բայց հայր սուրբը

---

\*\* Կար ժամանակ, երբ պ. Արծրունին՝ նկատելով այդ պակասութիւնը ուրիշների մէջ, գաստիկ յանդիմանում էր (,Մշակ՝ № 26, 1875 տ.) նւ յարձակուելով պախարակում էր մանաւանդ անձեանւարար վարվող ,տիրացու՝ զըրոյններին, որոնց մի նոր անակը ինքն է առաջ բերել և հետզհետէ առաջ բերում հայ դրակախութեան մէջ . . .



դոնէ ձեռք չէ վերցնում լատինական այն հա-  
մետ դէվիզնց, թէ „Quod possum facio fa-  
ciant meliora potentes“, այսինքն — „ինչ  
կարող եմ կատարում եմ, թող կատարէ ով ա-  
ւելի լաւ կարող է“ : Եթէ պ. Արծրունին կամե-  
նար իր լրագրի ճակատը զարդարել մի որ և է  
վերտառութեամբ՝ անշուշտ արժանապատիւ հօր  
ամսագրի դէվիզը փոխ առնելով, հետեւեալ կեր-  
պով կը խմբագրէր՝ „Quod facio meliora  
est“, այսինքն թէ՛ „ինչ գործում եմ աւելի  
լաւ է“ :

Ի զուր կը լինէր մանրամասնութեան մէջ  
մտնել Մեղու Հայաստանի լրագրի մասին, որին, չը  
գիտեմ, ով անուանեց Մշակի աստառ, իսկ ես  
կ'աւելացնեմ՝ ակամայ նմանող ևս : Մեղուն ներ-  
կայացրել է և ներկայացնում է գրեթէ այն բո-  
լոր գեղեցկութիւններն ու պակասութիւնները,  
որոնք յատուկ են Մշակին : Բայց ինչ կուզէ լինի,  
Մեղուն չը կարողացաւ մրցել Մշակի հետ : Վերջին  
ժամանակները Մեղուն, թէև յայտնում էր իր քա-  
ղաքական հայեացքները, բայց բաւական զգոյշ էր  
և այս բանում Մշակի աւելի հեռատես ու խելօք :  
Այս էլ պէտք է աւելացնել, որ Մեղուն երբէք  
այնպիսի մեծ իրաւունքներ չէ յայտնել իր քր-



սան տարուայ թոյլ գործունէութեան մասին, ինչպէս որ անում է վեց տարեկան Մշակ:

Մի անգամ մի անյայտ կրիտիկոս, կարծես հանաքով, այդ երկու լրագրների մասին խօսելով, այն միտքը յայտնեց, իբր թէ դոքա հետեւել են և հետեւում են երկու տարբեր մեթոդներին: Նորա կարծիքով Մշակն մեթոդը պէզուկտիւս մեթոդ է, իսկ Մեղուինը — փնդուկտիւս: Պ. Արծրունին, լսելով այս բանը՝ մտածմունքի մէջ ընկաւ և մի փոքր սպասելուց յետոյ պատասխանեց ներեցէք, պարոն կրիտիկոս, ինդուկտիւս մեթոդը աւելի ինձ է պատկանում, որովհետեւ ես ուսում եմ առել Գերմանիայում, իսկ դէդուկտիւսը Մեղուին: Իսկ ես իմ կողմից կ'ասեմ, որ դրանցից ոչ մէկի գլխովն էլ չէ անցկացել ոչ ինդուկցիայ և ոչ դէդուկցիայ . . . Բաւական չէ այս. մինչև անգամ, կարելի է ասել, որ ոչինչ մեթոդ չեն էլ ունեցել դրանք իրանց գործունէութեան մէջ . . .

Այսքանը կարծեմ այս անգամ բաւական է Մեղուի և Մշակի մասին: Դոքա դեռ հիմայ էլ են հրատարակվում և երևի առիթները մեզ չեն պակասի դոցա վրայ դարձեալ խօսելու: Այս անգամ դոցա մասին ասածներս վերջացնելով



ես խորհուրդ կը տայի պատրաստուած, ընդու-  
նակ, գործը հասկացող հայ երիտասարդներին  
միանալ ու ձեռք զարկել մի նոր լրագրի հրա-  
տարակութեանը, որ իրաւամբ համապատաս-  
խանէր հայ ժողովրդի բուն, կենսական պահանջ-  
ներին և վերականգնէր, բարձրացնէր մեր հայոց  
մամուլի կտորած անունն ու անկեալ նշանա-  
կութիւնը: Ձը նայելով Մշակն ու Մեշուի գոյու-  
թեանը, այդ նոր գործի յաջողութեան մասին  
չէ կարելի կասկածել, որովհետեւ յիշեալ երկու  
լրագիրներն էլ միասին՝ աւելի Մշակը, այլ ևս ոչինչ  
արժէք ու կշիռ չունենալով հայ հասարակութեան  
աչքում, մի և նոյն ժամանակ ոչինչ հաւատ ու  
համակրութիւն չեն էլ վայելում նրանից:

~~~~~

Աի կողմը թողնենք վաղարշապատում  
հրատարակուող արդէն դադարած Դպրոց ման-  
կավարժական ամսագիրը Դայանեան վանքի վա-  
նահայր վահան վարդապետ Բաստամեանի և  
սորա նման ուրիշ պարբերական հրատարակու-  
թիւնները՝ ինչպէս Յէոզոսիայի Դաստիարակը և  
այլն՝ Հայ գրականութեանը անխոնջ հետևող  
բարեկամներինցս մէկը՝ խօսելով այդպիսի հրա-



տարակուժիւնների վրայ, ուրիշ բաների հետ  
Դպրոցի մասին ասաց և հետևեալը՝ «մենք սպա-  
սում ենք, որ Դպրոցի խմբագիր — հայրը՝  
Մոսկվայի համալսարանի իրաւաբանական ֆա-  
կուլտետի կանդիդատը — վերադառնալով Փա-  
րիզից, ուր ուսումնասիրում է այժմ կանոնիկա-  
կան իրաւունք, գայ և պատմէ մեզ, թէ ինչ էր  
իր մասնագիտական, մանկավարժական ամառ-  
գիրը, ինչ նշանակութիւն ունէր և ինչպիսի  
յօդուածներ էր պարունակում իր մէջ: Այս  
խօսքերը կարծեմ բաւականին ցոյց են տալիս  
Դպրոց մանկավարժական ամառգրի բնաւորու-  
թիւնն ու նորա երեք տարուայ զօրժունեու-  
թեան ազդեցութիւնը — մի ամառգիր, որ  
բաղկացած լինելով երկու բաժանմունքներից՝  
ուսուցիչների ու աշակերտների համար, հազիւ  
կարդացվում էր իր անհետաքրքիր պարունակու-  
թեան պատճառով:»

Վերջացնելով մեր յօդուածը հայոց մու-  
մուլի մասին մի երկու խօսք էլ ասենք պ. Ար-  
զար Յովհաննիսեանի Փոքր եռամսեայ հանդէսի  
վրայ:»

Ահա արդէն երկու տարի է, որ հրատարակ-  
վում է Փոքր, ազգային և գրականական հանդէսը:



Պ. Արզար Յովհաննիսեանը մի այնպիսի համեստ վերնագիր է տուել իր ամսագրին, որ եթէ ցանկալի յաջողութիւնն էլ չ'ունենայ, խմբագիրը կ'արդարանայ ասելով, թէ այդ դեռ իր առաջին փորձն էր: Բայց ինչո՞ւ նորից փորձեր անել, երբ կարելի էր օգուտ քաղել մեր երեսուն տարուայ մամուլի արդէն արած սխալներից ու փորձերից:

Մենք գիտենալով մեր մամուլի անցեալը, մենք ծանօթ լինելով մեր ընթերցող հայ հասարակութեան էական պահանջներին, ոչ „ТИФЛ. ВѢСТН.-ի“ կրիտիկոսի նման յափշտակուելով կ'ասենք, թէ Փոքը հայերի համար արդէն մի այնպիսի օրգան է, ինչպէս «Revue des deux Mondes» Քրանսիացիների ու „ВѢСТНИКЪ ЕВРОПЫ“ ռուսների համար և ոչ էլ պ. Արծրունտ պէս յուսահատուելով՝ կը յայտնենք այն միտքը, թէ Փոքը ոչ հանդէս է (revue) և ոչ մինչև անգամ ընթերցանութեան «հաւաքածու»: Չափազանցութիւնները առհասարակ լաւ չեն: Ես կարծում եմ, որ պ. Յովհաննիսեանը մինչև այժմ փորձում է հայ ընթերցողներին հարկաւոր, անհրաժեշտ այդ երկու բաժինները միասին յարմարեցնելով իրագործել: Ուզում եմ ա-



սել, որ Գորշի թէ ընթերցանութեան հաւաքածու և թէ հասարակական հարցերի մասին տեսութիւն անող հրատարակութիւն կամենում է լինել: Նորա լայն, մեծ պրօգրամը աշխարհ, ցոյց են տալիս մեզ այդ նպատակայարմար ցանկութիւնը . . .

Ուշագրութեամբ աչքի անցնելով Փորշի մինչև այսօր լոյս տեսած համարները, մենք նկատում ենք, որ իւրաքանչիւր գրքի համարեան կէտը նուիրուած է լինում նոր — կասիկական հեղինակութիւնների թարգմանութեանը՝ ինչպէս Շիլլերի, Լէսինգի և այլն: Պէտք է ասել, որ այդ ոտանաւոր թարգմանութիւնները այնչաճող են: Ո՞վ գիտէ, կարելի է բանաստեղծ — թարգմանիչը այնքան ծանօթ չէ Շիլլերի անմահ գրուածների ոգուն: — Բաւական չէ միայն թարգմանել և ազատ յանգերը իրարու հետ շարելով ոտանաւոր դարձնել, այլ և պէտք է, հարկաւոր է հաղորդել ընթերցողին այն անմահ ոգին, այն գեղեցիկ ոճը ու մինչև անդամ ամբողջին հասկանալի այն խորին զգացմունքը, որ միշտ յատուկ է գերմանական այս ժողովրդական երևելի հեղինակի շարագրութիւններին: Այն ինչ մենք կարգալով Շիլլերին Փորշի



մէջ, չենք սլանում ու անդափովում անմահ  
պօէտի գաղափարների ու զգացմունքների աշխար-  
հը և չենք ստանում այն ազդու տպաւորութիւնը,  
որ սովորաբար ունենում է ամեն մի կենդանի  
էակ այդ նշանաւոր հեղինակին կարգալիս: Ինչ  
և իցէ, այսպէս խօսելով՝ մի կողմից ի հարկ է  
մենք չենք կարող շնորհակալ չը լինել: որ եւ-  
րոպական համանման մեծ հեղինակները թարգ-  
մանուելով կարողանում են մասամբ զարդարել մեր  
նոր գրականութեան անշուք ճանապարհը, իսկ  
միւս կողմից անկարելի է, որ մոռանանք մեր նոր  
գրականական լեզուի դեռահաս զարգացումն ու  
մի և նոյն ժամանակ պ. Բարխուդարեանի  
ծանր ոճը:

Ինչ որ վերաբերում է թարգմանական միւս  
յօդուածներին Եւրոպայի ներկայ գրականութեանից  
վերցրած՝ ինչպէս Էմիլ Զօլայի, Ալֆօնս Դօդէի,  
Ժօրժ Սանդի և ուրիշ զանազան հեղինակների  
հետաքրքիր շարադրութիւններից, մեծ բաւա-  
կանութեամբ կարդացվում են, մանաւանդ որ  
այս թարգմանութիւնները ոճի և լեզուի կող-  
մից այնպէս ծանր ու անյարթ չեն:  
Չեմ կարող չը յիշել նոյնպէս հայ դերասան  
պ. Գէորգ Զմիկեանի Ռատրոնական յիշողու-



Թիւններին նման կենդանի, աշխոյժ գրուածները, ( հազուադիւատ Փոքշէ մէջ ) որոնք՝ չը նայելով իրանց թէ տպագրական, թէ քերականական և թէ ուրիշ սխալներին, միշտ առանձին հետաքրքրութեամբ կարդացվել են և կը կարդացվեն : Այստեղ պէտք է աւելացնել նոյնպէս ոչ պակաս հետաքրքրութիւն շարժող պ. Գամառ — Քաթիպայի մի քանի յաջողուած նոր ոտանաւորները և պ. Քրչի ամատենախօսութիւնները : Մնացած յօդուածները անյաջող ու գրեթէ աննպատակ Վոյպիլացիաներս են և վերաբերում են մեծ մասամբ Հայաստան աշխարհի անցեալ, հին պատմական կեանքին :

Փոքշէ ընթերցողը՝ կարդալով կամ թերթելով այդպիսի յօդուածները կամ ուրիշ տեսակ ինչպէս Վանապարհորդութիւն Հայաստանի ու Պարսկաստանի մէջ՝ ու մի որ և է երկար, չափից դուրս մանրամասը ազգային վիպասանութիւնս, կը ցանկանար նոյնպէս տեսնել և ուրախութեամբ կարդալ մանաւանդ տեսութիւններ ժամանակակից հասարակական հարցերին վերաբերեալ : Բայց ոչ և աւաղ—Փոքշէ ընդհանրապէս քիչ է զբաղվում այդ բանով : Այս է գլխաւոր



պատճառը, որ պ. Յովհաննիսեանի ամսագիրը՝  
չը նայելով իր արտաքին գեղեցկութեանն ու  
հաստութեանը (3) տպագր. թերթից էլ աւելի),  
չէ խօսեցնում իր մասին, շարժմունք չէ գոր-  
ծում: Հրատարակվելով երեք ամիսը մի անգամ  
ոչ այնպիսի ապաւորութիւն և ոչ էլ այնպիսի  
ներգործութիւն է ունենում ընթերցողի վրայ,  
ինչպէս որ իր ժամանակին ունենում էր Հիստորի-  
ոգիան: Սորա ընթերցողները անշուշտ յիշում կը  
լինեն թէ ինչպէս ամեն մարդ անհամբերու-  
թեամբ ու հետաքրքրութեամբ սպասում էր  
Հիստորիոգիան իւրաքանչիւր համարի երևալուն:  
Ոչինչ համանման երևոյթ չէ նշմարվում Փոքի  
համարի հրատարակման միջոցին: Զր խօսելով  
արդէն այն բանի մասին, որ չափից դուրս եր-  
կաք ժամանակամիջոց է անցնում, մինչև որ  
կերևայ հանդէսի մի գիրքը, յօդուածներն էլ,  
ինքնուրոյն, սեպհական շարադրութիւնները,  
չունեն այն պարունակութիւնը, այն ոյժը, որով  
գերազանցում էին Նալբադեանցի և Նալարեան-  
ցի յօդուածներն ու գրուածները . . .

Փոխանակ ընդգրկող դարու հայոց մտա-  
ւոր շարժմանս վրայ գրելու, որի մասին շատ  
անգամ է խօսվել թէ մեր և թէ օտար գրա-



կանութեան մէջ, աւելի հետաքրքիր կը լինէր  
ցոյց տալ, թէ ինչ է պատահել հայ գրականու-  
թեան մէջ այս վերջին երկու դարերում. . . .  
Բացի սրանից պ. խմբագիրը, որպէս դժբախտ  
քաղաքա — տնտեսական գիտութեան, անշուշտ  
առանձին ուշադրութիւն պիտի դարձնէ մեր  
խեղճ, հարստահարուած ժողովրդի տնտեսական  
վիճակի նկարագրութեանը, պիտի աշխատէ ցոյց  
տալ նորա ցաւալի դրութեան պատճառներն ու  
բարուղբելու միջոցները, մի խօսքով պիտի հե-  
տեւէ հասարակութեան ժամանակակից կեան-  
քին: Ահա՛ այդ ժամանակ Փոքր կը լինի թէ  
«հանդէս» (revue) հասարակական հարցերի և թէ  
ընթերցանութեան համար «հաւաքածու» գուցէ  
համապատասխան ТИФЛ. ВѢСТН. ասած հե-  
տեւեալ խօսքերին՝ «մի հրատարակութիւն, որ  
«ճառայէր որպէս կեդրոն հասարակական հար-  
ցեր մշակելուն, որ ներփակէր իր մէջ ճարտա-  
ւարակական գործի արդիւնքներն ու գիտնա-  
կան, կրիտիկական մտքի աշխատանքները՝  
այսինքն մի հրատարակութիւն նման իր բո-  
վանդակութեամբ ուսուց ու արտասահմանեան



„մամուլի գրականական — քաղաքական օր-  
„գաններին“\*

Եւայց, ինչպէս վերև էլ ասեցի, դեռ միայն  
երկու տարի է անցել, որ Փոքր գոյութիւն  
ունէ: Երևի կարելի է յուսալ, որ նորա խմբա-  
գիրը՝ ինչպէս որ իրագործել է չը լուսած կամ,  
աւելի լաւ է ասել, չ'ընդունուած նորութիւն հայ  
լրագրութեան մէջ. — աշխատակիցների վճա-  
րումը\*\* — որով ապահովացնում է իրան ամեն  
տեսակ համբակ — տղաներից ու խմաստակնե-  
րից, այնպէս էլ կ'աշխատէ յաջողեցնել, որ իր  
Փոքր գրականական ծանր, կշիռ ունեցող օրգան  
հանդիսանայ . . . Այդ անկարելի բան չէ,  
եթէ հաւատանք դարձեալ նոյն ԵՊՓԱ. ԵՅԵՏԻ.  
լրագրի և՛ հետևեալ խօսքերին՝ „գրականական  
„ոյժերն ու միջոցները չափուած և ամնագրի  
„գոյութիւնն ու կատարելագործուելը ապահո-

---

\* Տե՛ս ԵՊՓԱ. ԵՅԵՏԻ. № 215, 1876 տարի:

\*\* Թէև «Հիւսիսափայլը», «Արուսկը» նոյնպէս եւ ուրիշ  
հրատարակութիւնները ունեցան ցանկութիւն վճարելու իրանց  
աշխատակիցներին, բայց չը կարողացան, որովհետև ոչ  
բաժանորդներից ստացուեցաւ այնքան գումար եւ ոչ էլ հրա-  
տարակողների գրպաններն էին հրաման տալիս:



„վաճ են“ : Այս անգամ այսքան միայն Փորջի  
„ընդհանուր ուղղութեան ու բովանդակութեան  
մասին : Այդ մեր յիշած պակասութիւնները  
„ուղղելուց յետոյ միայն՝ կարող ենք ասել, թէ  
„փորձառութիւնը յաջողուեց“ :

Այլ խօսք էլ և ես բողբոլին վերջացրի :  
Ներկայացնելով ընթերցողին այս կարճ ու գրե-  
թէ միակերպ նկարագիրը ռուսահայատակ հա-  
յերի երեսուն տարուց էլ աւելի գոյութիւն ու-  
նեցող մամուլի մասին, ես արդէն առիթ ունե-  
ցայ իմ յօդուածի ընթացքում մի քանի ան-  
գամ յայտնել նորա ընդհանուր հասարակական  
նշանակութիւնը և կարողութեան չափ ցոյց  
տալ ու եզրակացնել նորա կատարելու իսկական  
դերը հայ ազգային — ժողովրդական վարձաց-  
ման գործի մէջ : Ընթերցողը այնքան բարի կը  
լինի, որ հիմայ ինքը, առանց նեղութիւն կրե-  
լու, „ad valorem“ (ըստ արժանւոյն) հետեանք  
դուրս կը բերէ իմ բոլոր ասածներից . . .

1878, Յունիս :



Ք. Տ. Պ. Յակոբ Տէր-Յովհաննիսեան թեմական վերատեսչի Մանկավարժական Թերթի մասին ես այստեղ առայժմ ուրիշ ոչինչ չեմ ասի, բացի այն բանից, ինչ որ առանձնապէս գրեցի տեղական ռուս լրագրներից մէկի մէջ : Այնտեղ ես ասում էի՝ «Մենք ստացանք պ. Տէր Յովհաննիսեան իրաւաբան — մանկավարժի մասնագիտական հայ նոր ամսագրի (Մանկավարժ. Թերթ.) առաջին համարը, որ հրատարակվում է ներկայ 1878 տարուայ Յուլիսի 1-ից : Գրքոյկը բաղկացած է 4 տպագրական թերթերից հետեւեալ բովանդակութեամբ՝ 1) «Առաջնորդող յօդուած», այսինքն ուղղում է ասել իսկապէս առաջարան, ուր խմբագրութիւնը՝ յիշելով թէ հայերը ինչպէս պատմական, նոյնպէս և կառավարութենից հաստատուած իրաւունք ունեն ուսումնարաններ ու դպրոցներ հիմնելու, ընդհանուր, յայտնի դատողութիւններ է անում դրանց պահպանելու և բարւոյքելու մասին : Խմբագիրը այստեղ այն էլ է յայտնում, որ իր «Թերթը» նպատակ ունենալով մասնագիտական օրգան լինելու, ցոյց կը տայ այն բոլոր անհրաժեշտ միջոցներն ու հնարները, որոնցով պիտի իրագործուի դպրոցական գործի կարգադրութիւնն ու առաջադի-



մութիւնը և բացի սրանից կաշխատէ առաջ  
նորդ լինել հայ ուսուցիչներին մինչև հայոց  
ուսուցչական մասնաւոր սեմինարիայի հիմնուելը:  
2) «Մանկական ընթերցանութեան գրքեր» փոք-  
րից յօդուած, որտեղ հեղինակը խօսում է,  
թէ ինչպիսի գրքեր պիտի տան մանուկների  
ձեռքը, որպէս զի նպատակայարմար և իրակա-  
նասպէս զարգացնող լինեն: Յօդուածագիրը խօս-  
տանուում է ցոյց տալ ամսագրի միւս համարնե-  
րում արդէն հրատարակած այն հայ գրքերը,  
որոնք իր մատնացոյց արած արժանաւորութիւնը  
ունեն: 3) «Ծրեօբէլի Կենսագրութիւնը», ուր  
հեղինակը (տիկին Ս. Բ.) ուրիշ բաների հետ  
համառօտ պատմում է արդէն յայնի մտքեր  
«մանկական պարտէզների» մասին և խօստանում  
է այդ երկելի մանկավարժի հնարած «երեխա-  
ների խողերի» վրայ խօսել: Ուրջան մենք յի-  
շում ենք, նոյն յօդուածագիրը արդէն մի քանի  
անգամ առիթ է դնեցել մեր պարբերական  
հրատարակութիւնների մէջ նոյն հարցերի մա-  
սին խօսելու: 4) «Մայրենի լեզուի ուսումը» բա-  
ւական երկար յօդուած, որ բռնելով ամսագրի  
տետրակի կէսը, դեռ էլ շարունակվելու է: Այս  
յօդուածի մէջ հեղինակը՝ քննելով ուսուցանելու



զանազան՝ հին, նոր, աննտէտիկ, անալիտիկ և  
ուրիշ մեթոտները, առաջ է բերում նոյնպէս զա-  
նազան կարծիքներ մանաւանդ դերմանական  
մանկավարժների : 5) Զանազան լուրեր և  
այլն :

«Մենք կարծում ենք, որ եթէ գրքոյկի մեծ  
կէտը պէտք է նուիրվի . . . հոգեբանութեան  
վրայ հիմնուած մոնկավարժութեանը վերաբե-  
րեալ դատողութիւններին՝ դատողութիւններ  
(հըմ) : որոնք վաղուց արդէն լցնում են մեր  
ամնագրների ու լրագրների էջերը, գրքոյկի միւս  
կէտը անշուշտ պիտի ներկայացնէ ընթերցողին  
թէ Սերոպայի և թէ մեր դպրոցական գործի  
այժմեան դրութիւնը, պիտի ծանօթացնէ հայոց  
զանազան դպրոցների, այսպէ՛ղբերում ընդունուած  
կարգ ու կանոնների, սուտնք Քեան, պակասու-  
թեան, միջոցների, ուհիմնելու, բողութեան հետ  
և այլն : Այսպիսի հ. և է անո, էական, եթէ  
կուզէք, օրական տեղեկատւութիւնները անհամե-  
մատ աւելի հետաքրքիր ի աւելի օգտակար  
կարող են լինել ընթերցող հայ հասարակու-  
թեան և մեր ուսուցիչների համար, քան թէ  
երկար ու բարակ, ծանրակշիռ դատողութիւն-

Արեան  
Գանիրէ  
Գիտակ  
Ալպոյանեանք  
— Մաքարիա



ներն ու քննութիւնները մանկավարժական մե-  
թոտների մասին . . .

«Ինչ և իցէ, ինչպէս երևում է առաջին  
համարի տպաւորութենից, գրքոյկի քամակին  
տպուած պրօգրամից, կամաւոր աշխատակիցների  
անուններից, խմբագրի խոստմունքներից յոյս  
կայ, որ մեր թեմական վերատեսչի մասնագի-  
տական օրգանը քանի գնայ, այնքան էլ լաւա-  
նայ: Թէև պէտք է աւելացնել, որ համանման  
յոյսերը, ինչպէս տեսաւ իմ ընթերցողը, չ'իրա-  
գործուեցան միւս պարբերական հայ հրատա-  
րակութիւնների համար, որոնք քանի գնացին  
այնքան էլ աւելի ու աւելի ընկան և ընկան» . . .

1878 Յուլիս:

Վ. Ե Ր Ջ

---

Մատենադարան  
Գրադարան  
Մկրտչապետական



Handwritten notes in the top right corner, including the word "Hand" and some illegible characters.

Handwritten text in Armenian script, oriented vertically on the page. The text is dense and appears to be a list or a detailed account of items or events.

1878 թվական

Ք. Գ. Բ.



## Տպագրական սխալներ:

| Երէս.      | Տող. | Սխալ.           | Ուղիշ.         |
|------------|------|-----------------|----------------|
| 4—         | 11   | Սիմօնեանցը.     | Սիմէօնեանցը    |
| 11—6,      | 7    | առաւելութիւնն.  | առաւելութիւնն  |
| 16—        | 4    | ինտէլիգէնցիայի. | ինտէլիգէնցիայի |
| 16—        | 12   | անսպասելի.      | անսպառելի      |
| 20—        | 2    | էջերը.          | էջերը          |
| 10—        | 11   | Արարապի.        | Արարատի        |
| 42—        | 2    | Հասակակու-      | Հասարակու-     |
|            |      | թեանը.          | թեանը          |
| 42—        | 7    | Համաձայուե-     | Համաձայնուե-   |
|            |      | ցէք.            | ցէք            |
| 45—        | 23   | Նազարանցը.      | Նազարեանցը     |
| 42—        | 3    | կասարական,      | Հասարակական    |
| 86—        | 1    | զամանալի.       | զարմանալի      |
| 90, 91—24, | 1    | Հէրկուէսի.      | Հէրկուլէսի     |
| 91—        | 2    | մամնական.       | մարմնական      |
| 118—       | 4    | ցեկեկի.         | ցերեկի         |
| 119—       | 61   | Հոչամամբ.       | Հոչակմամբ      |
| 128—       | 20   | Նալճադեանցի.    | Նալճանդեանցի   |
| 133—       | 5    | փոքրիգ.         | փոքրիկ         |

Հեղինակը խնդրում է, որ իր ընթերցողները միւս աննշան սխալների համար, եթէ միայն էլի կան, ներողամիտ լինեն:






Handwritten title at the top of the page, possibly a list or index.

|     |     |     |
|-----|-----|-----|
| 1   | ... | ... |
| 2   | ... | ... |
| 3   | ... | ... |
| 4   | ... | ... |
| 5   | ... | ... |
| 6   | ... | ... |
| 7   | ... | ... |
| 8   | ... | ... |
| 9   | ... | ... |
| 10  | ... | ... |
| 11  | ... | ... |
| 12  | ... | ... |
| 13  | ... | ... |
| 14  | ... | ... |
| 15  | ... | ... |
| 16  | ... | ... |
| 17  | ... | ... |
| 18  | ... | ... |
| 19  | ... | ... |
| 20  | ... | ... |
| 21  | ... | ... |
| 22  | ... | ... |
| 23  | ... | ... |
| 24  | ... | ... |
| 25  | ... | ... |
| 26  | ... | ... |
| 27  | ... | ... |
| 28  | ... | ... |
| 29  | ... | ... |
| 30  | ... | ... |
| 31  | ... | ... |
| 32  | ... | ... |
| 33  | ... | ... |
| 34  | ... | ... |
| 35  | ... | ... |
| 36  | ... | ... |
| 37  | ... | ... |
| 38  | ... | ... |
| 39  | ... | ... |
| 40  | ... | ... |
| 41  | ... | ... |
| 42  | ... | ... |
| 43  | ... | ... |
| 44  | ... | ... |
| 45  | ... | ... |
| 46  | ... | ... |
| 47  | ... | ... |
| 48  | ... | ... |
| 49  | ... | ... |
| 50  | ... | ... |
| 51  | ... | ... |
| 52  | ... | ... |
| 53  | ... | ... |
| 54  | ... | ... |
| 55  | ... | ... |
| 56  | ... | ... |
| 57  | ... | ... |
| 58  | ... | ... |
| 59  | ... | ... |
| 60  | ... | ... |
| 61  | ... | ... |
| 62  | ... | ... |
| 63  | ... | ... |
| 64  | ... | ... |
| 65  | ... | ... |
| 66  | ... | ... |
| 67  | ... | ... |
| 68  | ... | ... |
| 69  | ... | ... |
| 70  | ... | ... |
| 71  | ... | ... |
| 72  | ... | ... |
| 73  | ... | ... |
| 74  | ... | ... |
| 75  | ... | ... |
| 76  | ... | ... |
| 77  | ... | ... |
| 78  | ... | ... |
| 79  | ... | ... |
| 80  | ... | ... |
| 81  | ... | ... |
| 82  | ... | ... |
| 83  | ... | ... |
| 84  | ... | ... |
| 85  | ... | ... |
| 86  | ... | ... |
| 87  | ... | ... |
| 88  | ... | ... |
| 89  | ... | ... |
| 90  | ... | ... |
| 91  | ... | ... |
| 92  | ... | ... |
| 93  | ... | ... |
| 94  | ... | ... |
| 95  | ... | ... |
| 96  | ... | ... |
| 97  | ... | ... |
| 98  | ... | ... |
| 99  | ... | ... |
| 100 | ... | ... |

Handwritten text or notes at the bottom of the page, possibly a signature or date.











ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0533581



U. 1. 1. 1.

93